



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

№ 35 -Լ

«26» դեկտեմբերի 2025 թ.

**ՈՋ ՀԱՅԱՍՏԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԵՆԻ (ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ) ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Լեզվի կոմիտեի կանոնադրության 14-րդ կետի 9-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 1902-Լ որոշման 56.1 կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Ոչ հայախոսների համար հայերենի (արևելահայերենի) իմացության մակարդակների պետական չափորոշիչները»՝ ըստ հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկմանը հաջորդող օրվանից:

 Восстановимая подпись

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝

Подписано: ANDREASYAN ZHANNA 6402810169

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՅԱՆ

**Ոչ հայախոսների համար հայերենի (արևելահայերենի)
իմացության մակարդակների պետական չափորոշիչներ**

Մասնագիտական խումբ՝
Դավիթ Գյուրջինյան
Նարինե Հեքեքյան
Արմինե Կոստանդյան
Հասմիկ Հովհաննիսյան

Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|-----------|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ | 5 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ | 8 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | 8 |
| Ա ՄԱԿԱՐԴԱԿ (ՍԿՍՆԱԿ) | 8 |
| Ա1 (նախնական մակարդակ) | 8 |
| Ա2 (տարրական մակարդակ)..... | 9 |
| ՈԼՈՐՏՆԵՐ և ԹԵՄԱՆԵՐ | 9 |
| Միջանձնային հարաբերությունների ոլորտ..... | 9 |
| Սոցիալ-կենցաղային ոլորտ | 9 |
| Խոսքային նմուշներ (ըստ հաղորդակցման ոլորտների) | 12 |
| ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 22 |
| Ունկնդրում (խոսքի լսողական ընկալում) | 22 |
| Բանավոր խոսք..... | 24 |
| Ընթերցում (խոսքի տեսողական ընկալում) | 25 |
| Գրավոր խոսք | 27 |
| ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ | 29 |
| Հնչյունաբանություն, ուղղագրություն և ուղղախոսություն | 29 |
| Հնչյունական | 29 |
| Գրային | 30 |
| Բառապաշար..... | 30 |
| Քերականություն | 30 |
| ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ (LANGUAGE FUNCTIONS) | 36 |
| ԹԵՄԱՏԻԿ ԲԱՌԱՑԱՆԿ (Ա1-Ա2) | 58 |
| ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ (Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿ) | 80 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Բ1 ՄԱԿԱՐԴԱԿ | 93 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Բ1 ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | 93 |
| ԹԵՄԱՆԵՐ և ՈԼՈՐՏՆԵՐ | 93 |
| Միջանձնային հարաբերությունների ոլորտ..... | 94 |
| Սոցիալ-կենցաղային ոլորտ | 94 |
| Սոցիալ-մշակութային ոլորտ | 96 |
| Կրթության ոլորտ..... | 97 |
| Սոցիալ-բնապահպանական ոլորտ..... | 97 |
| Առողջության և բժշկության ոլորտ | 97 |
| Պետաիրավական և հասարակական ոլորտ | 98 |
| ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 99 |
| Ունկնդրում (խոսքի լսողական ընկալում) | 99 |
| Ընթերցում (խոսքի տեսողական ընկալում) | 101 |
| Բանավոր խոսք..... | 102 |

| | |
|---|------------|
| Գրավոր խոսք | 104 |
| ԼԵՋՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ | 105 |
| Հնչյունաբանություն, ուղղագրություն, ուղղախոսություն..... | 105 |
| Բառապաշար..... | 105 |
| Քերականություն | 106 |
| Գոյական..... | 106 |
| ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ | 109 |
| ԼԵՋՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ | 111 |
| ԹԵՄԱՏԻԿ ԲԱՌԱՅԱՆԿ (Բ1 ՄԱԿԱՐԴԱԿ)..... | 121 |
| ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՅԱՆԿ (Բ1 ՄԱԿԱՐԴԱԿ)..... | 205 |
| ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 239 |
| ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԵՐ | 241 |
| ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ | 242 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Բ2 ՄԱԿԱՐԴԱԿ..... | 244 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Բ2 ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ..... | 244 |
| ԹԵՄԱՆԵՐ ԵՎ ՈԼՈՐՏՆԵՐ | 244 |
| Միջանձնային հարաբերությունների ոլորտ..... | 245 |
| Սոցիալ-կենցաղային ոլորտ | 245 |
| Սոցիալ-մշակութային ոլորտ | 247 |
| Կրթության ոլորտ | 248 |
| Սոցիալ-բնապահականական ոլորտ | 248 |
| Առողջության և բժշկության ոլորտ | 249 |
| Պետական կամ հասարակական ոլորտ, իրավական համակարգ..... | 249 |
| ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 250 |
| Ունկնդրում..... | 250 |
| Բանավոր խոսք..... | 251 |
| Ընթերցում..... | 255 |
| Գրավոր խոսք | 257 |
| ԼԵՋՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ | 258 |
| Հնչյունաբանություն և ուղղախոսություն | 258 |
| Ուղղագրություն | 259 |
| Բառապաշար..... | 259 |
| Ձևաբանություն | 259 |
| Շարահյուսություն..... | 261 |
| ԼԵՋՎԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ | 262 |
| ԹԵՄԱՏԻԿ ԲԱՌԱՅԱՆԿ (Բ2 ՄԱԿԱՐԴԱԿ) | 263 |
| ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՅԱՆԿ (Բ2 ՄԱԿԱՐԴԱԿ) | 395 |
| ԿԱՅՈՒՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 449 |
| ՀԱՐԱԴԻՐ ԲԱՅԵՐ | 451 |
| ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ | 452 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Գ1-Գ2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ | 456 |
| ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Գ1-Գ2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ | 456 |
| ՈԼՈՐՏՆԵՐ և ԹԵՄԱՆԵՐ | 457 |

| | |
|--|------------|
| ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... | 457 |
| Ունկնդրում..... | 457 |
| Ընթերցում..... | 459 |
| Բանավոր խոսք..... | 461 |
| Բանավոր խոսքի հմտության ցուցիչներ..... | 461 |
| Գրավոր խոսք..... | 462 |
| Գրավոր խոսքի հմտության ցուցիչներ..... | 463 |
| ԼԵԶՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ..... | 464 |
| Հնչյունաբանություն, ուղղագրություն, ուղղախոսություն..... | 464 |
| Բառապաշար..... | 464 |
| Քերականություն..... | 465 |
| Ոճաբանական գիտելիք..... | 465 |
| ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՈՒՄ | 466 |
| ՏԵՔՍՏԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՈՒՄ | 468 |
| Որոշակի (կոնկրետ) տեղեկությունների փոխանցում..... | 469 |
| Տվյալների մեկնաբանում..... | 471 |
| Տեքստի մշակում..... | 473 |
| Տեքստի թարգմանություն..... | 477 |
| Գրառումներ..... | 479 |
| Ստեղծագործական տեքստեր..... | 481 |
| ԸՆԿԱԼՄԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՈՒՄ..... | 484 |
| Հաղորդակցման միջնորդավորում..... | 484 |
| ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 486 |
| ԼԵԶՈՒՆԵՐԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ (ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՆԴՂԱԿ) | 489 |
| ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ | 490 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անկախության շրջանում Հայաստանը գրավիչ է դառնում օտարազգի գործարարների, տարբեր ոլորտների մասնագետների, աշխատողների, հետազոտողների, ինչպես նաև զբոսաշրջիկների համար: Աճում է հետաքրքրությունը երկրի, նրա պատմության, մշակույթի և լեզվի՝ հայերենի նկատմամբ: Առաջնահերթ խնդիր է դառնում ժամանակակից հայոց լեզվի ուսուցումը և հայերենի իմացության մակարդակի սահմանումը:

Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման խնդիրներն արդիական կդառնան Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջազգայնացման ցուցանիշների բարելավմանը զուգահեռ:

Վերջին տարիներին հայրենադարձության տարբեր ալիքներ Հայաստան են բերել մեծաթիվ հայրենակիցների, որոնց թվում կան ոչ հայախոսներ, ինչպես նաև հայերենի թերի իմացությամբ (օրինակ՝ գրել-կարդալ չիմացող) տարբեր տարիքի մարդիկ: Հայրենի հասարակությանը նրանց սերտաճելու կարևոր պայմաններից մեկը հայերենի իմացությունն է կամ իմացության աստիճանի բարելավումը:

Միջազգային, ներազգային այս բոլոր հանգամանքները, գործոններն ու ազդակները օրվա պահանջ են դարձրել պետական մակարդակով հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգի մշակումը Լեզուների ուսուցման, ստուգման և գնահատման համաեվրոպական ընդհանուր շրջանակի (CEFR) հետևողությամբ:

Լեզուների ուսուցման, ստուգման և գնահատման համաեվրոպական ընդհանուր շրջանակը սահմանում է լեզվական այն գիտելիքներն ու հմտությունները, որոնք պիտի ունենա լեզու սովորողը համապատասխան միջավայրում և իրավիճակում այդ լեզվով արդյունավետ հաղորդակցվելու և գործելու համար: Ըստ այդմ՝ սահմանվում են հմտությունների մակարդակներ, որոնք հնարավորություն են տալիս չափելու սովորողների առաջընթացը, որոշելու տվյալ լեզվի իմացության մակարդակը:

Այսօր որպես լեզուների ուսուցման գլխավոր նպատակ է դիտարկվում հաղորդակցական լեզվական իրազեկության ձևավորումը: Ընդ որում, լեզուների ուսուցման այս

նոր հայեցակարգի բաղադրիչները և դրանց նկարագրիչները, ըստ համաեվրոպական շրջանակի, նույնն են եվրոպական բոլոր լեզուների համար՝ հաշվի առնելով, իհարկե, մշակութային համատեքստը:

Համաեվրոպական շրջանակի օրինակով մշակվել է *Հայերենի (արևելահայերենի) ուսուցման, ստուգման և գնահատման համակարգ՝* ելնելով հայերենի լեզվական և մշակութային առանձնահատկություններից: Բնականաբար, հաշվի է առնվել այս ասպարեզում առկա հայաստանյան նախընթաց փորձը:

Մշակվել են հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2) մակարդակների չափորոշիչները, որոնք ուրվագծում են հայերեն կարդալու, գրելու, լսելու և խոսելու հմտությունների անհրաժեշտ շրջանակը:

Կազմվել են Ա1-Ա2, Բ1 և Բ2 ենթամակարդակների թեմատիկ նվազագույն բառապաշարի ցանկերը՝ ըստ լեզվի կիրառության հիմնական ոլորտների և ենթաօլորտների: Բառացանկերում տեղ են գտել ինչպես համընդհանուր գործածություն ունեցող բառեր, այնպես էլ ժողովրդական և խոսակցական որոշ բառեր (բառամիավորներ), որոնք հայերեն սովորողը առօրյա հաղորդակցության մեջ կարող է հաճախ լսել հայախոսների բանավոր խոսքում, հեռուստատեսությունից, ռադիոյից, զանգվածային լրատվության այլ միջոցներից: Օրինակ՝ պուլպուլակ «ցայտաղբյուր», բոյով «բարձրահասակ», կներես «ներողություն, ների՛ր», էս «այս», հա «այո», չէ «ոչ» և այլն: Այսինքն՝ ընտրվել են այսօրվա՝ հայերենի համագործածական բառապաշարը և այն բառերը, որոնք անհրաժեշտ են Հայաստանում ազատ հաղորդակցվելու համար:

Բառապաշարում ներառվել են հայկական իրականությանը, կենցաղին և մշակույթին բնորոշ իրողություններն արտացոլող բառեր, ինչպես՝ *լավաշ, մածուն, խաչքար, Վարդավառ* և այլն:

Բառացանկն առհասարակ կողմնորոշիչ բնույթ ունի. այն կարող է ըստ անհրաժեշտության ընդլայնվել կամ ինչ-որ չափով սահմանափակվել սովորող(ներ)ի տարիքային առանձնահատկությունների, նախասիրությունների և նպատակադրման թելադրանքով: Օրինակ՝ լեզուների կամ ազգերի ներկայացուցիչների անունները, բուսանուններ, մասնագիտությունների, հիվանդությունների անուններ և այլն:

Ներկայացվում են խոսքային նմուշներ և լեզվական կաղապարներ՝ ըստ հաղորդակցման ոլորտների և հաղորդակցական խնդիրների:

Գ1, Գ2 ենթամակարդակների համար տրված են միայն ընդհանուր բնութագրիչներ, քանի որ Գ մակարդակը հմուտ օգտագործողի, այսինքն՝ լեզվին ազատ տիրապետողի մակարդակն է:

Ներկայացվող փաստաթուղթն ունի նաև հավելվածներ, որոնք կարող են օգտակար լինել ինչպես հայերենի ուսուցում կազմակերպողներին և անցկացնողներին (օրինակ՝ կայուն բառակապակցությունների և դարձվածքների ցանկերը), այնպես էլ հայերեն սովորողներին (օրինակ՝ ինքնազնահատման սանդղակը):

Մասնագիտական խումբը պատրաստ է քննարկելու ողջամիտ յուրաքանչյուր առաջարկություն, որ կնպաստի կատարված աշխատանքի բարելավմանը, հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման նոր համակարգի ամբողջացմանը և հետագա կատարելագործմանը:

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա մակարդակ (սկսնակ)

Սա լեզվի տիրապետման սկզբնական մակարդակն է, այն փուլը, երբ սովորողը կարող է նվազագույն բառապաշարով և խոսքային պարզագույն կառույցներով հաղորդակցվել համապատասխան լեզվական միջավայրում ինչպես լեզվակիրների, այնպես էլ լեզվին տիրապետող օտարերկրացիների հետ, կատարել առօրյա գործեր, հաստատել միջանձնային և աշխատանքային հարաբերություններ:

Ա1 (նախնական մակարդակ)

Ա1 մակարդակում սովորողը կարող է համապատասխան միջավայրում հաղորդակցվել՝ լեզվական խոչընդոտները հաղթահարելով ինչպես պարզագույն խոսքային, այնպես էլ ոչ խոսքային միջոցներով: Սովորողը կարող է օգտագործել նվազագույն բառապաշար, քերականական պարզ կառույցներ, խոսքի նմուշներ և առօրյա արտահայտություններ, որոնք հաճախ կարող են ուղեկցվել դիմախաղով, ժեստերով, նկարներով, մատնացույց անելով:

Ա1 մակարդակում հաղորդակցումը կարող է իրականացվել, եթե բավարար կերպով ապահովված լինեն հետևյալ կարևոր պայմանները՝

- սովորողը տիրապետում է հաճախակի գործածվող խոսքային կառույցների,
- խոսակիցը բարեհաճ է, խոսում է գրական լեզվով, դանդաղ ու պարզ:

Ա1 մակարդակի լեզվական նյութը բավական սահմանափակ է՝ առօրյա գործածական ոչ մեծաթիվ բառեր և արտահայտություններ, բարեկիրթ խոսքի նմուշներ, քերականական պարզ կառույցներ, որոնք խոսքում մեծապես զուգակցվում են ոչ խոսքային միջոցներով: Սովորողը կարող է պարզ հարցեր տալ խոսակցից անձնական տեղեկություններ ստանալու կամ առօրյա գործողություններ կատարելու համար, ինչպես նաև նման հարցերի պատասխանել մեծ մասամբ առանձին բառերով կամ պարզ բառակապակցություններով, յուրացրած լեզվական առանձին կառույցներով: Ընդ որում արտասանությունը հաճախ հստակ չէ, խոսքում շատ են լինում դադարները:

Հաղորդակցման ժամանակ խոսքի ընկալման պայմաններն են խոսակցի հստակ և դանդաղ արտասանությունը, անհրաժեշտության դեպքում՝ մտքերի կամ դրանց առանձին հատվածների կրկնությունը, ոչ խոսքային միջոցների կիրառումը:

Ընթերցման հմտությունը սահմանափակվում է ծանոթ թեմաներին առնչվող առանձին բառերի ու բառակապակցությունների, պարզ տեքստերի (հայտարարություններ, ցուցանակներ և այլն) ընթերցմամբ:

Գրավոր խոսքը ևս սահմանափակվում է անձնական տեղեկությունները ձևաթղթերում լրացնելով, սովորած բառեր ու բառակապակցություններ գրելով:

Լեզվական գիտելիքների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը մեծապես կախված են այն համատեքստերից կամ իրադրություններից, որոնցում դրանք գործածվում են: Ա1 մակարդակում սովորողի կարողությունները ձևավորվում են

միջանձնային հարաբերությունների և սոցիալ-կենցաղային ոլորտներում (մանրամասն մեկնաբանությունը տե՛ս Ա մակարդակի համար նկարագրված ոլորտներն ու ենթաոլորտները):

Ա2 (տարրական մակարդակ)

Ա2 մակարդակը լեզվի տիրապետման տարրական մակարդակն է: Այս մակարդակով հայերենին տիրապետողը կարող է առօրյա սովորական իրադրություններում գործնական խնդիրներ լուծել՝ կյանքի տարբեր ոլորտներում միջանձնային և մասնագիտական շփումներ հաստատելով և իրականացնելով դեմառդեմ, հեռախոսով կամ մեդիամիջոցներով:

Ա2 մակարդակի գիտելիքների և կարողությունների ձևավորման ու զարգացման համար կարևորվում են հաղորդակցման Ա1 մակարդակի առնչությամբ հիշատակված ոլորտները և հաղորդակցական թեմաները՝ լեզվական ավելի բազմազան կառույցների ու հարստացվող բառապաշարի օգտագործմամբ, ավելի բարդ խնդիրների լուծմամբ:

Ոլորտներ և թեմաներ

Ա մակարդակի համար կարևորվում են հետևյալ թեմաներն ու հաղորդակցական իրադրությունները՝ ըստ ոլորտների.

Միջանձնային հարաբերությունների ոլորտ

1. Անձնական տեղեկություններ

Տեղեկություններ հայտնել սեփական անձի մասին՝ անուն, ազգանուն, տարիք, սեռ, ազգություն, մշտական բնակության վայր, հասցե, Հայաստանում գտնվելու նպատակը, կրթություն, զբաղմունք և այլն:

2. Ծանոթություն և շփում

Ներկայանալ և ներկայացնել ուրիշներին, ողջունել, հարցնել որպիսությունը, նշել սեփական զբաղմունքը և մասնագիտությունը, այդ մասին հարցնել ուրիշներին, խնդրանք արտահայտել, շնորհակալություն հայտնել, ներողություն խնդրել:

Սոցիալ-կենցաղային ոլորտ

3. Տուն

Նկարագրել տունը կամ բնակարանը, խոսել կահավորանքի, կենցաղային սարքերի ու պարագաների մասին:

4. Առողջություն, մարմնի խնամք, խնամքի պարագաներ

Իմանալ մարմնի մասերի անունները, բուժհիմնարկում պարզագույն տեղեկություններ հայտնել ֆիզիկական վիճակի, անհանգստացնող երևույթների մասին, խոսել մարմնի խնամքի մասին:

5. Բնություն և շրջակա միջավայր

Խոսել բնաշխարհի մասին, տեղեկություններ հայտնել բույսերի ու կենդանիների մասին, խոսել եղանակի մասին, նշել ժամանակը և այլն:

6. Առօրյա

Տեղեկություններ հայտնել առօրյայի, առօրյա գործողությունների մասին, գնումներ կատարելիս օգտագործել հայերեն արտահայտություններ, կարդալ գնապիտակները, ապրանքի մասին տեղեկություններ հարցնել, խնդրել որոշակի քանակությամբ ապրանք, ռեստորանում կամ սրճարանում օգտվել ճաշացանկից, ըմպելիք և ուտեստներ պատվիրել, խոսել սիրած կամ չսիրած կերակրատեսակների մասին:

7. Հետաքրքրություններ, նախասիրություններ, ժամանց

Տեղեկություններ հայտնել հետաքրքրությունների, նախասիրությունների մասին և նման տեղեկություններ ստանալ խոսակցից, տեղեկություններ հայտնել (ստանալ) իր և ուրիշների ֆիզիկական ակտիվության, մարզական իրադարձությունների մասին:

Շնորհավորել ազգային և ընտանեկան տոների առիթով, պատասխանել շնորհավորանքների, հյուրերի հրավիրել որևէ տեղ, ընդունել կամ մերժել ուրիշների հրավերը, պայմանավորվել վայրի և ժամի մասին:

8. Կողմնորոշում քաղաքում

Իմանալ կամ հայտնել ինչ-որ բանի գտնվելու տեղը, այնտեղ հասնելու ճանապարհը, իմանալ (հայտնել) կանգառի տեղը, ուղեվարձի չափը, օգտվել փողոցներում և կանգառներում եղած ցուցանակներից:

9. Ուղևորություն և տրանսպորտ

Օդանավակայանում կամ տրանսպորտային այլ հանգույցներում օգտվել չվացուցակներից, լսել հայտարարությունները և հետևել ցուցումներին, անձնական անհրաժեշտ տեղեկություններ հայտնել, ճշտել տոմսի և ծառայությունների արժեքը, ուղևորության տևողությունը, տոմս պատվիրել (գնել):

10. Արձակուրդ և հանգիստ

Տեղեկություններ հայտնել/ստանալ անցկացրած հանգստի վայրի, տևողության, ուղևորությունների մասին: Հյուրանոց ամրագրել կամ բնակարան վարձել:

11. Զբոսաշրջություն, տեսարժան վայրեր

Տեղեկատու աղբյուրներից տեղեկություններ ստանալ Հայաստանի տեսարժան վայրերի մասին, ճշտել այցելությունների հնարավոր տարբերակները, էքսկուրսիաների ժամերը, դրանց տևողությունը, արժեքը:

Ա մակարդակի թեմաներն ու ենթաթեմաները բառապաշարային համապատասխան միավորների և խոսքային կառույցների նմուշներով ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Խոսքային նմուշներ (ըստ հաղորդակցման ոլորտների)

| Ա 1 | Ա 2 |
|---|--|
| Թեմաներ և հասկացություններ | Թեմաներ և հասկացություններ |
| Միջանձնային հարաբերությունների ոլորտ | Միջանձնային հարաբերությունների ոլորտ |
| 1. Անձնական տեղեկություններ | 1. Անձնական տեղեկություններ |
| Սովորողները (անհրաժեշտության դեպքում դիմացինի օգնությամբ) կկարողանան գրել (ձևաթղթերում, հարցաթերթիկներում և այլն) կամ հայտնել իրենց անուն-ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, էլ. հասցեն, որտեղից լինելը, զբաղմունքը և այլն: | Սովորողները կկարողանան հայտնել իրենց անուն-ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, ծննդավայրը, ծննդյան տարեթիվը, նշել տարիքը, սեռը, ընտանեկան կարգավճակը, որտեղից լինելը, քաղաքացիությունը, նշել զբաղմունքը կամ աշխատանքը, պատմել ընտանիքի, իրենց նախասիրությունների ու հետաքրքրությունների մասին: |
| 1.1 | 1.1 |
| Անուն | Անուն |
| <i>Ես էմման եմ: Նա Արամն է: Ես էմմա Սթոունն եմ: Նա Արամ Արմենյանն է: Դուք ո՞վ եք:</i> | <i>Ես էմմա Սթոունն եմ: Իմ/Քո/Նրա անունը Արամ է: Իմ/Քո/Նրա ազգանունը Սթոունն է: Դուք ո՞վ եք: Դա ո՞վ է: Ձեր անունն ի՞նչ է: Նրա անունն ի՞նչ է:</i> |
| 1.2 | 1.2 |
| Հասցե | Հասցե |
| <i>(Դու) Որտե՞ղ ես ապրում: Նա որտե՞ղ է ապրում: Ես ապրում եմ Երևանում: Նա ապրում է Իսպանիայում:</i> | <i>(Դու) Որտե՞ղ ես ապրում: (Նրանք) Որտե՞ղ են ապրում: Ես ապրում եմ Իսպանիայում: Նա ապրում է Հունաստանում: Նրանք ապրում են Աթենքում: Մենք ապրում ենք Արովյան փողոցում: Նրանք ապրում են Թումանյան փողոցի 40 շենքում: Ո՞ր ես գնում: Գնում եմ Լոնդոն: Որտեղի՞ց ես: Նա որտեղի՞ց է: Նա Իդրալիայից է: Ես Երևանից եմ:</i> |
| 1.3 | 1.3 |
| Հեռախոս | Հեռախոս |
| <i>Հեռախոսի համարը (մատնացույց անելով խոսակցին): 091 123456</i> | <i>Ձեր/Քո հեռախոսի համար՞րը: Ձեր/Քո հեռախոսի համարը կասե՞ք(ս): Ես կզանգեմ Ձեզ (քեզ): Խնդրում եմ՝ զանգեք ինձ:</i> |
| 1.4 | 1.4 |

| | |
|--|---|
| Ծննդյան տվյալներ | Ծննդյան տվյալներ |
| <i>Ես ծնվել եմ [երկրում/քաղաքում]: Ես ծնվել եմ [ամսին]: Որտե՞ղ ես ծնվել: Ե՞րբ ես ծնվել:</i> | <i>Ես ծնվել եմ [քաղաքում, երկրում] [... թվականի ամսի թվին]: Որտե՞ղ ես ծնվել: Ե՞րբ ես ծնվել:</i> |
| 1.5 | 1.5 |
| Տարիք, սեռ, ընտանեկան կարգավիճակ | Տարիք, սեռ, ընտանեկան կարգավիճակ |
| <i>(Դու) քանի՞ տարեկան ես: Նա փոքր արջիկ է: (Ես) Ամուսնացած չեմ:</i> | <i>Նա երիտասարդ է: Նա երիտասարդ է, թե՞ ծեր: Անուշը միջին տարիքի կին է: Ես ամուսնացած եմ:</i> |
| 1.6 | 1.6 |
| Ազգություն, ծագում, լեզու, կրոն | Ազգություն, ծագում, լեզու, կրոն |
| <i>Նա լեհ է: Դու հայ ես: Նա խոսում է հայերեն: Ես հայերեն (չ)գիտեմ: Նա հայերեն գիտի՞: Չինարեն գիտե՞ս:</i> | <i>Ես Անգլիայից եմ: Նա ապրում է Լեհաստանում: Նա հնդիկ է, ապրում է Հայաստանում: Նա խոսում է անգլերեն և ֆրանսերեն: Նա հունարեն չգիտի: Դու հայերեն խոսո՞ւմ ես: Նա հավատում է Աստուծուն: Նա քրիստոնյա է: Նա մահամեղական է: Նա լեհ է: Դու հայ ես:</i> |
| 1.7 | 1.7 |
| Ընտանիք | Ընտանիք |
| <i>Ես ունեմ հայր, մայր և եղբայր: Ես քույր ունեմ: Դու քույր ունե՞ս: Նա երկու քույր ունի:</i> | <i>Ես երկու հորաքույր ունեմ: Սա իմ քույրն է: Նա իմ մորաքրոջ տղան է: Անին իմ քեռու արջիկն է:</i> |
| 1.8 | 1.8 |
| Զբաղմունք, մասնագիտություն, աշխատանք | Զբաղմունք, մասնագիտություն, աշխատանք |
| <i>Նա աշխատում է: Ես չեմ աշխատում: Դու աշխատո՞ւմ ես: Դուք աշխատո՞ւմ եք: Նա գնում է աշխատանքի: Ես բժիշկ եմ: Նա վարորդ է: Որտե՞ղ ես/է աշխատում: Նա աշխատում է բանկում:</i> | <i>Նա դերասան է: Ես նկարիչ եմ: (Նա) որտե՞ղ է աշխատում: (Նա) աշխատում է դպրոցում: Ինչո՞վ ես զբաղվում: Աշխատում եմ բանկում: Այսօր ժողով ունենք: Ես լավ գործընկերներ ունեմ: Կհանդիպենք ընդամիջման ժամին: Ես հիվանդանոցում վարորդ եմ: Նա մատուցող է սրճարանում:</i> |
| 1.9 | 1.9 |

| | |
|---|--|
| Կրթություն | Կրթություն |
| Ի՞նչ ես անում: (Ես) սովորում եմ համալսարանում: Նա դպրոց է գնում: Նա աշակերտ է: | Ես սովորում եմ հայերեն: Ես հայերեն եմ սովորում: Ի՞նչ ես սովորում: (Ես) պատմություն եմ սովորում: Որտե՞ղ ես սովորում: Դպրոցում: Ինչո՞վ ես զբաղվում: Ես դպրոց եմ գնում: Ես աշակերտ եմ: Նա ուսանող է: |
| 1.10 | 1.10 |
| Արտաքին և բնավորություն | Արտաքին և բնավորություն |
| Նա նիհար է: Դու խելոք ես: | Անին սև մազեր և կապույտ աչքեր ունի: Նա լուրջ և համեստ աղջիկ է: |
| 1.11 | 1.11 |
| Նախասիրություններ | Նախասիրություններ |
| Նա կարդալ է սիրում: // Նա սիրում է կարդալ: Ես պարել չեմ սիրում: | Նա կարդալ է սիրում: // Նա սիրում է կարդալ: Ես պարել չեմ սիրում: Նրան դուր են գալիս առցանց դասերը: |
| 2. Ծանոթություն, շփում | 2. Ծանոթություն, շփում |
| 2.1 | 2.1 |
| Ողջույն, որպիսություն, հրաժեշտ, դիմելաձևեր | Ողջույն, որպիսություն, հրաժեշտ, դիմելաձևեր |
| Բարև, Աննա': Բարև Ձեզ, պարո՞ն Սիմոնյան: Բարև Ձեզ, տիկի՛ն Անուշ: Ո՞նց ես: Ինչպե՞ս եք: Ցտեսություն: | Բարև ձեզ, տղանե՛ր: Բարի երեկո, Անի': Բարի լույս, տատիկ՛կ: Բարի երեկո, տիկի՛ն Աննա: Բարի գալուստ Հայաստան: Ո՞նց ես: Ինչպե՞ս եք: Գործերդ ո՞նց են: Ցտեսություն: Մինչ հանդիպում: Մինչ վաղը: |
| 2.2 | 2.2 |
| Ծանոթություն | Ծանոթություն |
| Ես Լևոնն եմ: Իմ անունը Լևոն է: Դու ո՞վ ես: Ուրախ եմ: | Արամին գիտե՛ս: Չգիտեմ: Ծանոթացի՛ր, իմ եղբայրն է: Հաճեի՞ է: Ուրախ եմ: Շատ ուրախ եմ: Ես նույնպես: |
| 2.3 | 2.3 |
| Խնդրանք, շնորհակալություն, ներողություն | Խնդրանք, շնորհակալություն, ներողություն |

| | |
|--|---|
| Կգրե՛ս: Կօզնե՛ս/Կօզնե՛ք: Շնորհակալություն: Խնդրեմ: Կներե՛ք: | Կգրե՛ս: Գրե՛ք, խնդրում եմ: Կօզնե՛ս/կօզնե՛ք: Շնորհակալություն: Շնորհակալ եմ: Խնդրեմ: Ներողություն: Կներե՛ք: |
| Սոցիալ-կենցաղային ոլորտ | Սոցիալ-կենցաղային ոլորտ |
| 3. Տուն և միջավայր | 3. Տուն և միջավայր |
| Սովորողները կկարողանան նկարագրել իրենց տունը (բնակարանը), սենյակները, կահույքը, տան դիրքը, տեսարանը (բնապատկերը), եղանակը, թվարկել որոշ բույսերի ու կենդանիների անուններ, մարմնի մասեր և այլն: | Սովորողները կկարողանան ներկայացնել իրենց տունը (բնակարանը), սենյակները, կահույքը, տան դիրքը, սարքերն ու սարքավորումները, սպասքը, անձնական խնամքի պարագաները նկարագրել տարածքը, տեսարանը (բնապատկերը), նշել և հասկանալ ուրիշների հաղորդած նույնանման տեղեկությունները: |
| 3.1 | 3.1 |
| Տուն, բնակարան | Տուն, բնակարան |
| Իմ/մեր տունը մեծ է: Դուրը բաց է: Պատուհանը փակ է: | Այս տունը չորս սենյակ ունի: Բնակարանն ունի հյուրասենյակ և երեք ննջասենյակ: Խոհանոցը հյուրասենյակի կողքին է: |
| 3.2 | 3.2 |
| Կահույք, անկողնու պարագաներ | Կահույք, սպիտակեղեն, անկողնու պարագաներ |
| Սենյակում մեծ սեղան կա: Սենյակում սեղան, աթոռ ու պահարան կա: Խոհանոցում աթոռներ կան: | Բազմոցը պահարանի կողքին է: Աթոռները սեղանի մոտ են: Բազմոցի վրա բարձ կա: Սրբիչները պահարանի մեջ են: |
| 3.3 | 3.3 |
| Կենցաղային սարքեր | Կենցաղային սարքեր |
| Սառնարանը խոհանոցում է: Խոհանոցում սառնարան չկա: Սառնարանը փոքր է: Այսպեսդ արդուկ չկա: | Սառնարանը պահարանի կողքին է: Լվացարանը պատուհանի մոտ է: Խոհանոցում երկու պահարան կա: |
| 3.4 | 3.4 |
| Սպասք և տնային պարագաներ | Սպասք և տնային պարագաներ |
| Ափսե՛ն որպե՛ղ է: Դանակները որպե՛ղ են: Ափսեները պահարանում են: Ափսեն պահարանի մեջ է: Դանակը ափսեի մոտ է: Բաժակը սեղանի վրա է: Դարակում սրբիչներ կան: Սեղանի վրա երկու բաժակ կա: | Շերեփը որպե՛ղ է: Սրբիչները որպե՛ղ են: Կաթսան գազի/գազօջախի վրա է: Սրբիչները դարակում են: Բաժակի մեջ ջուր (չ)կա: Սեղանի վրա ափսեներ (չ)կան: |
| 3.5 | 3.5 |

| | |
|---|---|
| Հարմարություններ (կոմունալ ծառայություններ) | Հարմարություններ (կոմունալ ծառայություններ) |
| Գազ կա՞: Գազ չկա: Զուր չկա: Լույսը կվառե՞ս: | Տունը (բնակարանը) ջեռուցվո՞ւմ է: Զուր չկա, ջուրը կտրվել է: Այս տանը ջեռուցում կա՞: Զեռուցման կաթսան որտե՞ղ է: (Զեռուցման կաթսան) Խոհանոցում է: Կարո՞ղ եմ լույսը վառել: Այո, անջափիչը դռան մոտ է: |
| 3.6 | 3.6 |
| Առողջություն, մարմնի խնամք, խնամքի պարագաներ | Առողջություն, մարմնի խնամք, խնամքի պարագաներ |
| Սանր ունե՞ք: Այստեղ օճառ և սրբիչ կա: Սա իմ սրբիչն է: Ապամս ցավում է: | Այստեղ չեն ծխում: Այստեղ չի կարելի ծխել: Այս առանը պետք է բուժել: Առավոտյան և երեկոյան նա մաքրում է առամները: Ապամի մածուկ և խոզանակ կառնե՞ս: Գլուխս ցավում է: Դեղ եմ խմում: Սրբիչները պահարանի դարակում են: |
| 3.7 | 3.7 |
| Բնություն և շրջակա միջավայր | Բնություն և շրջակա միջավայր |
| Ես ապրում եմ գյուղում: Նա ապրում է քաղաքում: Այստեղ/Այնտեղ գետ կա: (Այս/այդ/այն) լիճը մեծ է: | Մեր գյուղի մոտ անտառ կա: Հայաստանում ծով չկա, բարձր սարեր կան: Հայաստանի մեծ գետերն են : Հայաստանի ամենաբարձր լեռը է: Հայաստանի մեծ քաղաքներն են: Այս տարի կհանգստանանք Սև ծովի ափին: Այս ամառ հանգստացանք Դիլիջանում: Հաջորդ կիրակին կանցկացնենք Գյումրիում: Գետի ափին տներ կան: |
| 3.8 | 3.8 |
| Բուսական և կենդանական աշխարհ | Բուսական և կենդանական աշխարհ |
| Դու շուն ունե՞ս: Այո/Ունեմ: Ոչ/Չէ, կատու ունեմ: Դու շո՞ւն ունես: Այո, սա իմ շունն է: Նա սիրում է նուռ, տանձ և ծիրան: Նա սալոր չի սիրում: Դու ի՞նչ միրգ ես սիրում: Ես ծիրան եմ սիրում: Քաղցր է: /Ծիրանը քաղցր է: Թթու է:/Այս նուռը թթու է: Մեծ/Փոքր է: Ծառը մեծ/փոքր է: Խոտը կանաչ է: | Ծիրանը և նուռը Հայաստանի խորհրդանիշներն են: Դդումը շատ օգտակար է: Շուկայում արդեն սև և կարմիր հաղարջ են վաճառում, իսկ ձմերուկ դեռ չկա: Վայրի կենդանիները պետք է ապրեն բնության մեջ: Նրանք/Վայրի կենդանիները չպետք է պահվեն գազանանոցում: |

| | |
|---|--|
| | <i>Սպիտակ արջերն ապրում են հյուսիսում: Հայաստանում տարածված են գայլերն ու աղվեսները, իսկ առյուծներ չկան:</i> |
| 3.9 | 3.9 |
| Եղանակ, կլիմա | Եղանակ, կլիմա |
| <i>Այսօր ցուրտ է: Այսօր շոգ է: Ձյուն է գալիս: Անձրև է գալիս: Այսօր լավ եղանակ է: Այսօր վաղ եղանակ է:</i> | <i>Երեկ շապ ուժեղ քամի էր: Գիշերը շապ ձյուն է եկել: Անձրևը շուրջ դադարեց: Երեկ ամբողջ օրը անրձև էր տեղում:</i> |
| 3.10 | 3.10 |
| Ժամանակ, ժամ | Ժամանակ, ժամ |
| <i>Տարին 12 ամիս ունի: Նա ծնվել է մարտին: Այսօր զբաղված եմ:</i> | <i>Ժամը քանի՞սն է: Ժամը տասն անց է քսան րոպե: Կհանդիպենք վաղը ցերեկը: Երեկոյան գնում եմ թատրոն: Հաջորդ շաբաթ կգնամ Գյումրի: Մյուս տարի կգամ Հայաստան:</i> |
| 4. Առօրյա | 4. Առօրյա |
| <i>Սովորողները կկարողանան իրենց առօրյայի մասին ընդհանուր տեղեկություններ հայտնել և հասկանալ ուրիշների հայտնած նույնանման տեղեկություններ, շնորհավորել ծանոթներին որոշ տոների կապակցությամբ:</i> | <i>Սովորողները կկարողանան նկարագրել իրենց առօրյան, նկարագրել՝ ինչ են անում տանը և աշխատավայրում, և հասկանալ ուրիշների հայտնած նույնանման տեղեկություններ, մտքեր փոխանակել այդ հարցերի շուրջ, պատմել որոշ տոների մասին, շնորհավորել ծանոթներին:</i> |
| 4.1 | 4.1 |
| Առօրյա կյանք | Առօրյա կյանք |
| <i>Ես զարթնում եմ առավոտյան ժամը 7-ին: Ժամը ութին գնում եմ աշխատանքի/դպրոց/համալսարան: Նա սովորում է դպրոցում/ համալսարանում: Ի՞նչ կխմեք(ս): Ես թեյ կխմեմ: Սուրճ չեմ խմում: Ճաշում եմ տանը:</i> | <i>Ես աթնանում եմ առավոտյան ժամը 6:30, մարզվում եմ, նախաճաշում և գնում եմ աշխատանքի: Նա աշխատում է բանկում: Նա միշտ տանն է նախաճաշում: (Նա) սովորաբար ճաշում է բանկի մոտակա սրճարանում: Դու հաճա՞խ ես զբոսնում: Սիրո՞ւմ ես պատրաստել: Ես լավ (չ)եմ պատրաստում:</i> |

| | |
|--|--|
| 4.2 | 4.2 |
| Խանութ, շուկա, գնումներ (մթերք, հագուստ) | Խանութ, շուկա, գնումներ (մթերք, հագուստ) |
| <i>Վարունգ ունե՞ք/կա՞: Լոյիկն ի՞նչ արժի: Մեկ (կես) կիլո փվեք:</i> | <i>Վարունգի գինը կասե՞ք: Մեկ կիլո կշռեք, խնդրում եմ: Սրա 37 համարը կա՞: Այս կոշիկի 37 համարն ունե՞ք: Այս կոշիկը կարո՞ղ եմ փորձել: Սա (այս շապիկը) փոքր է: Կարո՞ղ եմ քարտուվ վճարել:</i> |
| 4.3 | 4.3 |
| Ռեստորան, սրճարան (ուտեստներ, ըմպելիք) | Ռեստորան, սրճարան (ուտեստներ, ըմպելիք) |
| <i>Ի՞նչ կուզեք: Մի բաժակ սուրճ: Կանաչ թեյ, խնդրում եմ: Մի շիշ ջուր:</i> | <i>Ի՞նչ կպատվիրեք: Ի՞նչ կառաջարկեք: Ուզում ենք փորձել խորոված ձուկը: Երկու բաժին փոլմա, մեկ բաժին խորոված, հանքային ջուր և լավաշ:</i> |
| 4.4 | 4.4 |
| Տոներ | Տոներ |
| <i>Շնորհավոր Նոր փարի/Սուրբ Ծնունդ: Ծնունդդ շնորհավոր: Սա քեզ/Ձեզ (նվեր կամ ծաղիկներ մատուցելիս):</i> | <i>Շնորհավոր Նոր փարի/Սուրբ Ծնունդ: Ձափիկին համեցե՞ք մեր փուն: Վաղը իմ ծննդյան օրն է, ես ձեզ ռեստորան եմ հրավիրում: Շնորհավորում եմ ձեզ հարսանիքի առթիվ: Մաղթում եմ երջանկություն:</i> |
| 5. Ժամանց | 5. Ժամանց |
| <i>Սովորողները կկարողանան ասել՝ ե՛րբ են ազատ և ի՛նչ են անում ազատ ժամանակ, ինչպես նաև հասկանալ այդ մասին ուրիշների հայտնած տեղեկությունները:</i> | <i>Սովորողները կկարողանան ասել՝ ե՛րբ են ազատ և ի՛նչ են անում ազատ ժամանակ, մասնավորապես ներկայացնել իրենց հետաքրքրությունները: Կարողանում են նաև հասկանալ այդ մասին ուրիշների հայտնած տեղեկությունները, մտքեր փոխանակել այդ հարցերի շուրջ:</i> |
| 5.1 | 5.1 |
| Արձակուրդ, ժամանց, զվարճանք | Ժամանց, զվարճանք |
| <i>Կիրակի օրը ազատ եմ: Գնա՞նք այգի: Արի քայլենք:</i> | <i>Ժամը 6-ից հետո ազատ եմ: Ազատ կլինեմ 6-ից հետո: Կարող ենք մի քիչ քայլել այգում: Ջրոսնելու կգա՞նք: Շաբաթ օրը գնում ենք քաղաքից դուրս: Իմ արձակուրդը հունիսին է: Արձակուրդին գնալու եմ Լոռի:</i> |
| 5.2 | 5.2 |
| Հետաքրքրություններ | Հետաքրքրություններ |

| | |
|---|---|
| <i>Ես սիրում եմ երգել/պարել/նվագել: Նա մադիպներ է հավաքում:</i> | <i>Ես հետաքրքրվում եմ կինոյով, թատրոնով: Ես սիրում եմ կինո/ֆիլմ նայել: Նա սիրում է երգել/պարել:</i> |
| 5.3 | 5.3 |
| Մեղիա և մամուլ | Մեղիա և մամուլ |
| <i>Ես լուրեր եմ կարդում: Այսօր լուրերը լսե՞լ ես:</i> | <i>Ես հաճախ եմ լուրեր կարդում համակարգչով/հեռախոսով: Նա ռադիոյով հաղորդում է լսում:</i> |
| 5.4 | 5.4 |
| Արվեստ | Արվեստ |
| <i>Ես չեմ պարում: Դու լավ ես պարում: Նա սիրում է նկարել: Դու նվագո՞ւմ ես:</i> | <i>Մենք շատ լավ ֆիլմ դիտեցինք: Նա դաշնամուր է նվագում, իսկ ես ջութակ եմ նվագում: Ուզում եմ քանոն նվագել սովորել: // Ուզում եմ սովորել քանոն նվագել:</i> |
| 5.5 | 5.5 |
| Ֆիզիկական ակտիվություն և սպորտ | Ֆիզիկական ակտիվություն և սպորտ |
| <i>Նա լավ է լողում: Դու լողալ գիտե՞ս: Ես լողալ չգիտեմ: Ես շախմատ չեմ խաղում:</i> | <i>Դու սպորտով զբաղվո՞ւմ ես: Ես զբաղվում եմ լողով: Շաբաթը երեք անգամ գնում եմ լողավազան: Մարզասրահում մարզվում եմ շաբաթը երկու անգամ՝ երկուշաբթի և ուրբաթ օրերին:</i> |
| 6. Ճանապարհորդություն, տրանսպորտ | 6. Ճանապարհորդություն, տրանսպորտ |
| <i>Սովորողները կկարողանան օդանավակայանում կամ տրանսպորտային այլ հանգույցներում օգտվել չվացուցակներից, անձնական անհրաժեշտ տեղեկություններ հայտնել, ճշտել կանգառի (կայարանի) տեղը, ճշտել տոմսի արժեքը և այլն:</i> | <i>Օդանավակայանում կամ տրանսպորտային այլ հանգույցներում օգտվել չվացուցակներից, լսել հայտարարությունները և հետևել ցուցումներին, անձնական անհրաժեշտ տեղեկություններ հայտնել, տոմս պատվիրել (գնել), ճշտել տոմսի և ծառայությունների արժեքը, ուղևորության տևողությունը և այլն:</i> |
| 6.1 | 6.1 |
| Հանրային փոխադրամիջոցներ | Հանրային փոխադրամիջոցներ |
| <i>Ավտոբուսի կանգառը որտե՞ղ է: Այնտեղ (մարնացույց անելով): Տոմսն ի՞նչ արժե:</i> | <i>Ավտոբուսի կանգառը հեռո՞ւ է: Ո՛չ, հեռու չէ: / Ո՛չ, մոտ է: Մետրոյի կայարանը որտե՞ղ է: Այս փողոցի վերջում: Որտե՞ղ (ո՞ր կանգառում) պիտի իջնեմ: Մյուս կանգառում: Տոմսն ի՞նչ արժե: Երկու տոմս, խնդրում եմ:</i> |

| | |
|--|--|
| | Հայաստան եւ գնում գնացքով (օդանավով): |
| 6.2 | 6.2 |
| Անձնական փոխադրամիջոցներ | Անձնական փոխադրամիջոցներ |
| Մեքենա ունե՞ս: Ես վարել/քշել չգիտեմ: Նա հեծանիվ է քշում: | Աշխատանքի մեքենայո՞վ ես գնում: Չէ, հեծանիվով: Նա լավ վարորդ (չ)է: Ուզում եմ Հայաստանում մեքենայով շրջագայել: Կարո՞ղ եմ մեքենա վարձել: Որքա՞ն/ինչքա՞ն պիտի վճարեմ: |
| 6.3 | 6.3 |
| Կողմնորոշում քաղաքում. փողոց, երթևեկություն, հաստատություններ | Կողմնորոշում քաղաքում. փողոց, երթևեկություն, հաստատություններ |
| Ինչպե՞ս գնամ Աբովյան փողոց: (Գնացե՛ք) Ուղիղ, հետո՝ աջ: Անցե՛ք փողոցը, ուղիղ գնացե՛ք: Անցումը որտե՞ղ է: Այնտեղ (մատնացույց անելով): | Հրապարակ ինչպե՞ս հասնեմ: Գնա՛(Գնացե՛ք) մինչև խաչմերուկ, թեքվի՛ր (թեքվե՛ք) դեպի կամուրջ, անցի՛ր (անցե՛ք) այն և ուղիղ գնա (գնացե՛ք) մինչև հրապարակ: Որտե՞ղ հանդիպենք: Բանկի դիմաց: Բանկը որտե՞ղ է: Խաչմերուկում: |
| 6.4 | 6.4 |
| Կեցություն | Կեցություն |
| Ազատ սենյակ ունե՞ք/կա՞: Ազատ սենյակ չկա: | Երկու հոգու համար սենյակ ունե՞ք: Մեզ երկու տեղանոց համար է պետք: Մնալու ենք երեք գիշեր: Մեկ գիշերվա վարձը որքա՞ն/ինչքա՞ն է: Մեր համարի/սենյակի բանալին կտա՞ք: Մեր սենյակը ո՞ր հարկում է: Հաշիվը կտա՞ք: Խնդրում եմ, տաքսի պատվիրեք ինձ համար: |
| 6.5 | 6.5 |
| Ճանապարհորդություն, ուղեբեռ, փաստաթղթեր | Ճանապարհորդություն, ուղեբեռ, փաստաթղթեր |
| Իմ ճամպրուկը թեթև է/ծանր չէ: (Ճամպրուկը) ծանր է, կօզնե՞ք: | Ես մեկ ճամպրուկ և ուսապարկ ունեմ: Իմ ճամպրուկը ծանր է, բայց անիվներով է: Դու ուսապարկը վերցրու, իսկ ես՝ ճամպրուկը: Ճամպրուկը դրե՛ք կշեռքին: Սա իմ ուղեբեռի կտրոնն է: |
| 6.6 | 6.6 |
| Արձակուրդ, հանգիստ | Արձակուրդ, հանգիստ |
| Գնում ենք ծով: Ծով գնա՞նք: Լողում ենք ծովում: Քնում ենք վրանում: | Այս տարի հանգստացանք Սևանա լճի (Սևանի) ափին: Առավոտյան ջուրը սառն էր, չէինք լողում: Միայն նստում էինք ափի ավազին: |

| | |
|--|--|
| | Կեսօրին մի քիչ լողում էինք կամ նավակով զբոսնում լճի վրա: |
| 6.7 | 6.7 |
| Զբոսաշրջություն, տեսարժան վայրեր | Զբոսաշրջություն, տեսարժան վայրեր |
| <i>Ո՞ր թանգարան գնամ: Ուզում եմ գնալ Տաթև: Ուզում եմ տեսնել Գառնին:</i> | <i>Որոշել եմ այս տարի ճամփորդել Հայաստանում և Վրաստանում: Հայաստան եմ ժամանել գիշերը: Այստեղ կճամփորդեմ չորս օր, հետո կմեկնեմ Վրաստան: Որտե՞ղ կարող եմ խաչքարեր տեսնել: Վաղը կգնամ Նորավանք և Տաթև: Կարո՞ղ եք կազմակերպել ուղևորություն դեպի Խոր Վիրապ: Որքա՞ն կտևի ուղևորությունը: Որքա՞ն ժամանակում կհասնենք Սևան: Ուզում եմ տեսնել Գառնու տաճարը // Ուզում եմ Գառնու տաճարը տեսնել:</i> |
| 7. Գործակցություն/հարաբերություններ այլոց հետ | 7. Գործակցություն/հարաբերություններ այլոց հետ |
| Սովորողները կկարողանան անձնական հարաբերություններ հաստատել այլոց հետ, ծանոթանալ, հասկանալ և հայտնել պարզագույն տեղեկություններ (հրավեր, հանդիպման վայր, ժամ և այլն): | Սովորողները կկարողանան անձնական հարաբերություններ հաստատել այլոց հետ, մասնակցություն ունենալ հանրային կյանքին (աշխատավայրում և դրանից դուրս), տարատեսակ տեղեկություններ փոխանակել, հաղորդակցվել նաև գրավոր: |
| 7.1 | 7.1 |
| Հանրային կյանք | Հանրային կյանք |
| <i>Բարև: Սա իմ ընկերն է: Արամին գիտեմ: Նա իմ ընկերն է: Ուրախ եմ: Հաճելի է:</i> | <i>Ծանոթացի՛ր/Ծանոթացե՛ք, սա իմ ընկերն է/սա Արամն է: Շատ հաճելի է: Ուրախ եմ: Ուրախ եմ ծանոթանալու համար: Երեկոյան կհանդիպենք: Համեցեք (իմ տուն): Այսօր հավաքույթ ունենք, հրավիրում եմ քեզ/դու էլ արի:</i> |
| 7.2 | 7.2 |
| Նամակագրություն | Նամակագրություն |
| <i>Նամակ գրել, բացիկ առնել/գնել, մատիտով գրել, նվեր տալ Գրիչ չունեմ:</i> | <i>Ես նամակ եմ ուղարկել քեզ: Կարո՞ղ եմ նվերի հետ բացիկ ուղարկել: Ես (Արամից) նամակ եմ ստացել, բայց դեռ չեմ պատասխանել:</i> |

Հաղորդակցումն ապահովող հմտություններ

Լեզվական հաղորդակցումը մարդկանց միջև զգացմունքների, մտքերի, տեղեկությունների փոխանակումն է, որն իրականացնելու համար անհրաժեշտ է տիրապետել չորս հիմնական հմտությունների: Սրանք միմյանց կապվում են երկու չափանիշով: Դրանք են՝

- *հաղորդակցման ուղղությունը* (այսինքն՝ տվյալ անձը տեղեկությունը հաղորդո՞ղն է, թե՞ ստացողը),
- *հաղորդակցման եղանակը* (ձայնային կամ պատկերային):

Ըստ այդմ էլ տարբերվում են՝

- **խոսքի ընկալման հմտությունները**
 - ունկնդրում
 - ընթերցում
- **խոսքի կառուցման հմտությունները**
 - բանավոր խոսք,
 - գրավոր խոսք:

Ունկնդրում (խոսքի լսողական ընկալում)

Ունկնդրումը ենթադրում է մի շարք հիմնական կարողությունների դրսևորում՝

- ընկալել և ընդհանուր առմամբ հասկանալ ունկնդրած խոսքի հիմնական բովանդակությունը,
- դուրս բերել անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկություններ,
- հասկանալ և ամբողջապես ըմբռնել բովանդակության մանրամասները:

Ունկնդրվող խոսքը պետք է կազմված լինի ծանոթ բառերի,

արտահայտությունների ու քերականական իրողությունների հիման վրա, ունենա 3-4% անծանոթ բառեր, որոնց իմաստը կարելի է կռահել:

Լսողական գործունեության դեպքում սովորողը կարող է հայոց լեզվով լսել՝

- հանրային վայրերում հնչող հայտարարություններ (զգուշացում, տեղեկացում, հրահանգ և այլն),
- զրուցակցի խոսք (այդ թվում հեռախոսով կամ այլ միջոցով),
- այլ անձանց կենդանի զրույց,
- կենդանի խոսք՝ որպես հանդիսատես կամ մասնակից (թատրոնում, ժողովներում, դասախոսությունների ժամանակ և այլն),
- ռադիոյով և հեռուստատեսությամբ հնչող խոսք (լուրեր, հարցազրույցներ, տարբեր հաղորդումներ, ֆիլմեր, ձայնագրություններ):

Ունկնդրելու հմտության ցուցիչներ (Ա մակարդակ)

| | Հայտարարություններ և հրահանգներ | Լեզվակրի խոսք և լեզվակիրների գրույց | Ռադիոհեռուստա- տեսային հաղորդումներ, ձայնագրություններ | Որպես հանդիսատես |
|----|---|---|---|---------------------|
| Ա2 | Կարողանում է հասկանալ կարճ, պարզ հայտարա- րությունների հիմնական կետերը: | <p>Կարողանում է ընդհանուր գծերով հասկանալ գրույցը, եթե այն պարզ է և դանդաղ է հնչում, ծանոթ թեմաներով է կամ դրանց շրջանակում է (կինո, սպորտ և այլն):</p> <p>Կարողանում է հասկանալ ներկայացվող տեղեկությունները, եթե խոսքը կարճ է կամ զուգորդվում է պատկերներով կամ սահիկներով:</p> | <p>Կարողանում է հասկանալ առօրյա անհրաժեշտ տեղե- կություններ պարունակող ձայնագրություններ (անձնական բնույթի, ընտանիքին վերաբերող, գնումներ անելիս, քաղաքում կողմնորոշվե- լիս և այլ իրավիճակներում գործածվող արտա- հայտություններ), եթե խոսքը պարզ է ու դանդաղ:</p> <p>Կարողանում է հասկանալ հեռուստատեսությամբ կամ ռադիոյով ներկայացվող տեղեկությունները եղանակի կամ մարզական մրցումների արդյունքների վերաբերյալ, եթե խոսքը իր բառապաշարի սահմաններում է, տեղեկատվական նյութի առանցքային փաստերը, եթե ուղեկցվում են համապատասխան լուսանկարներով ու տեսանյութերով, և խոսքը պարզ է ու հստակ:</p> | - |

| | | | | |
|----|---|--|---|---|
| Ա1 | <p>Կարողանում է հասկանալ իրեն ծանոթ կամ հաճախ գործածվող բառերով կազմված և դանդաղ արտասանված պարզագույն հրահանգներ, կարճ ցուցումներ, որոնք կարող են ուղեկցվել ոչ խոսքային միջոցներով (օրինակ՝ գնալ այս կամ այն ուղղությամբ, բացել գիրքը և այլն):</p> | <p>Կարողանում է խոսքից հասկանալ իրեն ծանոթ առանձին բառեր, եթե արտասանվում են պարզ, դանդաղ:</p> <p>Կարողանում է հասկանալ բարեկիրթ խոսքի կառույցներ, առօրյայում գործածվող իրերի անուններ, ուսուցանողի պարզ հարցեր, հրահանգներ, ամիսների, շաբաթվա օրերի անուններ, թվականներ (տարիք, գին, ժամանակահատված):</p> | <p>Կարողանում է հասկանալ ուսումնական ծայնագրությունները, որոնք վերաբերում են ուսուցանվող նյութին և ներկայացվում են դանդաղ ու ընդմիջումներով:</p> <p>Կարողանում է գովազդներում, ֆիլմերում, հաղորդումներում ճանաչել և հասկանալ առանձին ծանոթ բառեր և պարզ արտահայտություններ:</p> | - |
|----|---|--|---|---|

Բանավոր խոսք

Սովորողը կարող է հայերեն՝

- երկխոսել (հարցեր ուղղել խոսակցին և պատասխանել նրա հարցերին),
- մենախոսել (ներկայանալ, պատմել իր մասին, նկարագրել ինչ-որ բան, պատմել կարդացածի մասին):

Բանավոր խոսքի ցուցիչներ (Ա մակարդակ)

| | <i>Երկխոսություն</i> | <i>Մենախոսություն</i> |
|----|---|--|
| Ա2 | <p>Կարողանում է բավարար չափով հասկանալ զրուցակցին և պարզ զրույց վարել:</p> <p>Կարողանում է լեզվական պարզ միջոցներով հաղորդակցվել առօրեական խնդիրների շուրջ (գնումներ անելիս, ինչ-որ բան պատվիրելիս, տրանսպորտից օգտվելիս և այլն):</p> <p>Կարողանում է շատ կարճ երկխոսություն վարել, շնորհավորանքներ ու մաղթանքներ հղել, կարճ ցուցումներ տալ, արտահայտել համաձայնություն</p> | <p>Կարողանում է լեզվական պարզ միջոցներով նկարագրել ընտանիքը, այլ մարդկանց, իր տունը, կյանքի պայմանները, խոսել կրթության, ներկա կամ նախորդ աշխատանքի մասին, պատմել կարդացած որևէ դեպքի մասին:</p> |

| | | |
|----|---|--|
| | կամ անհամաձայնություն, վերաբերմունք որևէ բանի նկատմամբ: | |
| Ա1 | <p>Կարողանում է հաղորդակցվել պարզ միջոցներով, խոսքը զուգակցելով ոչ խոսքային միջոցներով՝ պայմանով, որ զրուցակիցը պատրաստ լինի կրկնելու կամ վերաձևակերպելու խոսքը, խոսի ավելի դանդաղ:</p> <p>Կարողանում է անմիջական կարիքներին վերաբերող պարզ հարցեր տալ և պատասխանել նման հարցերի՝ անհրաժեշտության դեպքում մատնացույց անելով, նկարելով և այլն:</p> <p>Կարողանում է ողջունել խոսակցին, հարցնել որպիսությունը, ինչ-որ բան խնդրել և տալ, շնորհակալություն հայտնել, ներողություն խնդրել, պատասխանել անձնական հարցերի՝ նշելով իր անուն-ազգանունը, ազգությունը, տարիքը և այլն, ինչպես նաև նման հարցեր ուղղել խոսակցին:</p> | <p>Կարողանում է օգտագործել ծանոթ բառեր կամ պարզ արտահայտություններ՝ նկարագրելու համար որևէ մեկին կամ որևէ բան (օգտվելով հաղորդակցման ոչ խոսքային միջոցներից):</p> <p>Կարողանում է հիմնական անձնական տեղեկություններ հայտնել իր մասին (ազգություն, բնակության վայր, տարիք, հասցե և այլն):</p> |

Ընթերցում (խոսքի տեսողական ընկալում)

Սովորողը կարող է հայերեն՝

- կարդացածն ընդհանուր կերպով հասկանալ, խոսքի նյութի մասին ընդհանուր գաղափար կազմել,
- կարդացածի հիման վրա կողմնորոշվել, ցուցումներին և հրահանգներին հետևել,
- նամակներ ու բացիկներ կարդալ,
- կարդացվող տեքստից տեղեկություններ և փաստեր քաղել:

Ընթերցման հմտության ցուցիչներ (Ա մակարդակ)

| | <i>Ընթերցում՝ ընդհանուր ընկալման համար</i> | <i>Ընթերցում կողմնորոշվելու համար (հայտարարությունների և հրահանգների ընթերցում)</i> | <i>Նամակների և բացիկների ընթերցում</i> | <i>Ընթերցում տեղեկություններ ձեռք բերելու համար</i> |
|----|--|---|--|---|
| Ա2 | Կարողանում է հասկանալ ծանոթ թեմաների վերաբերող կարճ, | Կարողանում է հասկանալ առօրյայում գործածվող սարքերի | Կարողանում է հասկանալ անձնական բնույթի պարզ և կարճ | Կարողանում է պարզ շարադրանքով նյութերում գտնել |

| | | | | |
|----|--|---|--|---|
| | <p>պարզ տեքստեր, որոնք գրված են հաճախ հանդիպող բառապաշարով, կապ ունեն իր աշխատանքի կամ ուսումնառության հետ:</p> | <p>օգտագործման ցուցումները, ուսումնական առաջադրանքների պահանջները, հյուրանոցում բնակության կանոնները և այլն՝ անհրաժեշտության դեպքում վերընթերցելով դրանք:</p> | <p>նամակները, շնորհավորական բացիկները, հրավիրատոմսերը, հաղորդագրությունները՝ հարկ եղած դեպքում վերընթերցելով դրանք:</p> | <p>անհրաժեշտ տեղեկություններ, հասկանալ տարբեր իրադարձությունների մասին պատմող նյութեր և այլն՝ համատեքստից կոահելով որոշ բառերի իմաստներ:</p> |
| Ա1 | <p>Գիտի հայերեն տառերը, կարողանում է հասկանալ համառոտ և պարզ տեքստերը (գովազդ, ցուցանակ), ճանաչել իրեն ծանոթ բառեր ու արտահայտություններ (հարկ եղած դեպքում մեկից ավելի անգամներ կարդալով):</p> <p>Կարողանում է կարդալ պատկերներով ուղեկցվող պարզ տեքստեր:</p> | <p>Կարողանում է կարդալ գրավոր կարճ ցուցումները և հետևել դրանց, ցուցանակները (օրինակ՝ փողոցի անվանումներ, դռներին փակցված ցուցանակներ)՝ անհրաժեշտության դեպքում վերընթերցելով:</p> | <p>Կարողանում է հասկանալ իրեն ծանոթ բառեր և պարզ նախադասություններ, բացիկներում գրված պարզ մաղթանքներ, ծանոթ բառերով գրված կարճ հաղորդագրություններ:</p> | <p>Կարողանում է կարճ տեքստերում գտնել անհրաժեշտ տեղեկություններ (օրինակ՝ գտնվելու վայրը, միջոցառման ժամը, մասնակիցների կամ կազմակերպիչների անունները և այլն):</p> |

Գրավոր խոսք

Սովորողը կարող է հայերեն՝

- գրավոր հաղորդել անձնական տվյալներ և պարզ տեղեկություններ, լրացնել հարցաթերթիկներ,
- գրել պարզ նամակներ և կարճ հաղորդագրություններ,
- գրառումներ անել,
- գրել հակիրճ ստեղծագործական տեքստ:

Գրավոր խոսքի ցուցիչներ (Ա մակարդակ)

| | <i>Անձնական տվյալներ և պարզ տեղեկություններ</i> | <i>Նամակներ և կարճ հաղորդագրություններ</i> | <i>Գրառումներ</i> | <i>Ստեղծագործական հակիրճ տեքստ</i> |
|----|---|---|--|---|
| Ա2 | Կարողանում է գրավոր ձևով փոխանցել անձնական տեղեկություններ, լրացնել ձևաթղթեր: | Կարողանում է գրել անձնական նամակներ, կարճ հաղորդագրություններ, անել գրառումներ: | Կարողանում է գրել հասարակ արտահայտություններ և նախադասություններ՝ կապակցելով <i>և, ու, կամ, իսկ, որովհետև</i> և այլ շաղկապներով: | Կարողանում է պարզ արտահայտություններով և նախադասություններով գրավոր պատմել իր ընտանիքի, աշխատանքի, կենցաղի մասին: |
| Ա1 | Կարողանում է արտագրել բառեր և նախադասություններ, ձևաթղթերում լրացնել ամսաթվեր, անուն-ազգանուն, հասցե, տարիք և այլն: | Կարողանում է գրել շատ կարճ նամակներ: | Կարողանում է գրել շատ պարզ, չկապակցված արտահայտություններ ու նախադասություններ: | Կարողանում է գրել հասարակ արտահայտություններ և կարճ նախադասություններ իր և այլ անձանց մասին (օրինակ՝ որտեղ են ապրում, ովքեր են ընտանիքի անդամները): |

Մարդն իր մայրենի լեզուն սովորում է սկզբում **լսելով**, հետո սկսում է **խոսել**, ավելի ուշ՝ **կարդալ** և, վերջապես, **գրել**: Սակայն նոր լեզու սովորելիս լավագույն եղանակը այս չորս հմտությունները համաչափ ու հավասարակշռված ձևով զարգացնելն է:

Լեզվական գիտելիք Հնչյունաբանություն, ուղղագրություն և ուղղախոսություն

Հաշվի առնելով հայերենի հնչյունական կազմի յուրահատկությունները՝ լեզվի ուսուցման սկզբնական իսկ փուլում պետք է ձևավորվեն սովորողների արտասանական հմտությունները: Մասնավորապես ուշադրություն պետք է դարձնել հայերենին բնորոշ այն հնչյուններին, որոնք չկան սովորողի առաջին լեզվում (օրինակ՝ խուլ հնչյունները՝ *պ, կ, տ, ծ, ճ*, անգլիախոսների դեպքում, *փ, ք, թ, ծ, ճ, հ, ը* հնչյունները ռուսախոսների դեպքում և այլն):

Հայերենի ուսուցումը, ինչպես օտար լեզուների պարագայում, սկսվում է բանավոր խոսքից, որի ընթացքում ոչ միայն յուրացվում են պարզագույն խոսքային նմուշներ, այլև ձևավորվում են սովորողի արտասանական հմտությունները: Սակայն թերևս նպատակահարմար է զուգահեռ սկսել նաև գրուսուցումը՝ հաշվի առնելով հայերեն տառերի յուրահատկությունը և հայոց այբուբենի տարբերությունը լատինագիր և կյուրեղագիր այբուբեններից:

Հայերեն հնչյունների արտասանության և գրության համաժամանակյա ուսուցումը, իրենց կազմում ուսուցանվող հնչյուններն ունեցող բառերի յուրացումը կնպաստեն դրանք խոսքում ճանաչելուն, միաժամանակ նաև այդ բառերի ուղղագրության յուրացմանը:

Արտասանական և ուղղագրական հմտությունների ձևավորման այս փուլում գաղափար է տրվում նաև բաղաձայնների միջև արտասանվող, բայց չգրվող *ը*-ի մասին, որի ընկալումն ու արտասանության հմտությունը աստիճանաբար ձևավորվում են համապատասխան վարժությունների միջոցով: Այդպես էլ հնչյունափոխության դեպքերը: Սրանք ևս կարևոր են բանավոր խոսքում հնչյունափոխված բառերը ճանաչելու և ընկալելու համար:

Ա մակարդակում սովորողը պետք է դրսևորի հետևյալ հմտությունները.

Հնչյունական

- իմանա հայերենի հնչյունները
- հնարավորինս ճիշտ արտասանի սովորած բառերը (մանավանդ իրենց կազմում որոշ ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայններ, ինչպես նաև *ռ, ղ, հ* բաղաձայններ ունեցողները)
- կարողանա ճիշտ արտասանել չգրվող *ը*-ով բառերը
- գաղափար ունենա հայերենի շեշտի մասին և կարողանա համապատասխան շեշտադրությամբ արտասանել բառերը
- նախադասությունների մեջ ճանաչի ուրիշների արտասանած բառերը
- համապատասխան հնչերանգով կարդա պատմողական և հարցական նախադասությունները
- հայերենին բնորոշ շեշտադրությամբ և համապատասխան հնչերանգով բարձրաձայն կարդա առանձին բառեր, նախադասություններ և պարզ տեքստեր
- գաղափար ունենա հնչյունափոխության մասին, բաղադրյալ բառերի կամ բառաձևերի մեջ ճանաչի հնչյունների փոփոխությունը

Գրային

- ճանաչի հայերեն այբուբենի տառերը և իմանա դրանց գրությունը
- արտագրի բառեր, բառակապակցություններ և նախադասություններ
- գրի առնի լսած բառերը և բառակապակցությունները
- նոր բառեր լսելիս ճշտի դրանց գրության ձևը

Բառապաշար

Ա մակարդակում սովորողը պետք է՝

- հնարավորինս ճիշտ արտասանի բառերը և իմանա դրանց նշանակությունները
- հասկանա սովորած բառերը ուրիշի խոսքում (եթե արտասանվում են դանդաղ և հստակ)
- իմանա սովորած բառերի կապակցելիությունը և այդ բառերով բառակապակցություններ
- իմանա բարեկիրթ խոսքի միավորներ (դիմելաձևեր, ողջույնի, հրաժեշտի բառեր և արտահայտություններ, շնորհակալություն հայտնելու և ներողություն խնդրելու համար գործածվող բառեր ու բառակապակցություններ և այլն)
- ընթերցելիս կամ ուրիշի խոսքը լսելիս կռահի ծանոթ արմատներ, նաև հաճախ հանդիպող ածանցներ (ան-, -ություն, -որդ, -ային, -ական, -ակ, -իկ, -երեն և այլն) ունեցող բառերի իմաստները
- գործածի սովորած բառերը բառակապակցություններում կամ նախադասություններում
- իմանա ձայնարկություններ և վերաբերականներ, քանի որ դրանք հիմնականում կարճ են, երբեմն նման են օտար լեզուներում եղածներին, նաև սովորողին հաճախ օգնում են արտահայտելու վերաբերմունքը ինչ-որ բանի նկատմամբ կամ զգացումները (օ՛, ա՛, ո՛ւֆ, վա՛յ և այլն, այո, ոչ, իհարկե, երևի և այլն):

Քերականություն

Քերականական իրողությունների մատուցումը պետք է բխի ուսուցանվող խոսքային կառույցներից և այն համատեքստերից կամ իրադրություններից, որոնցում դրանք գործածվում են: Այսպես՝ անձնական տեղեկություններ հաղորդելու և ստանալու համար սովորողը նախ և առաջ պետք է յուրացնի անձնական (ուղղականի և սեռականի ձևեր), հարցական (*ո՞վ, ի՞նչ*) դերանունները և օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերը, իր իմացած լեզուները նշելու, ընտանիքի մասին պատմելու համար սովորի *գիտեմ, ունեմ* անկանոն բայերի խոնարհումը և այլն:

Քերականական իրողությունների խոսքային նմուշներն ըստ ոլորտների և խոսքային իրադրությունների ավելի մանրամասն ներկայացված են Աղյուսակ 1-ում: Ա մակարդակում սովորողը պետք է տիրապետի քերականական ստորև նշված գիտելիքներին և դրսևորի հետևյալ հմտությունները՝ ըստ խոսքի մասերի¹:

¹ Յուրաքանչյուր խոսքի մասին առնչվող բառապաշարային նյութն ընտրելիս պետք է հիմնվել գլխավորապես նվազագույն բառապաշարի վրա:

| Ա1 մակարդակ | Ա2 մակարդակ |
|--|--|
| Ձևարանություն | |
| Գոյական | |
| <p><i>Սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ իմանա գոյականի որոշիչ հոդը (ը, ն) և նրա գործածության առանձնահատկությունները, ▪ տարբերի հասարակ և հատուկ անունները, գրավոր խոսքում ճիշտ գրի դրանք, ▪ կարողանա կազմել և գործածել սովորած գոյականների հոգնակիի ձևերը. ▪ իմանա նյութ ցույց տվող անհոգնական գոյականները, ▪ իմանա իր սովորած գոյականների թեք հոլովաձևերը (ըստ անհրաժեշտության և թեմայով պայմանավորված): | <p><i>Սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ կարողանա խոսքում գործածել գոյականները որոշյալ և անորոշ առումներով, ▪ կարողանա ճիշտ գրել բաղադրյալ հատուկ անունները, ▪ իմանա ներ-ով հոգնակիի ձև ունեցող միավանկ բառերը և մեկուկես վանկանի բառերի հոգնակին, ▪ իմանա հայերենի անհոգնական գոյականները և հոգնակիով դրանց գործածության դեպքերը, ▪ կազմի գոյականների թեք հոլովաձևերը, ▪ իմանա հոլովաձևերի և կապային կառույցների համարժեքության դեպքերը: |
| Ածական | |
| <p><i>սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ իմանա որակական ածականներ (գունանուններ, մարդկանց, իրեր բնութագրող ածականներ և այլն), ▪ կարողանա սովորած ածականները կապակցել իր իմացած գոյականների հետ՝ կազմելով բառակապակցություններ: | <p><i>սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ իմանա որակական և հարաբերական ածականներ, ▪ կազմի որակական ածականների համեմատության աստիճանները, ▪ իմանա հարաբերական ածականներ, ճանաչի դրանք կազմող ածանցները (-ա-կան, -ային, -յա, -ե), ▪ կարողանա որակական և հարաբերական ածականները կապակցել գոյականների հետ՝ կազմելով բառակապակցություններ: |
| Թվական | |
| <p><i>Սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ իմանա քանակական թվականները (միավորներ, տասնավորներ, հարյուր, հազար), ▪ իմանա դասական թվականներ: | <p><i>Սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ իմանա քանակական թվականները (միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ, հազարավորներ, միլիոն), ▪ 1-ից բարձր թվականները գործածի գոյականների հետ, ▪ կարողանա քանակական թվականներից դասական թվականներ կազմել: |

| Դերանուն | |
|---|---|
| <p><i>Սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ իմանա անձնական դերանունները և կարողանա դրանք գործածել ուղղական և սեռական հոլովածներով, ▪ կարողանա գործածել <i>սա, դա, նա</i> ցուցական դերանուններն ու դրանց հոգնակիի ձևերը, ինչպես նաև տեղ, ձև, չափ մատնանշող դերանունները, ▪ իմանա <i>ո՞վ</i> և <i>ի՞նչ</i> դերանունների առանձնահատկությունը օտար լեզուների համեմատությամբ (հոգնակիով գործածությունը), կարողանա հարցեր ձևակերպել՝ գործածելով հարցական դերանուններ, ▪ իմանա որոշյալ (<i>ամեն, բոլոր</i>), անորոշ (<i>մի, ինչ-որ</i>) ժխտական (<i>ոչ մեկը, ոչ մի, ոչինչ</i>) դերանունները: | <p><i>Սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ անձնական դերանունները գործածի ուղիղ և թեք հոլովածներով, ▪ իմանա ցուցական (<i>սա, դա, նա, այս, այդ, այն</i>) դերանունների գործածության առանձնահատկությունները (օտար լեզուների համեմատությամբ), ինչպես նաև տեղ, ձև, չափ մատնանշող դերանունները և կարողանա խոսքում գործածել դրանք, ▪ կարողանա խոսքում գործածել հարցական դերանունները տարբեր հոլովածներով (<i>ո՞վ-ո՞ւմ - ումի՞ց, ի՞նչ-ինչի՞-ինչի՞ն-ինչի՞ց-ինչո՞վ, ե՞րբ-երբվանի՞ց, որտե՞ղ-որտեղի՞ց</i>), ▪ իմանա որոշյալ (<i>ամեն, բոլոր, ամբողջ</i>), անորոշ (<i>մի, ինչ-որ, մի քանի, ուրիշ</i>), ժխտական (<i>ոչ ոք, ոչ մի, ոչինչ, ոչ մեկը</i>) դերանունները և կարողանա գործածել խոսքում: |
| Հոդ | |
| | <p><i>Սովորողը պետք է՝</i></p> <ul style="list-style-type: none"> ▪ գաղափար ունենա ստացական հոդերի մասին, ▪ կարողանա խոսքում գործածել ստացական հոդերը: |
| Բայ | |
շնորհավորել
շտապել
ուղարկել
ուշանալ
ուտել
պատասխանել
պատմել
պատվիրել
պատրաստել
պարապել
պարել
սանրել
 սանրվել
սիրել
սկսել
 սկսվել
սպասել
ստանալ
ստուգել
վազել
վարել
վարձել
վեր կենալ
վերջանալ
 վերջացնել
վերցնել
վճարել
տալ
տեսնել
ցանկանալ

ցավել
ցատկել
ցույց տալ
ուզել
ուտել
ուղղել
փակել
փորձել
քամել
քայլել
քանդել
քաշել
քնել
քշել

Անկանոն և պակասավոր բայեր

եմ
կամ, լինել
գիտեմ, գիտենալ
ունեմ, ունենալ

15. Թիվ, թվային կարգ

15.1 Թիվ, քանակ

▪ Միավորներ

մեկ
երկու
երեք
չորս
հինգ
վեց
յոթ
ութ
ինը

▪ Տասնավորներ

տասը
տասնմեկ
տասներկու
տասներեք
տասնչորս
տասնհինգ
տասնվեց
տասնյոթ
տասնութ

տասնինը
քսան

քսանմեկ
քսաներկու
քսաներեք
քսանչորս
քսանհինգ
քսանվեց
քսանյոթ
քսանութ
քսանինը

երեսուն

քառասուն

հիսուն

վաթսուն

յոթանասուն

ութսուն

իննսուն

▪ Հարյուրավորներ

հարյուր

երկու հարյուր

երեք հարյուր

չորս հարյուր

հինգ հարյուր

վեց հարյուր

յոթ հարյուր

ութ հարյուր

ինը հարյուր

▪ Հազարավորներ

հազար

երկու հազար

երեք հազար

չորս հազար

հինգ հազար

վեց հազար

յոթ հազար

ութ հազար

ինը հազար

տասը հազար

15.2 Թվային կարգ

առաջին

երկրորդ

երրորդ
չորրորդ
հինգերորդ
վեցերորդ
յոթերորդ
ութերորդ
իններորդ
տասներորդ
տասնմեկերորդ
տասներկուերորդ

16. Դերանուններ

16.1 Անձ մատնանշող

ես

իմ

մենք

մեր

դու

քո

դուք / Դուք

ձեր / Ձեր

նա / ինքը

նրա

նրանք / իրենք

նրանց

16.2 Առարկա մատնանշող

սա

սրանք

դա

դրանք

նա

նրանք

այս

այդ

այն

նույն

16.3 Ձև մատնանշող

այսպես / էսպես (ժող.)

այդպես / էդպես (ժող.)

այնպես / էնպես (ժող.)

նույնպես

16.4 Չափ մատնանշող

այսքան / էսքան (ժող.)

տասներեքերորդ
տասնչորսերորդ
տասնհինգերորդ
տասնվեցերորդ
տասնյոթերորդ
տասնութերորդ
տասնիններորդ
քսաներորդ

այդքան / էդքան (ժող.)

այնքան / էնքան (ժող.)

նույնքան

16.5 Տեղ մատնանշող

այստեղ / էստեղ (ժող.)

այդտեղ

այնտեղ / էնտեղ (ժող.)

16.6 Հարցում արտահայտող՝

▪ առարկայի մասին

ո՞վ / ովքե՞ր

ո՞ւմ

ումի՞ց

ի՞նչ / ինչե՞ր

ինչի՞ց

ինչո՞վ

▪ տեղի մասին

որտե՞ղ

որտեղի՞ց

որտեղո՞վ

ո՞ր

▪ ժամանակի մասին

ե՞րբ

երբվանի՞ց

▪ չափի և քանակի մասին

որքա՞ն

ինչքա՞ն

քանի՞

▪ **ձևի մասին**

ինչպե՞ս
ո՞նց (ժող.)

▪ **նպատակի, պատճառի մասին**

ինչո՞ւ

16.7 Առարկաների կամ անձերի որոշյալ ամբողջություն ցույց տվող բոլոր ամեն ամբողջ

16.8 Անորոշ անձ, առարկա կամ անորոշ հատկություն ցույց տվող մի ինչ-որ ինչ-որ մեկը ինչ-որ բան ուրիշ

16.9 Ժխտվող առարկա կամ անձ ցույց տվող ոչ ոք ոչինչ ոչ մի ոչ մեկը

17. Գործողությունների բնութագիր՝

▪ **ըստ տեղի**

հետ
առաջ
ներս
դուրս
վերև
ներքև

▪ **ըստ ժամանակի**

միշտ
սովորաբար
երբեմն
հաճախ
երբեք

▪ **ըստ ձևի**

արագ
դանդաղ
կամաց

▪ **ըստ չափի**

շատ
քիչ

18.Կապեր

տակ
վրա
մեջ
մոտ
կողքին
հեռու
առաջ
հետ
հետև
մինչև
առանց

19.Շաղկապներ

և
ու
բայց
սակայն
իսկ
կամ
թե
որ
որպեսզի
որովհետև

20. Վերաբերականներ

այո
ոչ
իհարկե
երևի
գուցե
ափսոս
միայն

21. Չայնարկություններ

օ՛
օ՛ֆ
հա՛

հա՞
վա՛յ
վա՛խ
ո՛ւֆ

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ (Ա1-Ա2 ՄԱԿԱՐԴԱԿ)

Ա

ազգանուն
ազգություն

ազնիվ

աթոռ

ականջ

ակնոց

ակումբ

աղ

աղի

աղջիկ

աղվես

ամաչկոտ

ամառ

ամբողջ

ամբողջական

ամեն

ամեն ինչ

ամիս

ամիս-ամսաթիվ

ամուսին

ամուսնացած

ամպամած

ամսագիր

ամրագրել

ամրոց

այգի

այդ

այդպես

այդտեղ

այդքան

այն

այնպես

այնտեղ

այնքան

այո

այս

այսպես

այստեղ

այսքան

այսօր

այցելել

անազնիվ

անգամ

անգլիացի

անել

անկյուն

անհանգստանալ

անհաջող

անձնագիր

անձրև

անձրևային

անորակ

անուն

անջատել

անվճար

անտառ

անցյալ

անցնել

անցորդ

անցում

աշակերտ

աշխատանք

աշխատավայր

աշխատավարձ

աշխատել

աշխատող

աշխարհագրություն

աշուն

աչք

ապահովագրություն

ապուր

ապրել

ապրես («կեցցես»)

ապրիլ

աջ

առայժմ

առաջ

առաջարկել

առաջին

առաստաղ

առավոտ

առավոտյան

առատ

առյուծ
առնել
առողջ
ասել
աստղ
Աստված
ավազ
ավանակ
ավարտել
ավտորուս
ավտոկայան
ավտոմեքենա
ատամ
արագ
արական
արդուկ
արդուկել
արթնանալ
արթուն
արժե
արժենալ
արծաթագույն
արձակուրդ
արմունկ
արջ
արտագրել
արև
արևելք
արևմուտք
արևոտ
ափ
ափսե
ափսոս

Բ

բաղ
բաղրիջան
բազկաթոռ
բազմոց
բաժակ
բաժանված
բաժին
բալ
բակ
բաղնիք

բայց
բանալի
բանկ
բառարան
բարակ
բարդ
բարեկամ
բարի
բարկանալ
բարձ
բարձր
բարձրանալ
բաց
բացակա
բացել
բացիկ
բացիչ
բարև
բարևել
բերան
բերդ
բերել
բժիշկ
բնակարան
բնություն
բոլոր
բոլորովին
բոյով (խսկց.)
բրինձ
բուժել
բուժում
բուժքույր
բույս

Գ

գազ (նաև՝ «գազօջախ»)
գազար
գալ
գայլ
գարեջուր
գարուն
գդալ
գետ

գերմանացի
գին
գինի
գիշեր
գիտեմ
գիտենալ
գիրք
գլխաշոր
գլխարկ
գլուխ
գյուղ
գնալ
գնացք
գնել
գնում
գոլ
գոհ
գոտի
գործ
գործընկեր
գործողություն
գտնել
գրականություն
գրապահարան
գրասեղան
գրել
գրիչ
գուցե

Դ

դա
դահլիճ
դանակ
դանդաղ
դաշնամուր
դաշտ
դաս
դասագիրք
դասախոս
դասամիջոց
դասարան
դարակ
դդմիկ
դեկտեմբեր

դեղ
դեղ խմել
դեղատուն
դեղին
դեղձ
դեմք
դեռահաս
դերասան
դժգոհ
դժվար
դիմավորել
դիտել
դպրոց
դրամ
դու
դուդուկ
դուռ
դուր գալ
դուրս
դուրս գալ
դուք

Ե

եթե
ելակ
ելք
եկեղեցի
եղանակ
եղբայր
եղնիկ
եմ (օժանդակ բայ)
ես
եսիմ (ժող.)
երաժշտություն
երբ
երբեմն
երբեք
երգ
երգել
երեխա
երեկ
երեկո
երեկոյան

երեկոյթ
երես
երեսուն
երեք
երեքշաբթի
երթուղի
երիտասարդ
երկար
երկինք
երկիր / Երկիր
երկնագույն
երկրորդ
երկու
երկուշաբթի
երջանիկ
երրորդ
երևի
եփել

Ձ

զանգել
զարթնել
զբաղվել
զբոսայգի
զբոսանք
զբոսնել
զգալ
զգեստ
զգույշ
զրո
զուգարան

Է

էդպես (ժող.)
էդքան (ժող.)
էժան
էնպես (ժող.)
էնտեղ (ժող.)
էնքան (ժող.)
էշ
էջ
էսպես (ժող.)
էստեղ (ժող.)

էսքան (ժող.)
էսօր (ժող.)

Ը

ընդմիջում
ընդունել
ընթել
ընթրիք
ընկեր
ընկերուհի
ընկնել
ընտանիք
ընտրել

Թ

թան
թանգարան
թանկ
թառ
թաս
թավա
թավջութակ
թատրոն
թարգմանիչ
թարմ
թաց
թափել
թե
թեթև
թեյ
թեյնիկ
թենիս
թերթ
թերթել
թեք
թեքվել
թթվասեր
թիվ
թխվածք
թռչուն
թվական
թութ
թուղթ

թսյլ
թսյլ տալ
թուրք
թուփ
թև

Ժ

ժամ
ժամանել
ժամանում
ժամացույց
ժողով

Ի

ինչ
իգական
իհարկե
ինը
իններորդ
իննսուն
ինչ-որ
ինչպես
ինչպիսի
ինչքան
ինչու
իջնել
իսկ
իսպանացի
իտալացի
իրավաբան

Լ

լայն
լավ
լավաշ
լաց լինել
լեզու
լեհ
լեհերեն
լեռ
լիճ
լիքը (խսկց.)

լոբի
լոլիկ
լող
լողալ
լողանալ
լողավազան
լողափ
լսարան
լսել
լվանալ
լվացվել
լվացք
լրագրող
լրիվ
լցնել
լույս (նաև՝ «էլեկտրականություն»)
լուսանկար
լուսին
լուր
լուրջ

Խ

խաղ
խաղալ
խանութ
խաշ
խաչ
խաչմերուկ
խաչքար
խելացի
խելոք
խմել
խնդրանք
խնդրել
խնդրեմ
խնձոր
խոզ
խոհանոց
խոշոր
խոսել
խոտ
խորոված
խումբ

Ծ

ծաղիկ
 ծանոթ
 ծանոթանալ
 ծանոթացնել
 ծանր
 ծառ
 ծափ տալ
 ծեր
 ծիրան
 ծիրանագույն
 ծխել
 ծնվել
 ծնունդ
 ծով
 ծովափ
 ծրար
 ծուլ
 ծունկ

Կ

կաթ
 կաթիլ
 կաթնաշոռ
 կաթսա
 կաղամբ
 կամ
 կամաց
 կամաց-կամաց
 կամորջ
 կայարան
 կայծակ
 կայք
 կանաչ
 կանաչի
 կանգ առնել
 կանգառ
 կանգնել
 կանչել
 կապույտ
 կառուցել
 կատու
 կարագ
 կարգին

կարդալ
 կարծել
 կարկանդակ
 կարկուտ
 կարճ
 կարմիր
 կարտոֆիլ
 կարևոր
 կենդանի
 կենսաբանություն
 կես
 վերջանալ

կեսօր
 կիթառ
 կին
 կինո
 կիսատ
 կիսել
 կիրակի
 կլոր
 կղզի
 կներեք (խսկց.)
 կնունք
 կշռել
 կոլոտ (խսկց.)
 կոկորդ
 կողք
 կողքին
 կոշիկ
 կոշկակար
 կոշտ
 կոպիտ
 կով
 կոտրել
 կպցնել
 կտավ
 կտրատել
 կտրել
 կտրոն
 կտրտել
 կրկես
 կրկնել
 կրոն
 կրպակ

կուշտ
կուրս

Հ

հա (խսկց.)
հա՛
հաբ
հագնել
հագուատ
հագ
հազար
հալվել
հաղարջ
հաղորդագրություն
հաղորդում
հաճախ
հաճելի
համալսարան
համակարգիչ
համաձայն
համար (նաև «հեռախոսահամար»)
համար
համեստ
համերգ
համերգասրահ
համեցե՛ք
համով
հայ
հայելի
հայերեն
հայր
հայրանուն
հայրիկ
հանգիստ
հանգստանալ
հանգստյան օր
հանդիպել
հանդիպում
հանել
հանձնել
հաշիվ
հաջող
հաջողություն
հասկանալ
հասնել

հաստ
հստատ
հասցե
հավ
հավանել
հավատ
հավատալ
հավաքել
հավաքույթ
հատակ
հարավ
հարգելի
հարթ
հարթուկ (խսկց.)
հարթուկել (խսկց.)
հարկ
հարյուր
հարսանիք
հարց
հարց տալ
հարցնել
հաց
հեժանիվ
հեղեղ
հեշտ
հեռախոս
հեռու
հեռուստացույց
հետ
հետաքրքրվել
հետո
հիմար
հին
հինգ
հինգերորդ
հինգշաբթի
հիշել
հիսուն
հիվանդ
հիվանդանոց
հյուս
հյուսիս
հյուր
հյուրանոց
հյուրասենյակ

հյուրատուն
հնդիկ
հոգի
հոգնել
հոդված
հոկտեմբեր
հոպար (խսկց.)
հոսանք
հորաքույր
հորեղբայր
հպարտ
հրապարակ
հրավիրել
հրել
հուզվել
հուլիս
հույն
հույս
հույս ունենալ
հունարեն
հունիս
հունվար
հուտվ

Ձ

ձախ
ձեռք
ձի
ձմեռ
ձմերուկ
ձյուն
ձոր
ձու
ձուկ

Ճ

ճակատ
ճամպրուկ
ճամփորդել
ճանապարհ
ճանապարհել
ճանճ
ճաշ

ճաշասեղան
ճաշացանկ
ճաշել

Մ

մազ
մաթեմատիկա
մածուն
մահճակալ
մահմեդական
մաղթել
մայթ
մայիս
մայր
մայրիկ
մանկապարտեզ
մանուկ
մանր
մառախուղ
մասին
մասնագիտություն
մասնակցել
մատ
մատանի
մատիտ
մատյան
մատուցող
մարդ
մարզադաշտ
մարզասրահ
մարզվել
մարմին
մարտ («կռիվ»)
մարտ (ամիս)
մաքրել
մեծ
մեկ
մեկնել
մեկնում
մեղմ
մեղու
մենք
մեջ
մեջք

մետրո
մեքենա
մի
մի քանի
միայն
միացնել
միլիարդ
միլիոն
մինչ
մինչև
միշտ
միջատ
միջին
միս
միրգ
մյուս
մնալ
մոլորակ
մոխրագույն
մոծակ
մոշ
մոռանալ
մոտ (նաև «մոտավորապես»)
մորաքույր
մտնել
մրջյուն
մութ
մուտք

Յ

յոթ
յոթանասուն
յոթերորդ

Լ

նա
նախ
նախաճաշ
նախաճաշել
նամակ
նայել
նապաստակ
նավ

նավակ
նարինջ
նարնջագույն
նեղ
ներել
ներկա
ներկայանալ
ներկայացնել
ներողություն
ներս
ներքև
նիհար
նկար
նկարել
նկարչություն
ննջարան
նոյեմբեր
նոր
նորից
նորոգել
նստել
նվագել
նվեր
նվիրել
նրանք
նույն
նույնպես
նույնքան
նուռ

Շ

շաբաթ
շալվար (խսկց.)
շախմատ
շապիկ
շատ
շարժվել
շաքար
շաքարավազ
շենք
շերեփ
շեփոր
շիշ
շնորհակալ

շնորհակալություն
շնորհավորել
շոգ
շուկա
շուն
շտապել
շտապօգնություն

Ո

ոնց (ժող.)
ով
ոչ
ոչ մեկը
ոչ մի
ոչ ոք
ոչինչ
ոչխար
ոսկեգույն
ոսպ
ոստիկան
ոտք
որ
որակյալ
որովհետև
որոշել
որպեսզի
որտեղ
որքան

Չ

չամիչ
չամուսնացած
չար
չարժե
չէ (խսկց.)
չինարեն
չինացի
չիր
չոր
չորեքշաբթի
չորս
չորրորդ

Պ

պահարան
պաղպաղակ
պայուսակ
պանիր
պապ
պապիկ
պառկել
պատ
պատանի
պատառաքաղ
պատասխանել
պատկերասրահ
պատմել
պատմություն
պատշգամբ
պատուհան
պատվեր
պատվիրել
պատրաստել
պար
պարապել
պարել
պարզ
պարոն
պարսիկ
պարսկերեն
պղպեղ
պողոտա
պոմիդոր
պուլպուլակ (ժող.)

Ջ

ջեռոց
ջեռուցում
ջերմաչափ
ջերմություն
ջնջել
ջութակ
ջուր

Ռ

ռադիո
ռուս
ռուսերեն

Ս

սա
սալոր
սակայն
սանր
սանրել
սառել
սառը
սառնարան
սավան
սար
սեխ
սեղան
սենյակ
սեպտեմբեր
սիրել
սիրելի
սիրով
սիրտ
սիրուն
սկսել
սմբուկ
սնունդ
սոված
սովորաբար
սովորել
սպաս
սպասել
սպիտակ
ստամոքս
ստանալ
ստորագրել
ստուգել
սրբել
սրճարան
սրճեփ
սրսկել
սուր
սուրճ
սև

Վ

վա՛խ
վա՛յ
վայր
վագր
վագել
վագք
վաթսուն
վաղը
վաճառել
վաճառող
վայրկյան
վանք
վառել
վատ
վարդագույն
վարել
վարձ
վարձել
վարորդ
վարունգ
վարպետ
վարսավիր
վեր կենալ
վերարկու
վերելակ
վերմակ
վերնաշապիկ
վերջանալ
վերցնել
վերև
վեց
վեցերորդ
վզնոց
վիզ
վճարել
վստահ
վրա
վրան
վրացի

S

տաքատ
 տալ
 տակ
 տաճար
 տանձ
 տասը
 տասներորդ
 տասնինը
 տասնմեկ
 տատ
 տատիկ
 տարեթիվ
 տարեկան
 տարի
 տարիք
 տափակ
 տաք
 տաքանալ
 տաքություն
 տեղ
 տեսնել
 տետր
 տիկին
 տղա
 տղամարդ
 տղմա
 տոմս
 տուն

Բ

բոպե

Յ

ցած ընկնել
 ցածր
 ցանկանալ
 ցավ
 ցավել
 ցավոք
 ցատկել
 ցերեկ

ցը (խսկց.)
 ցտեսություն
 ցրտել
 ցույց տալ
 ցուրտ
 ցուցասրահ

Ու

ու
 ուզել
 ութ
 ութերորդ
 ութսուն
 ուժեղ
 ուղարկել
 ուղեկցել
 ուղիղ
 ուղղել
 ուղղություն
 ունեմ
 ունենալ
 ուշադիր
 ուշանալ
 ուս
 ուսանող
 ուսապարկ
 ուսուցիչ
 ուտել
 ուր
 ուրախ
 ուրբաթ
 ուրիշ
 ուրեմն
 ո՛ւֆ

Փ

փաթիլ
 փակ
 փակել
 փափուկ
 փետրվար
 փոխանցել
 փող

փողոց
փոստ
փոր
փորձել
փոքր
փչել

Ք

քաղաք
քաղցած
քամել
քամի
քամիչ
քայլել
քանդել
քանի
քանոն
քաշել
քառասուն
քար
քարտեզ
քեռի
քերիչ
քեֆ (ժող.)
քիթ
քիմիա
քիչ
քնել

քննություն
քշել
քսան
քսաներորդ
քրիստոնյա
քույր
քույրիկ

Օ

օ՛
օգնել
օգոստոս
օդանավ
օդանավակայան
օղի
օճառ
օտար
օր
օ՛ֆ

Ֆ

ֆիզիկա
ֆիլմ
ֆրանսերեն
ֆրանսիացի

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Բ1 ՄԱԿԱՐԴԱԿ

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Բ1 ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվի տիրապետման Ա2 (տարրական) մակարդակին հաջորդում է Բ1 (միջին) մակարդակը, որն արտացոլում է սովորողի ազատ հաղորդակցվելու և մտքերն արտահայտելու ունակությունը:

Բ1 մակարդակում սովորողը տիրապետում է լեզվական բավարար միջոցների և բավականաչափ բառապաշարի՝ կարողանալով հաղթահարել լեզվական խոչընդոտները և ազատ արտահայտել մտքերը: Ըմբռնում է հաճախ հանդիպող թեմաներին առնչվող և գրական լեզվով ձևակերպված պարզ խոսքի հիմնական իմաստը, հաղորդակցվելիս կիրառում է հաճախադեպ արտահայտություններ, խոսքային կաղապարներ և քերականական կառույցներ: Կարողանում է գրավոր թե բանավոր կապակցված խոսքով պատմել դեպքերի և իրադարձությունների կարևոր դրվագները, խոսել իր կամ ուրիշների կենսափորձից, զրույցի բռնվել կամ երկխոսության մեջ մտնել՝ արտահայտելով սեփական վերաբերմունքն ու տեսակետը: Տևական մենախոսության ժամանակ, սակայն, անխուսափելի են լինում համապատասխան բառեր ու արտահայտություններ, քերականական կառույցներ որոնելու և ինքնաշտկումներ անելու նպատակով խոսքային դադարները:

Բ1 մակարդակի լեզվական նյութը բավականին տարողունակ է: Բառապաշարը ներառում է մեծ թվով համագործածական բառեր և արտահայտություններ, քերականությունը՝ կարևոր ու հիմնական այն բոլոր իրողությունները, որոնք նպաստում են թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքը գրագետ կառուցելուն:

Թեմաներ և ոլորտներ

Բ1 մակարդակի գիտելիքների և կարողությունների ձևավորումն ու զարգացումն էապես կախված են այն համատեքստերից կամ իրադրություններից, որոնցում դրանք գործածվում են: Այս մակարդակի համար կարևորվում են հետևյալ թեմաներն ու հաղորդակցական իրադրությունները՝

- անձնական տեղեկություններ,
- ծանոթություն, շփում,
- տուն, միջավայր, կենցաղ, հանրային ծառայություններ,
- առօրյա. սնունդ, հագուստ, գնումներ, ճաշելու վայրեր,
- նախասիրություններ, հետաքրքրություններ, ժամանց,
- տրանսպորտ, երթևեկություն,
- բժշկություն, առողջություն,
- աշխատանք, աշխատանքային միջավայր,
- բնություն, շրջակա միջավայր,
- արձակուրդ, ճամփորդություն,
- կրթություն,
- սպորտ,

- արվեստ, մշակույթ,
- պետություն, օրենք,
- իրավական համակարգ:

Միջանձնային հարաբերությունների ոլորտ

Սովորողը կարող է՝

- ներկայացնել սեփական անձը՝ անուն-ազգանունը, ծննդյան տվյալները, սեռը, տարիքը, ազգությունն ու քաղաքացիությունը, կրոնական պատկանելությունը,
- պատմել իր ծննդավայրի և բնակության վայրի, ծագման, ծնողների և ընտանիքի մասին,
- խոսել իր կրթության, մասնագիտության և զբաղմունքի մասին,
- ստանալ անձնական բնույթի տեղեկույթ խոսակցի կամ մեկ այլ անձի վերաբերյալ՝ հարցնելով ու ճշգրտելով,
- ծանոթանալիս ներկայանալ՝ խոսելով իր մասնագիտության կամ զբաղմունքի, բնավորության, տրամադրության մասին,
- հետաքրքրվել խոսակցի որպիսությամբ և պատասխանել նրա հարցերին, պատմել մեկ այլ անձի մասին՝ հաղորդելով կենսագրական տեղեկություններ,
- խոսել ընտանեկան և ընկերական հարաբերություններից, սիրուց, փոխադարձ հարգանքից, ժամանցից,
- շնորհավորանքի, մաղթանքի կամ ցավակցության խոսքեր ասել,
- հանդիպման առաջարկ անել, ընդունել կամ մերժել առաջարկը՝ հայտնելով ու հիմնավորելով պատճառը,
- հանդիպման օր ու ժամ պայմանավորվել,
- զրուցել իր կամ խոսակցի (խոսակիցների) գործերից, խնդիրներից,
- արտահայտել վերաբերմունք՝ մտահոգություն, հիացմունք, զարմանք, ինչպես նաև տեսակետ:

Սոցիալ-կենցաղային ոլորտ

Սովորողը կարող է՝

- նկարագրել տունը կամ բնակարանը, բակը, այգին, տան կահավորանքն ու կենցաղային պայմանները,
- խոսել կենցաղային սարքերից, կոմունալ և այլ տեսակի ծառայություններից,
- խոսել ընտանիքի առօրյայից, հոգսերից ու կարիքներից, նման տեղեկույթ ստանալ խոսակցից՝ տալով ճշգրտող հարցեր,
- հայտնել գոհունակություն կամ դժգոհություն բնակարանային պայմաններից կամ ծառայությունների որակից,
- ներկայացնել առօրյան, խոսել առօրեական անելիքների ու հոգսերի մասին,
- խանութում կամ շուկայում գնումներ անել՝ հետաքրքրվելով ու հարցնելով անհրաժեշտ ապրանքատեսակի առկայության մասին՝ նկարագրելով այն,

հեշտությամբ կարդալով գնապիտակները, ստանալով տվյալ ապրանքի մասին անհրաժեշտ տեղեկություններ, խնդրելով անհրաժեշտ քանակություն, շուկայում սակարկելով,

- ռեստորանում կամ սրճարանում ուսումնասիրել ճաշացանկը և գրեթե առանց դժվարության օգտվել դրանից, ընտրել ու պատվիրել՝ անվանելով կամ նկարագրելով նախընտրած ճաշատեսակն ու ըմպելիքը, վճարում կատարել,
- ներկայացնել ծագած խնդիրը և պարզաբանում ստանալ,
- շնորհակալություն հայտնել մատուցված որակյալ ծառայության համար կամ բողոքել վատ սպասարկումից,
- նախաճաշելու, ճաշելու կամ ընթրելու առաջարկություն անել, ընդունել կամ մերժել առաջարկը, հիմնավորել մերժման պատճառը,

- պատմել իր նախասիրությունների ու հետաքրքրությունների մասին և նման տեղեկություններ ստանալ խոսակցից,
- պատմել, թե որտե՛ղ է սիրում անցկացնել հանգստյան օրերը կամ առհասարակ ազատ ժամանակը,
- նկարագրել, թե ո՛ւմ հետ և ինչպե՛ս է կազմակերպում ժամանցը, նման տեղեկություններ ստանալ գրուցակցի կամ մեկ այլ անձի մասին,
- գրավոր և բանավոր շնորհավորանքներ հղել ազգային և ընտանեկան տոների առիթով, պատասխանել շնորհավորանքներին,
- հյուրասիրություն կազմակերպել՝ հրավերի խոսք ձևակերպելով,
- հյուրընկալելու և հյուրընկալվելու ժամանակ ազատ հաղորդակցվել,
- ընդունել կամ մերժել ուրիշների հրավերը կամ առաջարկը, պատճառաբանել մերժումը,

- առանց դժվարության կողմնորոշվել քաղաքում՝ հարցնելով կամ հայտնելով անհրաժեշտ հաստատության կամ վայրի հասցեն,
- նկարագրել անհրաժեշտ վայրը հասնելու ճանապարհը կամ տեղեկանալ դրա մասին,
- հարցնել կամ պատասխանել, թե տրանսպորտային ի՛նչ միջոցով կարելի է գնալ, ո՛ր կանգառում պետք է իջնել, որքա՛ն է ուղեվարձը, ինչպե՛ս պիտի կատարվի վճարումը և այլն,
- հասկանալ օդանավակայանում, երկաթուղային կայարանում, ավտոկայանում և ավտոկանգառներում վահանակների, ցուցանակների գրությունները և բարձրախոսով հաղորդվող տեղեկությունները մեկնումների, ժամանումների և ուշացումների մասին,
- հետևել հրահանգներին և ցուցումներին,
- կարդալ և հասկանալ չվացուցակներում առկա տեղեկությունները,
- անհրաժեշտության դեպքում օգնություն խնդրել՝ բացատրելով ծագած խնդիրն ու պարզաբանում ստանալով,
- շնորհակալություն հայտնել օգնության համար,
- խոսել ուղևորությանն առնչվող ծառայությունների որակի մասին, գոհունակություն կամ դժգոհություն հայտնել,

- խոսել իր մասնագիտության և դրա նեղ ուղղվածության մասին՝ նկարագրելով գործի բնույթն ու բովանդակությունը,
 - նկարագրել աշխատավայրը, աշխատանքային միջավայրը,
 - պատմել աշխատավայրում գործընկերային շփման և ղեկավարության հետ հարաբերությունների մասին,
 - խոսել աշխատանքային վարքականոնի և պահանջների մասին,
 - բնութագրել իրեն և գործընկերներին՝ որպես աշխատողների,
 - համապատասխան կայքերում կամ հայտարարությամբ աշխատանք փնտրել,
 - մասնակցել աշխատանքի ընդունման նպատակով անցկացվող հարցազրույցների,
 - աշխատանքի ընդունվելու համար ներկայացնել ինքնակենսագրությունը և աշխատանքային փորձառությունը,
 - շփվել թղթային կամ էլեկտրոնային նամակագրությամբ,
-
- հայտնել արձակուրդն ու հանգիստը որևէ տեղ անցկացնելու որոշման կամ ցանկության մասին,
 - տեղեկություններ ստանալ կամ հայտնել հանգստի որևէ վայրի, կեցության պայմանների և ուղևորությանն առնչվող տարբեր մանրամասների մասին,
 - տեղեկանալ, թե ի՞նչ էքսկուրսիաներ կան, ճշտել տևողությունը, ծրագիրը, արժեքը, ուղեգիր կամ տոմս պատվիրել, հյուրանոց ամրագրել և բնակարան վարձել, անհրաժեշտության դեպքում չեղարկել,
 - տեղեկատու աղբյուրներից տեղեկություններ ստանալ Հայաստանի տեսարժան վայրերի մասին, ճշտել այցելությունների հնարավոր տարբերակները,
 - նկարագրել, թե ինչպե՞ս անցավ ուղևորությունը, պատմել տեսարժան վայրեր այցելությունների, ստացած տպավորությունների, արկածների և հիշարժան դրվագների մասին,
 - հարցնել և տեղեկանալ նաև խոսակցի կամ մեկ այլ անձի անցկացրած արձակուրդի, հանգստի կամ ճամփորդության մասին:

Սոցիալ-մշակութային ոլորտ

Սովորողը կարող է՝

- տեղեկանալ մարզական իրադարձություններից և դրանց հետևել մեկնաբանող խոսքի ուղեկցությամբ,
 - նշել սիրելի մարզաձևը, նկարագրել այն և հիմնավորել նախընտրությունը,
 - տարբեր զգացողություններ և կարծիք արտահայտել, խոսել տրամադրության և վերաբերմունքի մասին,
 - ներկայացնել մարզաձևը, որով զբաղվում է, նկարագրել այն և հիմնավորել ընտրությունը, պատմել մարզումների և մարզասրահ հաճախելու մասին,
 - հարցնել և նման տեղեկույթ ստանալ զրուցակցի կամ մեկ այլ անձի վերաբերյալ,
-
- տեղեկություններ ստանալ կամ հաղորդել հայ նշանավոր արվեստագետների մասին,

- թանգարաններ կամ ցուցասրահներ այցելության ժամանակ զբոսավարների խոսքից ևս տեղեկություններ իմանալ արվեստի գործերի և դրանց հեղինակների մասին,
- իմացածը հակիրճ ներկայացնել խոսակցին կամ լսարանին,
- համառոտ ներկայացնել դիտած ֆիլմերի և ներկայացումների բովանդակությունը, կարծիք հայտնել, խոսել տպավորություններից,
- տեղեկություններ ստանալ կամ հաղորդել ազգային հին ու նոր ավանդույթների, սովորույթների և տոների մասին,
- պատմել միջոցառման կամ տոնակատարության մասին, որին մասնակցել է, նկարագրել զգացողություններն ու տպավորությունները:

Կրթության ոլորտ

Սովորողը կարող է՝

- կրթական հաստատություններում (մանկապարտեզ, դպրոց, համալսարան ևն) ստանալ իրեն հետաքրքրող հարցերի պատասխանները՝ հասկանալով դրանք և անհրաժեշտության դեպքում տալով ճշգրտող հարցեր,
- ներկայացնել կրթական հաստատությունը, որտեղ սովորում է, նկարագրել կրթական միջավայրը,
- պատմել դասաժամերի, դասավանդվող առարկաների կամ ուսուցանվող նյութի բովանդակության մասին,
- պատմել դասընկերների կամ գործընկերների հետ հարաբերությունների մասին,
- մասնակցել դասաժամերին անցկացվող հարց ու պատասխանին և քննարկումներին, որոնք ծանոթ կամ արդեն յուրացրած թեմաների շուրջ են,
- լսել դասախոսություններ և ելույթներ, տալ պարզաբանող ու ճշգրտող հարցեր, պատասխանել նմանօրինակ հարցերի,
- մասնակցել ծանոթ թեմաներով բանավեճերի և քննարկումների, արտահայտել վերաբերմունք և տեսակետ:

Սոցիալ-բնապահպանական ոլորտ

Սովորողը կարող է՝

- խոսել բնաշխարհի, շրջակա միջավայրի մասին,
- նկարագրել բնության երևույթները և բնության տեսարաններ,
- տեղեկություններ իմանալ ու հայտնել բուսական ու կենդանական աշխարհի վերաբերյալ,
- խոսել եղանակային ու կլիմայական փոփոխություններից,
- խոսել բնապահպանական խնդիրներից, հետևել ու մասնակցել դրանց վերաբերող քննարկումներին և տեսակետ հայտնել:

Առողջության և բժշկության ոլորտ

Սովորողը կարող է՝

- բուժփիմնարկում անհրաժեշտ տեղեկություններ հայտնել իր առողջական վիճակի, անհանգստացնող երևույթների մասին, ներկայացնել գանգատները՝ նկարագրելով ենթադրյալ հիվանդությանը բնորոշ ախտանիշները,
- ծանոթանալ ախտորոշմանը, հետևել բժշկի խորհուրդներին ու ցուցումներին,
- կարգալ դեղատոմսը, դեղատնից գնումներ կատարել,
- անհրաժեշտության դեպքում շտապօգնություն կանչել,
- զրուցել առողջության պահպանման և առողջ ապրելակերպի մասին,
- կարգալ պարզ լեզվով շարադրված հրապարակումներ առողջության, առողջ սննդակարգի մասին,
- լսել ռադիոյի, հեռուստատեսային կամ համացանցային՝ հասկանալի լեզվով հաղորդումներ առողջության և առողջ ապրելակերպի մասին,
- խոսել մարմնի խնամքի մասին,
- խնամքի կենտրոնում ներկայացնել կարիքները, պատասխանել ճշգրտող հարցերին,
- մատուցված ծառայության համար շնորհակալություն հայտնել կամ բողոք ներկայացնել, եթե ծառայությունը պատշաճ չէ:

Պետաիրավական և հասարակական ոլորտ

Սովորողը կարող է՝

- տեղեկանալ Հայաստանի քաղաքացիների համար գործող օրենքներից՝ դրանց հետևելու և չխախտելու նպատակով,
- ստանալ անհրաժեշտ տեղեկություններ և փոխանցել դրանք ուրիշներին,
- անհրաժեշտության դեպքում դիմել համապատասխան գերատեսչություն (նախարարություն, վարչություն, առանձին բաժիններ)՝ ներկայացնելով խնդիրներն ու կարիքները, փոխանցելով տեղեկություններ կամ ստանալով դրանք, խնդրի լուծման համար աջակցություն խնդրելով և ստանալով խորհրդատվություն,
- քաղաքացի լինելու դեպքում տեղեկություններ ստանալ կամ փոխանցել տեղական ընտրությունների անցկացման կարգի մասին՝ որպես ընտրող կամ դիտորդ մասնակցությունն ապահովելու համար,
- պետական համակարգում աշխատանքի անցնելու դեպքում կարողանալ հաղորդակցվել՝ ներկայացնելով առաջարկություններ, պահանջներ, մատնանշելով խնդիրներ, մասնակցելով աշխատանքային և գործընկերային քննարկումներին,
- անհրաժեշտության դեպքում դիմել իրավապահ մարմիններին,
- ոստիկանական բաժանմունքի աշխատակցին կամ փողոցում, որևէ հաստատությունում կարգուկանոնը հսկող անվտանգության աշխատակցին, պարեկին ներկայացնել ծագած խնդիրն ու բողոքը,
- որպես ականատես պատմել եղելությունը, հետևել ցուցումներին ու խորհուրդներին,
- դատական նիստերի ընթացքում հետևել պաշտոնյաների և ուրիշների խոսքին, արձագանքել և պատասխանել իրեն ուղղված ճշգրտող հարցերին:

Հաղորդակցումն ապահովող հմտություններ

- **Խոսքի ընկալում**
 - ունկնդրում
 - ընթերցում
- **Խոսքի կառուցում**
 - բանավոր խոսք
 - գրավոր խոսք

Ունկնդրում (խոսքի լսողական ընկալում)

Ունկնդրումը ենթադրում է մի շարք հիմնական կարողությունների դրսևորում՝

- ընկալել և ընդհանուր առմամբ հասկանալ ունկնդրած խոսքի հիմնական բովանդակությունը,
- դուրս բերել անհրաժեշտ կամ հետաքրքրող տեղեկություններ,
- հասկանալ և ամբողջապես ըմբռնել բովանդակության մանրամասները:

Ունկնդրվող խոսքը պետք է կազմված լինի ծանոթ բառերի, արտահայտությունների ու քերականական իրողությունների հիման վրա, ունենա 4-5% անծանոթ բառեր, որոնց իմաստը կարելի է կռահել:

Լսողական գործունեության դեպքում սովորողը կարող է հայոց լեզվով լսել՝

- հանրային վայրերում հնչող հայտարարություններ (զգուշացում, տեղեկացում, հրահանգ և այլն),
- զրուցակցի խոսք (այդ թվում՝ հեռախոսով կամ այլ միջոցով),
- այլ անձանց կենդանի զրույց,
- կենդանի խոսք՝ որպես հանդիսատես կամ մասնակից (թատրոնում, ժողովներում, բանավեճերում, դասախոսությունների ժամանակ և այլն),
- ռադիոյով և հեռուստատեսությամբ հնչող խոսք (լուրեր, հարցազրույցներ, տարբեր հաղորդումներ, ֆիլմեր, ծայնագրություններ):

Ունկնդրելու հմտության ցուցիչները (Բ1 մակարդակ)

| Հայտարարություններ և հրահանգներ | Լեզվակրի խոսք և լեզվակիրների զրույց | Հեռուստատեսային և ռադիոյի հաղորդումներ, ծայնագրություններ | Որպես հանդիսատես |
|---|---|--|--|
| Կարողանում է հասկանալ տարբեր վայրերում (օդանավակայան կամ տրանսպորտային այլ հանգույց, հանգստյան կամ ժամանցի վայր կն) | Կարողանում է հասկանալ առօրյա հաղորդակցության ընթացքում (ընտանիքում, խանութում, աշխատավայրում, կրթական | Կարողանում է հասկանալ ռադիոյով, հեռուստացույցով կամ համացանցային տեսանյութերում համեմատաբար դանդաղ հնչող և դյուրըմբռնելի խոսքը, այդ թվում՝ | Կարողանում է հետևել իր բնագավառին առնչվող դասախոսություններին կամ զրույցներին, եթե թեման ծանոթ է և |

| | | | |
|---|---|--|--|
| <p>հնչող հայտարարություններն ու հրահանգները, եթե դրանք գրական հասկանալի լեզվով են և համեմատաբար դանդաղ են հնչում:</p> <p>Կարողանում է հասկանալ տեխնիկական պարզ տեղեկատվությունը (օրինակ՝ ամեն օր օգտագործվող սարքավորումների մասին աշխատանքային կարգադրությունները):</p> <p>Կարողանում է հետևել հրահանգներին ու ցուցումներին:</p> | <p>հաստատությունում, տարբեր միջավայրերում) ծավալվող պարզ խոսակցություններն ու զրույցները:</p> <p>Կարողանում է առանց դժվարության հետևել ու հասկանալ իր ներկայությամբ ծավալված զրույցի կամ քննարկման բովանդակությունը, եթե խոսքը պարզ է և հիմնականում գրական լեզվով է շարադրված:</p> <p>Կարողանում է հասկանալ որպիսության, տրամադրության, առողջական վիճակի և այլնի մասին իրեն ուղղված հարցերը, ողջունի, հրաժեշտի, մաղթանքի խոսքերը:</p> <p>Կարողանում է հասկանալ հեռախոսային պարզ խոսակցությունները, ձայնային</p> | <p>զովագղները, եղանակի տեսությունը:</p> <p>Կարողանում է հասկանալ ծանոթ, պարզ թեմաներին (ընտանիք, աշխատանք, դպրոց, ժամանց և այլն) վերաբերող հեռուստատեսային և ռադիոյի հաղորդումների բովանդակությունը, եթե խոսքը մատուցվում է լեզվական պարզ կառույցներով:</p> <p>Կարողանում է հասկանալ տեղեկատվական բնույթի հաղորդումներում, այդ թվում՝ լուրերի թողարկումներում հնչող տեքստերը, ուղիղ եթերով ընթացող հարցազրույցների, բանավեճերի առանցքային կետերը:</p> <p>Կարողանում է հասկանալ վավերագրական ֆիլմերի հիմնական բովանդակությունը:</p> | <p>ներկայացվում է պարզ լեզվով:</p> <p>Կարողանում է հետևել ծանոթ թեմաներով քննարկումների և բանավեճերի, եթե հնչող խոսքը մատուցվում է ճիշտ առոգանությամբ, դյուրըմբռնելի բառապաշարով և քերականական պարզ կառույցներով:</p> <p>Կարողանում է ընդհանուր առմամբ հասկանալ գրական հասկանալի լեզվով մատուցվող խոսքը թատերական ներկայացումներում:</p> |
|---|---|--|--|

| | | | |
|--|-----------------------|--|--|
| | հաղորդագրությունները: | | |
|--|-----------------------|--|--|

Ընթերցում (խոսքի տեսողական ընկալում)

Սովորողը կարող է հայերեն՝

- կարդացածն ընդհանուր կերպով հասկանալ, նյութի մասին ընդհանուր գաղափար կազմել,
- կարդացածի հիման վրա կողմնորոշվել, ցուցումներին և հրահանգներին հետևել,
- նամակներ, հաղորդագրություններ, գործնական գրություններ կարդալ ու հասկանալ,
- կարդացածից տեղեկություններ քաղել և փաստեր ձեռք բերել:

Ընթերցման հմտության ցուցիչները (Բ1 մակարդակ)

| Ընթերցում ընդհանուր ընկալման համար | Ընթերցում կողմնորոշվելու համար (հայտարարությունների և հրահանգների ընթերցում) | Նամակների ընթերցում | Ընթերցում տեղեկություններ, փաստեր ձեռք բերելու համար |
|---|--|---|--|
| <p>Կարողանում է կարդալ և բավարար չափով ըմբռնել իր հետաքրքրություններին առնչվող և ծանոթ թեմաներով շարադրված պարզ տեքստեր:</p> <p>Կարողանում է կարդալ ու լիովին հասկանալ փաստաթղթերը, որոնցում պետք է լրացնի անձնական տվյալներ և այլ բնույթի տեղեկություններ:</p> <p>Կարողանում է կարդալ և հասկանալ գրական ոչ ծավալուն ստեղծագործություններ, մամուլում հրապարակվող նյութեր, հոդվածներ, եթե դրանք մատուցվում են գրական</p> | <p>Կարողանում է տարբեր նյութերում (նամակներ, տեղեկատվական թերթիկներ, պաշտոնական փաստաթղթեր) գտնել և հասկանալ անհրաժեշտ տեղեկատվությունը:</p> <p>Անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու նպատակով կարողանում է աչքի անցկացնել երկար տեքստերը, իսկ կոնկրետ հանձնարարություն կատարելու համար տեղեկություններ քաղել տեքստի տարբեր մասերից կամ տարբեր տեքստերից:</p> <p>Կարողանում է կարդալ և հստակ հասկանալ</p> | <p>Կարողանում է կարդալ և բավականաչափ լավ հասկանալ դեպքերի, զգացմունքների և ցանկությունների նկարագրությունը անձնական նամակագրության մեջ:</p> <p>Կարողանում է կարդալ և հասկանալ գործնական նամակների տեքստերն ու գործնական գրությունները, եթե դրանք շարադրված են հասկանալի բառապաշարով և</p> | <p>Կարողանում է կարդալ և բավականաչափ լավ հասկանալ գրական հասկանալի լեզվով շարադրված տեղեկատվական բնույթի տեքստեր:</p> <p>Կարողանում է կարդալ փաստարկային պարզ տեքստեր և ըմբռնել դրանցում արված հիմնական շեշտադրումներն ու եզրահանգումները, թեև որոշ մանրամասներ կարող են</p> |

| | | | |
|---|--|---|--|
| <p>լեզվով, հասկանալի բառապաշարով և քերականական պարզ կառույցներով:</p> | <p>որևէ վայրի, որևէ կառույցի կամ հաստատության հասցեն, տարբեր վայրերում (տրանսպորտային հանգույց, փողոց, առևտրի կետեր ևն) տեղադրված ցուցանակների գրությունները, ճաշելու վայրերում ճաշացանկում նշված կերակուրների և ըմպելիքների անվանումները:</p> | <p>լեզվական պարզ կառույցներով:</p> <p>Կարողանում է կարդալ և հասկանալ էլեկտրոնային հաղորդագրությունները:</p> | <p>անհասկանալի մնալ:</p> <p>Կարողանում է կարդալ և ընդհանուր առմամբ հասկանալ տարբեր թեմաներով գրված ճանաչողական կամ հանրամատչելի հոդվածների հիմնական բովանդակությունն ու կարևոր կետերը:</p> |
|---|--|---|--|

Բանավոր խոսք

Սովորողը կարող է հայերեն՝

- երկխոսել (հարցեր ուղղել խոսակցին և պատասխանել նրա հարցերին, մասնակցել զրույցների, հարցազրույցների և քննարկումների),
- մենախոսել (ներկայանալ՝ պատմելով իր մասին, նկարագրել ինչ-որ բան, պատմել լսածի, տեսածի և կարդացածի մասին):

Բանավոր խոսքի ցուցիչներ (Բ1 մակարդակ)

| Երկխոսություն / Զրույց | Մենախոսություն |
|---|--|
| <p>Կարողանում է հաղորդակցվել իր հետաքրքրություններին ու մասնագիտական ոլորտին առնչվող զանազան հարցերի շուրջ:</p> <p>Կարողանում է փոխանցել և ստանալ ոչ սովորական իրավիճակներին, դեպքերին վերաբերող անհրաժեշտ տեղեկությունը, հարցերով ստուգել և ճշգրտել այն, պարզաբանել խնդիրը կամ պարզաբանում խնդրել:</p> <p>Կարողանում է հանպատրաստից մասնակցել անձնական</p> | <p>Կարողանում է տալ իր հետաքրքրություններին առնչվող զանազան առարկաների, ինչպես նաև երևույթների նկարագրությունը:</p> <p>Կարողանում է բավականաչափ սահուն, բայց համառոտ ներկայացնել գրքի, առանձին պատմվածքի, հրապարակային ոչ ծավալուն հոդվածի, կինոնկարի, թատերական ներկայացման բովանդակությունն ու առանցքային դրվագները, արտահայտել իր կարծիքն ու վերաբերմունքը:</p> |

| | |
|--|---|
| <p>հետաքրքրություններին կամ առօրյա կյանքին առնչվող ծանոթ թեմաներով զրույցներին (ընտանիք, աշխատանք, նախասիրություններ, ճամփորդություն ևն)՝ նկարագրելով տարբեր իրավիճակներ:</p> <p>Կարողանում է իր մտքերն արտահայտել տարբեր, այդ թվում և մշակութային (գրականություն, երաժշտություն, նկարչություն, կինո ևն) թեմաների շուրջ: Կարողանում է ճամփորդության ընթացքում առանց դժվարության մասնակցել տարբեր իրավիճակներում ծավալվող խոսակցություններին ու զրույցներին:</p> <p>Կարողանում է զրույց կամ քննարկում վարել՝ խոսքային որոշակի դադարներով և երբեմն-երբեմն սեփական խոսքում ճշտումներ անելով:</p> <p>Կարողանում է մասնակցել ոչ պաշտոնական, նաև գործնական քննարկումներին՝ հայտնելով իր կարծիքն ու վերաբերմունքը, համաձայնությունն ու անհամաձայնությունը, հիմնավորելով ասելիքը, հակիրճ մեկնաբանելով մյուսների տեսակետները:</p> <p>Կարողանում է նախապես պատրաստած հարցազրույց վարել խոսքային կրկնությունների պայմանով: Որոշակի դժվարությամբ, սակայն կարողանում է հարցազրույցի ընթացքում ծագած հարցերի պարզաբանում խնդրել կամ պարզաբանում տալ:</p> <p>Կարողանում է հարցազրույցի ընթացքում նախաձեռնողականություն հանդես բերել՝ առաջադրելով նոր թեմա կամ նոր հարցեր:</p> | <p>Կարողանում է բացատրությունների ուղեկցությամբ նկարագրել սեփական զգացմունքները, նաև արձագանքը կամ հակազդումը դիմացինի զգացական դրսևորումներին:</p> <p>Կարողանում է ներկայացնել իր նպատակներն ու ծրագրերը, երազանքներն ու ձգտումները:</p> <p>Կարողանում է պատմել ու նկարագրել սովորական կամ անսպասելի իրավիճակների, դեպքերի մանրամասները:</p> <p>Կարողանում է քննարկումների և դեպքերի վերլուծությունների ժամանակ ներկայացնել բավականին հաջող փաստարկներ՝ իր տեսակետը հիմնավորելու նպատակով, ինչպես նաև հակիրճ ներկայացնել սեփական կարծիքին, նպատակներին ու գործունեությանն առնչվող մեկնաբանություններ և պատճառաբանումներ:</p> <p>Կարողանում է ներկայացնել իր բնագավառին առնչվող թեմաների շուրջ նախապես պատրաստած կարճ հայտարարություններ:</p> <p>Կարողանում է ծանոթ թեմայով պարզ ելույթ ներկայացնել՝ պատշաճորեն մեկնաբանելով հիմնական կետերը, պատասխանել ելույթին հաջորդող հարցերին՝ արագ և դժվարընկալելի խոսքի դեպքում կրկնություն խնդրելով:</p> |
|--|---|

Գրավոր խոսք

Սովորողը կարող է հայերեն՝

- գրավոր հաղորդել անձնական տվյալներ և մանրամասն տեղեկություններ, լրացնել հարցաթերթիկներ,
- գրել անձնական, գործնական նամակներ և հաղորդագրություններ,
- գրառումներ անել,
- գրել ստեղծագործական հակիրճ տեքստ:

Գրավոր խոսքի ցուցիչներ (Բ1 մակարդակ)

| Անձնական տվյալներ և տեղեկություններ | Նամակներ և հաղորդագրություններ | Գրառումներ | Ստեղծագործական տեքստ |
|--|---|---|--|
| <p>Կարողանում է տեղեկություններ փոխանցել սեփական անձի, ինչպես նաև ուրիշների մասին:</p> <p>Կարողանում է պատասխանել ճշգրտող հարցերին, տալ բացատրություններ:</p> <p>Կարողանում է լրացնել ինքնակենսագրական բնույթի հարցաթերթիկներ , համառոտ շարադրել սեփական կամ ուրիշների կենսագրությունը:</p> <p>Կարողանում է նկարագրել ինքն իրեն և ուրիշներին (արտաքինը, բնավորությունը):</p> | <p>Կարողանում է գրել անձնական նամակներ՝ տրամադրելով նորություններ, պատմելով առօրյայի և իր կամ այլոց կենսափորձի մասին, շարադրելով մտքերը ծանոթ թեմաների, այդ թվում՝ մշակութային իրարձուրությունների վերաբերյալ, նկարագրել որևէ դեպքի կամ իրադարձության հետ կապված զգացողությունները, տրամադրությունն ու տպավորությունները:</p> <p>Կարողանում է գրել հաղորդագրություններ՝ շեշտադրելով անհրաժեշտ տեղեկությունները և գրելու նպատակը:</p> <p>Կարողանում է գրել գործնական նամակներ՝ ներառելով անհրաժեշտ</p> | <p>Կարողանում է գրառումներ անել՝ ընտրելով կարևոր կետերը և անհրաժեշտ տեղեկություններ փոխանցելով ընկերներին, գործընկերներին և այլոց:</p> <p>Կարողանում է գրի առնել ընթերցած կամ լսած տեքստերի (կարճ պատմվածք, ելույթ, դասախոսություն , քննարկում) կարևոր ու առանցքային կետերը, դրանք փոխանցել ուրիշներին:</p> | <p>Կարողանում է իրեն հետաքրքրող, նաև երևակայական թեմաների շուրջ գրել պարզ շարադրանք՝ նկարագրելով առարկաներ, անձանց, երևույթներ, զգացողություններ՝ արտահայտելով և ամփոփելով սեփական տեսակետը:</p> <p>Կարողանում է գրել կարճ հաշվետվություններ , որոնք կարող են ներառել գործունեության և փորձառության մասին տեղեկություններ, որևէ հարցի կամ խնդրի վերաբերող բացատրություններ, պատճառաբանումներ և հիմնավորումներ:</p> |

| | | | |
|--|--|--|--|
| | <p>տեղեկատվությունը, շեշտադրելով նամակի գրության նպատակը և նկարագրելով ցանկություններն ու անելիքները:</p> <p>Կարողանում է պատասխանել իրեն ուղղված նամակներին և հաղորդագրություններին, եթե դրանք գրված են գրական հստակ լեզվով և դյուրըմբռնելի են:</p> | | |
|--|--|--|--|

Լեզվական գիտելիք
Հնչյունաբանություն, ուղղագրություն, ուղղախոսություն

Զարգացնելով Ա1 և Ա2 մակարդակներում սովորածը և շարունակելով հղկել արտասանությունը՝ Բ1 մակարդակում պետք է առանձնակի ուշադրություն դարձնել բառերի շեշտադրությանը, շեշտադրման բացառություններին, մասնավորապես առաջնավանկային շեշտադրությանը, հնարավորինս հստակեցնել ու հղկել ը հնչյունի՝ որպես որոշիչ հոդի և գաղտնավանկի գրությունն ու արտասանությունը, նախադասությունների ընթերցման և բանավոր խոսքի առոգանությանը՝ կախված հաղորդակցման նպատակից:

Բ1 մակարդակում սովորողը պետք է հետևի հայերենի ուղղագրական կանոններին և հատկապես ուղղագրական արժեք ունեցող բառերի գրությանը:

Բառապաշար

Բ1 մակարդակում սովորողը պետք է տիրապետի բավականին թվով համագործածական բառերի՝ մտքերը հնարավորինս հստակ ու հասկանալի արտահայտելու համար, անհրաժեշտության դեպքում գործածի բառապաշարի այլ շերտեր, օրինակ՝ խոսակցական բառեր և արտահայտություններ, որոշ դեպքերում նաև եզրույթներ:

Այս մակարդակում սովորողը պետք է իմանա և կիրառի առավել գործածական հոմանիշներ և հականիշներ, որոշ համանուններ և հարանուններ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ պատկերավոր խոսք կառուցելու համար) բառը գործածի փոխաբերական իմաստով:

Բ1 մակարդակում է սկսվում դարձվածքների ուսուցումը: Սովորողը պետք է իմանա և կիրառի հատկապես այն դարձվածքները, որոնք կազմված են մարմնի մասեր մատնանշող բառերով, իսկ ընդհանուր առմամբ՝ ամենագործածականները և դյուրընկալիները:

Քերականություն

Բ1 մակարդակում սովորողը պետք է ամրապնդի նախորդ մակարդակներում յուրացրածը, զարգացնի այն՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը համալրելով ու հարստացնելով քերականական նոր ձևերով, խոսքային նոր կաղապարներով ու կառույցներով, որն ավելի դյուրին կդարձնի հաղորդակցական հմտությունների կիրառումը:

Քերականական իրողությունների ուսուցումը պետք է բխի տվյալ մակարդակում գործածվող խոսքային կառույցներից և այն համատեքստերից կամ իրադրություններից, որոնցում դրանք գործածվում են:

Բ1 մակարդակում սովորողը պետք է տիրապետի ստորև նշված քերականական գիտելիքներին և դրանցից բխող վերջնարդյունքներին:

Գոյական

Սովորողը պետք է՝

- իմանա որոշիչ *ը, ն* հոդերի գործածության առանձնահատկությունները,
- իմանա բաղադրյալ հատուկ անունների գրությունը,
- իմանա գոյականի հոգնակի թվի կազմության առանձնահատկություններն ու բացառությունները, խոսքում ճիշտ գործածի անեզական և անհոգնական գոյականները,
- իմանա այլաձև հոլովումները, հոլովական տարածված զուգաձևությունները,
- իմանա հոլովաձևերի և կապային կառույցների համարժեքության դեպքերը,
- ճանաչի անձի և իրի առումների դրսևորման տարբերությունները,
- կազմի գոյականական բառակապակցություններ:

Ածական

Սովորողը պետք է՝

- գործածի որական և հարաբերական ածականները՝ տարբերակելով դրանք նաև բառի կազմությունից ելնելով,
- կազմի որական ածականների համեմատության աստիճանները՝ հաշվի առնելով անընդունելի համարվող դեպքերը,
- կազմի ածականական բառակապակցություններ,
- փոխանվանաբար կիրառի ածականները՝ ենթարկելով անհրաժեշտ ձևափոխությունների:

Թվական

Սովորողը պետք է՝

- իմանա թվականների տեսակները,
- քանական թվականներից կազմի դասական, բաշխական և կոտորակային թվականներ,
- ճիշտ գրի բաղադրյալ թվականները,
- իմանա քանական թվականի՝ լրացյալով պայմանավորված եզակի կամ հոգնակի կիրառության դեպքերը,

- փոխանվանաբար կիրառի թվականները՝ ենթարկելով անհրաժեշտ ձևափոխությունների:

Դերանուն

Սովորողը պետք է՝

- իմանա դերանունների տեսակները, դրանց կիրառության առանձնահատկությունները՝ կախված առարկա կամ անձ, առարկայի կամ գործողության հատկանիշ մատնանշելուց,
- կարողանա հոլովել դերանունները,
- իմանա դերանունների կիրառության որոշ առանձնահատկություններ՝ լրացյալով պայմանավորված,
- իմանա հարցական և հարաբերական դերանունների գործառական և հնչերանգային տարբերությունը,
- համապատասխան հոլովածներով գործածի անձնական դերանունները որոշ կապերի հետ,
- տեղին գործածի անձնական դերանուններին փոխարինող *ս, դ* ստացական, ինչպես նաև դիմորոշ հոդերը:

Բայ

Սովորողը պետք է՝

- իմանա դերբայների անկախ կիրառության մասին,
- փոխանվանաբար կիրառի անորոշ, ենթակայական, հարակատար դերբայները՝ ձևափոխելով դրանք,
- կազմի դիմավոր բայի եղանակաժամանակային բոլոր ձևերը,
- խոնարհի բայերը թե՛ դրական և թե՛ ժխտական ձևերով,
- իմանա անկանոն և պակասավոր բայերի խոնարհման առանձնահատկությունները,
- կարողանա կազմել բայի պատճառականի և կրավորականի ձևերը, իմանա դրանց գործածության դեպքերը,
- իմանա սոսկածանցավոր և պատճառական բայերի դիմավոր ձևերի կազմության հիմնական առանձնահատկությունները,
- հարստացնի նախորդ մակարդակում սովորած հարադիր բայերի պաշարը, իմանա դրանց խոնարհման առանձնահատկությունները,
- կազմի բայական բառակապակցություններ և կիրառի դրանք:

Մակբայ

Սովորողը պետք է՝

- հարստացնի նախորդ մակարդակում սովորած մակբայների պաշարը,
- իմանա մակբայների տեսակները և խոսքում գործածի դրանք,
- կազմի մակբայներ մակբայակերտ ածանցներով կամ արմատի կրկնությամբ:

Կապ

Սովորողը պետք է՝

- հարստացնի նախորդ մակարդակում սովորած կապերի պաշարը,
- տարբերակի նախադիր, հետադիր և կրկնադիր կապերը,
- կազմի կապային կառույցներ՝ կապի հետ գործածվող բառը դնելով անհրաժեշտ հոլովով,
- կարողանա անհրաժեշտության դեպքում կապային կառույցը փոխարինել համապատասխան հոլովաձևով (*սեղանի վրա - սեղանին*) կամ հակառակը (*ամպերում - ամպերի մեջ*),
- կարողանա իմաստային տարբերակմամբ կամ ճիշտ շարադասությամբ կիրառել որոշ կապեր ու կապական բառեր (*շնորհիվ / պատճառով / հետևանքով, համար / նպատակով, փոխարեն / փոխանակ են*),
- կարողանա գործածել հոլովվող կապերի և կապական բառերի պահանջվող ձևերը (*օրինակ՝ միջից, միջով, վրայից, վրայով են*):

Շաղկապ

Սովորողը պետք է՝

- տարբերակի համադասական և ստորադասական շաղկապները,
- իմանա որ և թե շաղկապների գործածության առանձնահատկությունները և կարողանա դրանք տեղին գործածել խոսքում,
- իմանա կամ և թե շաղկապների գործածության առանձնահատկությունները, կարողանա դրանք գործածել խոսքում,
- կարողանա գործածել կրկնադիր և զուգադիր շաղկապները՝ նկատի ունենալով մասնավորապես *ոչ թե այլ, ոչ միայն . . . այլև* զուգադրությունների իմաստային տարբերությունները,
- իմանա որ և որպեսզի շաղկապների կիրառական տարբերությունները:

Վերաբերական

Սովորողը պետք է՝

- հարստացնի նախորդ մակարդակում սովորած վերաբերականների պաշարը,
- կարողանա վերաբերականները տեղին գործածել խոսքում:

Ձայնարկություն

Սովորողը պետք է՝

- կարողանա խոսքում գործածել ձայնարկություններ՝ ելնելով հաղորդակցման նպատակից (կոչ, հորդոր, հրաման, զարմանք, զգվանք, ուրախություն, դժգոհություն են):

Շարահյուսություն

Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ

Սովորողը պետք է՝

- կարողանա գործածել տարբեր խոսքի մասերով արտահայտված ենթականեր,
- գործածի պարզ և բաղադրյալ ստորոգյալներ,
- գործածի թե՛ գոյականական և թե՛ բայական անդամի լրացումներ,
- բայերի համար լրացումներ ընտրելիս կիրառի ճիշտ խնդրառություն,

- պահպանի ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:

Պարզ նախադասություն

Սովորողը պետք է՝

- կազմի նախադասություններ ըստ հաղորդակցման նպատակի՝ ուշադրություն դարձնելով հատկապես հարցական և հրամայական նախադասությունների կազմության առանձնահատկություններին և գործածության նպատակադրմանը, համապատասխան առոգանությամբ ընթերցի դրանք,
- իմանա ենթակայի և ստորոգյալի զեղչման դեպքերը,
- կազմի նախադասություններ հայերենին բնորոշ շարադասությամբ,
- կարողանա փոխել նախադասության շարադասությունը՝ փոխելով տրամաբանական շեշտը,
- կազմի ժխտական նախադասություններ:

Բարդ նախադասություն

Սովորողը պետք է՝

- կազմի բարդ նախադասություններ՝ օգտագործելով անհրաժեշտ շաղկապներ,
- կազմի պայմանի, նպատակի, պատճառի պարագա երկրորդական բաղադրիչներով բարդ նախադասություններ,
- *որ, թե* ստորադասական շաղկապների զեղչումով կազմի բարդ նախադասություններ,
- իմանա ուղղակի և անուղղակի խոսքի կիրառությունը,
- վերաշարադրելիս կարողանա ուղիղ մեջբերված խոսքը փոխակերպել անուղղակիի,
- երկրորդական նախադասությունները գործածի տարբեր շարադասությամբ:

Կետադրություն

Կետադրությունը նպաստում է մտքի ճիշտ ընկալմանը և արտահայտմանը, ուստի սովորողը Բ1 մակարդակում պետք է ծանոթանա կետադրական ամենատարածված դեպքերին և զարգացնի տեքստը կետադրելու հմտությունը:

Սովորողը պետք է հետևի կետադրական հետևյալ կանոններին.

Ստորակետ դրվում է՝

- համադասական և ստորադասական շաղկապներից առաջ,
- հարաբերական դերանուններից առաջ,
- շարահարությամբ կապակցված նախադասությունների միջև,
- նախադասության բազմակի անդամների միջև,
- կրկնադիր շաղկապներից երկրորդից առաջ,
- բացահայտչից հետո,
- կոչականից առաջ կամ հետո՝ կախված դիրքից,

- որոշ վերաբերականներից (*այո, ոչ, չէ, իհարկե, անշուշտ, իրոք* ևն) առաջ կամ հետո, նաև երկու կողմից՝ կախված դիրքից,
- ձայնարկությունից առաջ կամ հետո՝ կախված դիրքից:

Միջակետ դրվում է՝

- շարահարությամբ կապակցված համադաս այն նախադասությունների միջև, որոնք ունեն ինքնուրույն, անկախ գործածություն,
- պատճառահետևանքային կապ ունեցող համադաս նախադասությունների միջև,
- ուրիշի ուղղակի խոսքում հեղինակային հատվածից հետո:

Բուժ դրվում է՝

- *որ, թե* շաղկապների զեղչման դեպքում,
- ստորոգյալի մասնակի կամ լրիվ զեղչման դեպքում,
- բացահայտչից առաջ,
- *ըստ, համաձայն, հակառակ, նայած, չնայած, բացի* կապերով կազմված հիմունքի և զիջման պարագաների դեպքում,
- մեկնական բառերի վրա (*այսինքն, այսպիսով, օրինակ* ևն):

Հարցական դրվում է՝

- հարցական դերանունների վրա,
- *թե* համադասական շաղկապի վրա, եթե այլընտրանքային հարցում է արտահայտում,
- *մի՞թե, չէ՞ որ* բառերի վրա (*արդյոք* բառի վրա նախընտրելի է չդնել):

Բացականչական դրվում է՝

- ձայնարկությունների վրա,
- հարցական դերանունների վրա, եթե դրանք արտասանվում են բացականչական հնչերանգով:

Շեշտ դրվում է՝

- հրամայական եղանակի բայերի վրա (արգելական հրամայականի դեպքում շեշտը դրվում է *մի* բառի վրա՝ մի՛ խոսիր, իսկ հարադիր բայերի դեպքում՝ առաջին բաղադրիչի վրա՝ վե՛ր կաց),
- կոչականի վրա,
- կրկնադիր շաղկապների վրա (*և՛ և՛, թե՛ թե՛, ո՛չ ո՛չ, կա՛մ կա՛մ*),
- *այո՛, ո՛չ, չէ՛* բառերի վրա:

Լեզվական կաղապարներ

1. Տեղեկություններ որոնել, ստանալ և հայտնել

1.1 Տարբերակել / նույնականացնել (բացատրել)

Անձն. և ցուց. դերանուններով պարզ կամ բարդ նախադասություններ

Սա / Դա / Նա է:

Սա / Դա / Նա է, որը / ով

Սրանք / Դրանք / Նրանք են:

Սրանք / Դրանք / Նրանք են, որոնք / ովքեր

....

Այս նա է, ով

Այդ նրանք են, ովքեր / որոնք

Ասեմ, որ սա / դա / նա

Ասեմ, որ սա է / դա է

Ասեմ ձեզ / Ձեզ, որ սա է / դա է

Ասեմ ձեզ / Ձեզ, որ սա է / դա է

Ուզում եմ ասել, որ սրանք / դրանք / նրանք

Ուզում եմ ասել, որ սրանք են / դրանք են / նրանք են

Ծանոթացի՛ր / Ծանոթացե՛ք, սա իմ / մեր / ձեր է:

Սա է իմ / մեր / ձեր, ծանոթացի՛ր / ծանոթացե՛ք:

1.2 Հաղորդել (նկարագրել և պատմել)

Պարամոդական նախադասություններ

Նա ասաց / ասում է, որ

Ինձ ասացին, որ

Ասում են՝

Հենց նոր ասացին / հաղորդեցին / տեղեկացրին, որ

Նա պատմում էր / պատմեց, որ

Ուզում եմ քեզ / Ձեզ հիշեցնել, որ

Պարզվեց / Պարզվում է, որ

Երևաց / Երևում է, որ

1.3 Հաստատել, ժխտել

Պարամոդական նախադասություններ՝ հաստատումով կամ ժխտումով

Այո՛, նա

Այո՛, իհարկե, դու / Դուք

Ես նույնպես լսել եմ

Ես էլ եմ լսել, որ

Գիտեմ, որ

Վստահ եմ, որ

Կարող եմ հաստատել, որ

Կարող եմ հաստատ ասել, որ

Կարող եմ վստահ ասել, որ

Կարող եմ վստահեցնել քեզ / ձեզ / Ձեզ, որ

Ո՛չ / չէ՛, չեմ կարող

Ցավոք / Ափսոս, չեմ կարող

Շատ եմ ափսոսում, որ / բայց չեմ կարողանա

Ո՛չ / Ցավոք / Ափսոս, ինձ հարմար չէ

Ցավոք, ժամանակ չունեմ

1.4 Հարց տալ՝

1.4.1 հաստատում կամ ժխտում ստանալու համար

Հարցական հնչերանգով բարդ նախադասություններ

Կարելի՞ է իմանալ, թե

Կարելի՞ է իմանալ՝ արդյոք

Հարմա՞ր է, որ

Հարմա՞ր է՝

Հարմար կլի՞նի՞, որ

1.4.2 խնդրանք արտահայտելու համար

Բայի պայմանական ապառնի ժամանակաձևը՝ հարցական հնչերանգով

Կուղեկցե՞ք / Կուղեկցե՞ս ինձ

Կօզնե՞ք / Կօզնե՞ս մեզ

Եթե / Որ (շատ) խնդրեմ, (+հարցական հնչերանգով նախադ.)

1.4.3 տեղեկություն ստանալու և ճշտելու համար

Հարցական դերանուններով պարզ ընդարձակ նախադասություններ

Ե՞րբ ես / եք / է

Որտե՞ղ կարող եմ / կարելի է

Ինչո՞ւ է / ես / եք

Ինչպե՞ս կարող եմ / եմք

Ինչպե՞ս կարելի է

Ի՞նչ պետք է / է պետք

Ի՞նչ է անհրաժեշտ
Ո՞ր ժամին ես / եք / է
Ո՞ւմ կարելի է հարցնել / մոտենալ
Ումի՞ց կարելի է ճշտել / իմանալ / տեղեկանալ

Հարցական դերանուններով բարդ նախադասություններ

Ուզում եմ իմանալ, թե երբ է

Պետք է իմանամ, թե որտեղ է

Տեղեկանալ է պետք, թե որ

Կարո՞ղ եք ասել / հիշեցնել / հուշել, թե ինչպես է պետք

Կասե՞ք / Կասե՞ս՝ ինչպես / երբ / ում

Տեղյակ կպահե՞ք ինձ, թե որ / երբ

Կտեղեկացնե՞ք մեզ՝ որ / ուր

1.4 Պատասխանել՝

1.5.1 հաստատելու կամ ժխտելու համար

Պարմողական պարզ կամ բարդ նախադասություններ

Այո՛, իհարկե

Այո՛, անպայման

Գիտեմ, թե

Գիտեմ, որ

Տեղյակ եմ, որ

Կներես / Կներեք, չեմ կարող

Ցավոք, չգիտեմ, թե

Ես նույնպես / էլ չգիտեմ

Տեղյակ չեմ, թե

Բոլորովին տեղյակ չեմ, թե

1.5.2 տեղեկություն հաղորդելու կամ ճշտելու համար

Պարմողական պարզ կամ բարդ նախադասություններ

Վաղուց եմ / ենք

Նոր եմ / ենք

Արդեն քանի տարի է՝

Երկար ժամանակ է, որ

Կարող եմ ասել, որ

Տեղեկացնեմ, որ

Ասեմ, որ

Հիշեցնեմ Ձեզ, որ
Պատմեմ, թե
Հիմա կպատմեմ, թե ինչպես
Երևի գիտես / իմացար, որ
Կարծում եմ՝ լսել ես / իմացել ես, որ.....

Հարցական հնչերանգով բարդ նախադասություններ

- *տեղեկություն հաղորդելու համար*

Վաղո՞ւց ես / եք
Նո՞ր ես / եք
Երկա՞ր ժամանակով ես / եք

- *տեղեկությունը ճշտելու համար*

Գիտես, չէ՞ / Իմացար, չէ՞ / Իմացել ես, չէ՞, որ
Կասե՞ս / Կասես, չէ՞, թե

2. Վերաբերմունք արտահայտել և վերաբերմունքը պարզել

2.1 Համաձայնություն և անհամաձայնություն հայտնել

2.1.1 Համաձայնություն հայտնել

Լավ, ես
Շատ լավ, մենք
Իրոք / Իսկապես այդպես է
Ճիշտ է / Ճիշտ որ,
Դուք ճիշտ եք / Դու ճիշտ ես.
Համամիտ եմ / Համաձայն եմ, որ

2.1.2 Անհամաձայնություն հայտնել կամ ժխտել ինչ-որ բան

Ո՛չ / Չէ՛, չեմ ուզում
Ո՛չ / Չէ՛, չեմ կարող
Չեմ կարծում, թե / որ
Համամիտ չեմ / Համաձայն չեմ, որ
Ո՛չ, անհնար է

2.1.3 Հարցնել համաձայնություն կամ անհամաձայնություն ստանալու համար

Հարցական հնչերանգով պարզ կամ բարդ նախադասություններ

Ինձ հետ / Մեզ հետ կգա՞ս / կգա՞ք
Կուզե՞ս / Կուզե՞ք
Ի՞նչ ես / եք կարծում
Ձեզ / Քեզ հարմար կլինի՞
Համաձա՞յն ես / եք

2.2 Ինչ-որ բանի իմացություն / չիմացություն

2.2.1 Հաստատել ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան իմանալը / չիմանալը

Ես գիտեմ, որ
Ես չգիտեմ, թե

Նա գիտեր, որ / թե
Նա չգիտի, թե

Իհարկե ծանոթ եմ
Ափսոս, ծանոթ չեմ
Ճանաչում եմ, այո՛,
Իմացա / Իմացանք, որ

2.2.2 Հարցնել ինչ-որ բան իմանալու / չիմանալու մասին

Գիտե՞ս / Գիտե՞ք, որ
Գիտե՞իր / Գիտե՞իրք, որ
Չգիտե՞ս / Չգիտե՞ք, թե
Տեղյա՞կ ես / եք, որ
Իմացա՞ր / Իմացա՞ք, որ

2.3 Որևէ բան անելու կարողություն /անկարողություն

2.3.1 Հայտնել որև բան անել կարողանալու/չկարողանալու մասին

Ես կարող եմ, իհարկե
Ափսոս, չեմ կարող

Ի դեպ, նա կարող է
Ի դեպ, նա չի կարող

Մենք կկարողանանք
Մենք չենք կարողանա

Մենք պատրաստ ենք / չենք
Ասեմ, որ մենք պատրաստ ենք / չենք
Ցավոք, մենք բոլորովին պատրաստ չենք

2.3.2 Հարցնել որև բան անել կարողանալու/չկարողանալու մասին

Կարո՞ղ ես / եք
Կարողանո՞ւմ ես / եք
Կկարողանա՞ս / Կկարողանա՞ք
Պատրա՞ստ ես / եք
Հնարավո՞ր է
Չե՞ս կարող / Չե՞ք կարող
Չի՞ կարող / Չի՞ կարողանա

2.4 Որևէ բանի վերաբերյալ վստահության/անվստահության արտահայտում

2.4.1 Արտահայտել վստահությունը (անվստահությունը) որևէ հարցում
Համոզված եմ / չեմ, որ
Այնքան էլ համոզված չեմ, որ / թե

Վստահ եմ / չեմ, որ
Այնքան էլ վստահ չեմ, որ / թե
Ամենևին էլ վստահ չեմ, որ / թե

Չեմ կասկածում, որ
Կասկած չունեմ, որ
Կասկած չկա, որ
Կասկածում եմ, որ / թե
Կասկած ունեմ, որ / թե

Երևի / Երևի թե

2.4.2 Հարցնել՝ որքանով խոսակիցը վստահ է (վստահ չէ) որևէ հարցում
Համոզվա՞ծ ես / եք
Վստա՞հ ես/ եք
Ճի՞շտ է, որ
Հաստա՞տ է, որ
Հաստա՞տ գիտես, որ
Հաստա՞տ ես / եք ասում. որ

2.5 Որևէ բան անելու պարտավորվածություն / ոչ պարտավորվածություն

Ես / Մենք պետք է / պիտի
Ես / Մենք չպետք է / չպիտի

Նա անպայման պետք է
Նա ամենևին էլ չպիտի

Դու / Դուք պարտավոր ես / եք
Դու / Դուք պարտավոր չես / չեք

Նա պարտավորվել է, որ
Նա չի պարտավորվել, որ

Ես / Մենք պարտավոր չեմ / չենք
Քո / Ձեր պարտականությունն է

2.6 Որևէ բան անելու թույլտվություն խնդրել

2.6.1 Թույլտվություն խնդրել

Կարող եմ
Կարելի է
Թույլ կտամ / Թույլ կտա՞ք

2.6.2 Թույլատրել ինչ-որ բան անել

Այո՛, իհարկե,
Խնդրեմ
(Դու) Կարող ես / Դուք կարող եք
Իհարկե, կարելի է

2.6.3 Թույլ չտալ ինչ-որ բան անել

Ո՛չ, իհարկե, չես / չեք կարող
Չես / Չեք կարող
Ընկե՛ր, չի կարելի
Չի թույլատրվում
Թույլ չեմ / չեն տալիս

2.7 Ցանկության/մտադրության արտահայտում

2.7.1 Արտահայտել որևէ բան անելու ցանկություն

Ուզում եմ, որ
Շատ եմ ուզում, որ
Ցանկանում եմ, որ
Միշտ ցանկացել եմ, որ
Կուզեմ / Կուզե՛ի, որ
Շատ կուզեմ / կուզե՛ի, որ
Ցանկություն ունեմ
Մեծ ցանկություն ունեմ

2.7.2 Հարցնել որևէ բան անելու ցանկության մասին

Եղբայ՛ր, ուզո՞ւմ ես / եք
Շա՞տ ես / եք ուզում
Ցանկանո՞ւմ ես / եք
Մի՞շտ ես / եք ցանկացել
Կուզե՞ս / Կուզե՞ք
Ցանկություն ունե՞ս / ունե՞ք

2.8 Հույզերի արտահայտում

2.8.1 Ներկայացնել որևէ մեկի հուզական վիճակը

Ես (շատ) ուրախ եմ, որ:
Նա ամենևին էլ տխուր չէ, որ:
(Շատ) ուրախացա, երբ / որ:
Նա (շատ) տխրեց, երբ / որ:
Ես (մի քիչ) վախեցա՞՞մ էի, որովհետև / այդ պատճառով էլ

Նա (շատ) վախեցավ, երբ / քանի որ:
Հուզվեցի, երբ / որովհետև:
Նա անհանգիստ է / էր, քանի որ:
Ես բոլորովին էլ չանհանգստացա. չէ՞ որ

2.8.2 Հարցնել որևէ մեկի հուզական վիճակի մասին

Ուրա՞խ ես / եք, որ
Քեզ / Ձեզ երջանի՞կ ես / եք զգում, որ
Տխրեցի՞ր, երբ
Տխո՞ւր եք, որ
Հուզվեցի՞ր / Հուզվեցի՞ք, երբ
Անհանգի՞ստ ես / եք, որ
Արդեն հանգի՞ստ եք. չէ՞ որ
Արդեն հանգիստ եք, չէ՞
Օրիո՞րդ, վախեցա՞ք, երբ
Շա՞տ վախեցար / վախեցաք, երբ

2.8.3 Արտահայտել գոհունակություն/Հավանություն տալ որևէ բանի

Շատ լավ է, որ
Հիանալի է, որ
Հրաշալի է, որ
Ինձ շատ դուր եկավ, որ / երբ
Շատ հավանեցի քո / Ձեր
| հեռուստաընկերություն | հին |
| հեռուստատեսային | հինգ |
| հեռուստատեսություն | հինգհարկանի |
| հեռուստացույց | հիշել |
| հեռվում | հիշեցում |
| հետ | հիշողություն |
| հետադարձ | հիվանդ |
| հետազոտական | հիվանդանալ |
| հետազոտել | հիվանդանոց |
| հետազոտություն | հիվանդասենյակ |
| հետազոտում | հիվանդություն |
| հետախուզություն | հմայիչ |
| հետախույզ | հմտորեն |
| հետաձգել | հմտություն |
| հետաքրքիր | հմուտ |
| հետաքրքրել | հյուս |
| հետզհետե | հյուսիս |
| հետիոտն | հյուսիսային |
| հետո (կապ) | հյուր |
| հետո (մկբ.) | հյուրանոց |

հյուրասենյակ
հյուրասեր
հյուրասիրել
հյուրասիրություն
հյուրատուն
հյուրընկալել
հնագետ
հնագանդ
հնամենի
հնաոճ
հնարավոր
հնդիկ
հնդկահավ
հնդկաձավար
հնօրյա
հոբելյան
հոգալ
հոգատար
հոգատարություն
հոգեբանական
հոգեբույժ
հոգեհանգիստ
հոգեվիճակ
հոգնել
հոգս
հոգևոր
հոդ
հոդացավ
հոդված
հոլովակ
հոծ
հող
հողաթափ
հողամաս
հոն
հոպար (խսկց.)

հոսանք
հոսափտալ
հով
հովազ
հովանալ
հովանավոր
հովանոց
հովհար
հոտ (բույր)
հոտ (ոչխարների խումբ)
հորաքույր
հորդ
հորեղբայր
հորթ
հորիզոնական
հորինել
հպարտ
հսկել
հսկել
հսկիչ
հսկողություն
հրադադար
հրաժարվել
հրամայել
հրաման
հրամանագիր
հրամանատար
հրանոթ
հրաշալի
հրապարակախոս
հրապարակախոսություն
հրապարակային
հրապուրիչ
հրավառություն
հրավեր
հրավիրատոմս
հրավիրել

հրացան
հրդեհ
հրեա
հրել
հրթիռ
հուզական
հուզել
հուզիչ
հուզմունք
հուղարկավորություն
հումոր
հույզ
հույն
հունարեն
հունգարացի
հունցել
հուշագիր
հուշանվեր
հուշարձան
հուշել
հուսալ
հուսալիություն

Ձ

ձագ
ձագուկ
ձախ
ձայնային
ձայնարկություն
ձանձրալի
ձանձրանալ
ձավար
ձեռագիր
ձեռնարկ
ձեռնարկել
ձեռնոց
ձեռք
ձեռքերում

ձերբակալել
ձերբակալություն
ձի
ձիավարություն
ձկնապուր
ձկնկիթ
ձմեռ
ձմեռային
ձմերուկ
ձյուն
ձնծաղիկ
ձոր
ձվածեղ
ձու
ձուկ
ձևակերպել
ձևավորել
ձևավորող

Ղ

ղեկ
ղեկավար
ղեկավարել
ղեկավարություն

Ճ

ճագար
ճակատ
ճակատամարտ
ճամբար
ճամպուրկ
ճամփորդական
ճամփորդել
ճամփորդություն
ճայ
ճայթել

ճայթյուն
ճանաչել
ճանապարհ
ճանապարհային
ճանապարհել
ճանճ
ճաշ
ճաշակել
ճաշակով
ճաշասեղան
ճաշասենյակ
ճաշատեսակ
ճաշարան
ճաշացանկ
ճաշել
ճապոնացի
ճառագայթ
ճարպիկ
ճարտարապետ
ճարտարապետություն
ճաքած
ճեպընթաց
ճերմակ
ճիշտ
ճկունություն
ճյուղ
ճնճղուկ
ճշտապահ
ճշտել
ճոխ
ճոճանակ
ճոպանուղի
ճոքակոշիկ
ճոքավոր
ճուտ

ճուտիկ

Մ

մազ
մաթեմատիկա
մածուկ
մածուն
մակագրել
մակագրություն
մականուն
մակարդակ
մակերես
մակերեսային
մակերևույթ
մահանալ
մահապատիժ
մահճակալ
մահմեդական
մահմեդականություն
մաղադանոս
մաղթանք
մաղթել
մամ (փղքշ. «մայր» բառի)
մամուլ
մայթ
մայր
մայրական
մայրենի
մայրիկ
մայրուղի
մանանեխ
մանկաբույժ
մանկական
մանկամիտ
մանկապարտեզ
մանր

մանրադրամ
մանրահատակ
մանրամասն
մանրապատում
մանրել
մանուկ (ած.)
մանուկ (գոյ.)
մանուշակ
մանուշակագույն
մաշկ
մաշված
մառախուղ
մաս
մասին
մասնագետ
մասնագիտական
մասնագիտացում
մասնակցել
մասնակցություն
մասնավոր
մասրենի
մասուր
մատ
մատակարար
մատակարարում
մատանի
մատիտ
մատյան
մատնահարդար
մատնահարդարում
մատնաքաշ
մատուռ
մատուցարան
մատուցել
մատուցող
մարգարտյա

մարգարտե
մարդ
մարդամոտ
մարդաշատ
մարդասեր
մարդատար
մարդկային
մարդկություն
մարել
մարզ
մարզադահլիճ
մարզադաշտ
մարզական
մարզակոշիկ
մարզահագուստ
մարզաձև
մարզանք
մարզասրահ
մարզել
մարզիչ
մարզպետ
մարզպետարան
մարզվել
մարզում
մարմին
մարմնագույն
մարմնամարզություն
մարմնեղ
մարտական
մաքրել
մաքրող
մաքուր
մեղալ
մեթոդ
մեխակ
մեծ
մեծահասակ

մեծամասնություն
մեծամիտ
մեծամտանալ
մեծամտություն
մեծանալ
մեծություն
մեկ-մեկ
մեկնաբան
մեկնաբանել
մեկնարկ
մեկնել
մեկնում
մեկնումեկը
մեկուսացած
մեկուսի
մեհյան
մեղադրանք
մեղադրել
մեղադրյալ
մեղեդի
մեղմ
մեղր
մեղու
մեղք
մենախոսություն
մենակ
մենակատար
մեներգ
մեջ
մեջք
մետաղե
մետաղյա
մետրո
մերժել
մերկասառույց
մեքենա

մեքենաներ
մեքենավար
մեքսիկացի
մզկիթ
մթերք
մթնել
մթնոլորտ
միագույն
միակ
միակողմանի
միամիտ
միայնակ
միանալ
միապաղաղ
միաժամանակ
միառժամանակ
միասին
միասնական
միավոր
միավորային
միհարկանի
միմյանց
մինչև
մինուճար
միշտ
միջազգային
միջանկյալ
միջանցք
միջավայր
միջատ
միջատ
միջնակարգ
միջնորմ
միջոցառում
միս
միրգ

միննույն
միօրինակ
մկան
մկանային
մկրատ
մկրտել
մկրտություն
մյուս
մնալ
մնայուն
մշակել
մշակութային
մշակույթ
մշուշ
մոդելավորում
մոլորակ
մոլորվել
մոխրագույն
մոխրաման
մոծակ
մոդես
մոմ
մոմակալ
մոմավառություն
մոշ
մոռանալ
մոտ
մոտակա
մոտենալ
մոտեցնել
մոտիկ
մորաքույր
մորեղբայր
մորենի
մորի

մորքուր (ժող.)
մոայլ
մսադաց
մսամթերք
մտաբերել
մտածել
մտածող
մտապահել
մտավոր
մտերիմ
մտերմաբար
մտերմանալ
մտերմություն
մտնել
մրգահյութ
մրգաման
մրջյուն
մրսել
մրցախաղ
մրցակից
մրցակցություն
մրցամարտ
մրցանակաբաշխություն
մրցաշար
մրցաշարային
մրցավար
մրցել
մրցում
մրցույթ
մուգ
մութ
մուլտիպլիկացիոն
մուծել
մուշտակ
մուտք
մուրաբա

Յ

յուղ
յուղաներկ
յուրահատուկ
յուրացնել
յուրաքանչյուր(ը)

Ն

նա
նախաբան
նախագահ
նախագիծ
նախագծային
նախագծել
նախադպրոցական
նախազգացում
նախակրթարան
նախաճաշ
նախաճաշել
նախանձ
նախապատրաստել
նախասրահ
նախարար
նախարարություն
նախընտրել
նախիր
նախնական
նախորդ
նախքան
նամակ
նամակագրություն
նամականիշ
նայել
նապաստակ
նավ
նավակ

նավահանգիստ
նավապետ
նարինջ
նարնջագույն
նեխուր
նեղ
նեղանալ
նենգ
նետել
ներարկել
ներարկիչ
ներարկում
ներգաղթ
ներգաղթել
ներդաշնակ
ներդնել
ներդրում
ներել
ներկ
ներկայանալ
ներկայացում
ներկապնակ
ներկատուն
ներկել
ներմուծել
ներողամիտ
ներողություն
ներս
ներքև
ներքնազգեստ
ներքնակ
ներքն
նիհար
նիհարել
նիստ
նկատել

նկատողություն
նկար
նկարագիր
նկարագրել
նկարագրություն
նկարազարդել
նկարազարդում
նկարակալ
նկարահանել
նկարել
նկարիչ
նկարչական
նկարչություն
նկուղ
նյարդաբան
նյարդային
նյութ
ննջասենյակ
ննջարան
նշագրիչ
նշանակել
նշանակություն
նշանակում
նշանավոր
նշանդրեք
նշանել
նշանված
նշել
նոթատետր
նոսր
նոր
նորակառույց
նորածև
նորաճ
նորավեպ
նորից

նորոգել
նորվեգացի
նորություն
նպաստ
նպատակ
նոնակ
նստատեղ
նստել
նվագախումբ
նվագել
նվագ
նվագել
նվեր
նվիրել
նվիրում
նվիրվածություն
նրբազգաց
նրբակազմ
նրբանկատ
նրբանցք
նրբերշիկ
նույն
նույնպես
նույնպիսի
նույնքան
նուշ
նուռ
նուրբ
Շ
շաբաթ
շաբաթաթերթ
շագանակ
շագանակագույն
շալվար (խսկց.)
շախմատ

շահագործել
շահավետ
շահել
շապիկ
շատ
շարադրել
շարժասանդուղք
շարժիչ
շարժվել
շարժում
շարժուն
շարունակ
շարունակել
շարք
շաքարախտ
շեկ
շեղ
շերեփ
շերտ
շերտավարագույր
շեփոր
շիկահեր
շինարար
շինարարություն
շիշ
շղթա
շնածուկ
շնիկ
շնորհալի
շնորհակալություն
շնորհանդես
շնորհավորանք
շնորհավորել
շնորհել
շոգ
շոգել

շոկոլադ
շողշողուն
շոշափել
շոր
շվեդ
շվեյցարացի
շվի
շտաբ
շտապ
շտապել
շտապօգնություն
շրջագայել
շրջադարձ
շրջազգեստ
շրջակա
շրջակայք
շրջահայաց
շրջան
շրջանավարտ
շրջանցել
շրջել
շուկա
շուն
շուշան
շուտ
շուտ-շուտ
շուտով
շփոթել
շփվող
շփում
շքամուտք
շքեղ

Ռ

ոգևորություն

ոգնի
ոլոռ
ոհմակ
ողբերգակ
ողբերգություն
ողջ
ողջույն
ողջունել
ոճային
ոճիր
ոմանք
ոչ մեկը
ոչ մի
ոչ ոք
ոչինչ
ոչխար
ոչնչանալ
ոչնչացում
ոսկե
ոսկեգույն
ոսկերիչ
ոսկե
ոսկյա
ոսկոր
ոսկրային
ոսպ
ոսպապուր
ոստիկան
ոստիկանական
ոստիկանություն
ոտք
որակ
որակավորում
որակյալ
որբ
որդեգրել

որդի
որոնել
որոշ
որոշել
որոշում
որոտ
որս
որտե՞ղ
որքա՞ն
որևէ
որևիցե

Ձ

չաղ (ժող.)
չաղանալ
չամիչ
չար
չարաճճի
չարանալ
չարժե
չարիք
չարություն
չափաժո
չափահաս
չափս
չեխ
չեղարկել
չինարեն
չինացի
չիր
չմուշկ
չոր
չորային
չվացուցակ

չվերթ
չուստ
չքնաղ

Պ

պա՛հ
պակաս
պահակ
պահակախումբ
պահանջ
պահանջել
պահարան
պահել
պահո՛ւ
պահպանել
պահպանում
պահք
պաղպաղակ
պայթյուն
պայծառ
պայման
պայմանագիր
պայմանավորվածություն
պայմանավորվել
պայուսակ
պայքարել
պանիր
պաշտոն
պաշտոնակատար
պաշտոնավարել
պաշտոնյա
պաշտպանել
պաշտպանություն
պապ
պապակ
պապիկ

պառավ
պառկել
պաս
պատ
պատահել
պատանդ
պատանի
պատառաքաղ
պատասխան
պատասխանատվություն
պատասխանատու
պատասխանել
պատարագ
պատգամավոր
պատել
պատերազմ
պատերազմական
պատժամիջոց
պատժաչափ
պատժել
պատիժ
պատկանելություն
պատկեր
պատկերազարդել
պատկերասրահ
պատկերել
պատճառել
պատճենել
պատմական
պատմավեպ
պատմել
պատմողական
պատմվածք
պատմություն
պատնեշ
պատշաճ

պատշգամբ
պատվախնդիր
պատվանդան
պատվեր
պատվիրել
պատրաստական
պատրաստել
պատուհան
պար
պարագա
պարահանդես
պարահրապարակ
պարանոց
պարապել
պարապմունք
պարզև
պարզևավճար
պարզևատրել
պարզևատրում
պարել
պարեկ
պարեկային
պարզ
պարզամիտ
պարզել
պարընկեր
պարիսպ
պարծենկոտ
պարող
պարոն
պարս (մեղունների խումբ)
պարսկերեն
պարտադիր
պարտականություն
պարտաճանաչ

պարտավորվել
պարտեզ
պարտություն
պարտվել
պարտվող
պարուհի
պեղում
պետական
պետություն
պետքական
պիստակ
պիտանի
պղնձե
պղպեղ
պնդուկ (ժող.)
պոկել
պողոտա
պողպատե
պսակադրություն
պսակված
պսակվել
պստիկ (խսկց.)
պտտել
պտտվել
պտուղ

Ջ

ջա՛ն
ջահ
ջահել (ժող.)
ջանասեր
ջանք
ջարդել

ջեռոց
ջեռուցում
ջերմ
ջերմանավ
ջերմաստիճան
ջերմել
ջերմորեն
ջերմություն
ջրագիծ
ջրագնդակ
ջրաման
ջրամատակարարում
ջրամբար
ջրային
ջրաներկ
ջրանցք
ջրաշխարհ
ջրաչափ
ջրել
ջրծաղիկ
ջրհոր
ջրոցի (խսկց.)
ջրվեժ
ջութակ
ջուր

Ռ

ռադիո
ռադիոլսող
ռադիոունկնդիր
ռազմաճովային
ռազմական
ռեհան
ռեստորան
ռետին

ռետինե
ռումբ
ռումինացի
ռուս
ռուսալեզու
ռուսախոս
ռուսերեն

Ս

սա
սագ
սագել
սալիկ
սալիկապատ
սալոր
սակարկել
սահադաշտ
սահել
սահման
սահմանադրություն
սահմանային
սահմանափակել
սահմանափակում
սահմանել
սաղարթ
սաղմոն
սամիթ
սայթաքել
սան
սանիկ
սանր
սանրել
սանրվածք
սանրվել
սառը

սառնամանիք
սառնասիրտ
սառնարան
սառցարան
սառույց
սաստիկ
սավան
սար
սարդ
սարսափել
սարսափելի
սարք
սարքավորում
սարքել
սափրվել
սեխ
սեղան
սեղմել
սենյակ
սեռական
սեր
սերկևիլ
սերուցք
սեփական
սեփականություն
սև
սևահեր
սևաչյա
սևուսպիտակ
սև-սպիտակ
սթափ
սիբեխ
սիգ
սիսեռ
սիրալիր

սիրած
սիրահարվել
սիրային
սիրել
սիրելի
սիրիացի
սիրով
սիրտ
սիրտ-անոթային
սիրուն
սիրունանալ
սլացիկ
սխալ
սխալվել
սխտոր
սկեսրայր / կեսրար (ժող.)
սկեսուր
սկյուռ
սկսել
սկսվել
սկուտեղ
սղարան
սմբուկ
սննդակարգ
սննդամթերք
սննդարար
սնունդ
սոխ
սողուն
սոճի
սոված
սովածանալ
սովորաբար
սովորական
սովորել

սովորող
սովորություն
սովորույթ
սոցցանց
սպա
սպանախ
սպանել
սպանություն
սպանված
սպառազինություն
սպառնալիք
սպաս
սպասասրահ
սպասավոր
սպասարկել
սպասարկող
սպասարկում
սպասել
սպարապետ
սպիտակ
սպորտ
սպունգ
ստախոս
ստամոքս
ստանալ
ստացում
ստեղծագործել
ստեղծագործություն
ստեղծել
ստեղնաշարային
ստոր
ստորագրել
ստորագրություն
ստորացուցիչ
ստորգետնյա

ստորոտ
ստուգարք
ստուգել
ստուգող
ստուգողական
ստուգում
սրահ
սրբապատկեր
սրբել
սրբիչ
սրընթաց
սրճարան
սրճել
սրճեփ
սրսկել
սրվակ
սրտաբան
սրտաբույս
սրտխառնոց
սրունք
սուլիչ
սունկ
սուտակ
սուտասան
սուր
սուրճ
սփռոց

Վ
վա՛խ
վա՛յ
վագր
վազանց
վազել
վազորդ

վազք
վազքուղի
վախ
վախենալ
վախկոտ
վահանակ
վաղ
վաղը
վաղուց
վաճառասեղան
վաճառել
վաճառող
վաճառք
վայելել
վայելուչ
վայր
վայրէջք
վայրի
վայրկյան
վանական
վանահայր
վանք
վաշտ
վառ
վառարան
վառել
վառելիք
վավեր
վավերագրական
վատ
վատատես
վարագույր
վարազ
վարակ
վարակել
վարակիչ

վարդ
վարել
վարժ
վարժարան
վարժություն
վարիչ
վարկ
վարկային
վարկառու
վարկատու
վարձ
վարձակալել
վարձել
վարորդ
վարչապետ
վարպետորեն
վարսակ
վարսահարդար
վարսավիր
վարսավիրանոց
վարտիք
վարունգ
վեհ
վեպ
վերաբերել
վերաբերմունք
վերաբերվել
վերադառնալ
վերադարձ
վերականգնել
վերականգնում
վերամշակել
վերամշակում
վերանալ
վերանորոգել

վերանորոգված
վերարկու
վերացած
վերացում
վերաքննություն
վերգետնյա
վերելակ
վերև
վերլուծել
վերլուծություն
վերմակ
վերնագիր
վերնազգեստ
վերնահարկ
վերնանցում
վերնաշապիկ
վերջաբան
վերջանալ
վերջին
վերջնական
վերցնել
վերք
վզնոց
վթար
վիզ
վիճակ
վիճել
վիպագիր
վիպակ
վիպական
վիրաբուժական
վիրաբույժ
վիրակապ
վիրակապարան
վիրակապել

վիրահատարան
վիրահատել
վիրահատություն
վիրավոր
վիրավորանք
վիրավորել
վկա
վկայական
վկայել
վկայություն
վճար
վճարել
վճարում
վճիռ
վնաս
վնասակար
վնասատու
վնասել
վնասվածք
վնասվածքաբան
վշտանալ
վստահ
վստահել
վստահելի
վստահված
վստահություն
վտանգ
վտանգավոր
վտառ
վտիտ
վրա
վրաերթ
վրան
վրացերեն
վրացի

վրձին

S

տաբատ

տալ

տակ

տաղանդավոր

տաղավար

տաճար

տանիք

տանձ

տանջել

տանտեր

տապակած

տապակել

տառապել

տասնավոր

տավար

տավիղ

տատ

տատիկ

տարադրամ

տարածություն

տարածք

տարբերվող

տարբերություն

տարեդարձ

տարեկան

տարեց

տարի

տարիք

տարվել («գրավվել» իմաստով)

տարվել («պարտվել» իմաստով)

տարրական

տափօղակ

տաք

տաքարյուն

տաքդեղ

տաքություն

տգեղ

տգեղանալ

տեգր

տեխնոլոգիա

տեղ

տեղադրել

տեղալ

տեղային

տեղանք

տեղավորել

տեղացի

տեղափոխել

տեղափոխում

տեղեկանալ

տեղեկատվություն

տեղեկատու

տեղեկություն

տեղումներ

տեսագրություն

տեսազանգ

տեսակ

տեսական

տեսանելի

տեսանյութ

տեսնել

տեսք

տեսոր

տեր

տերև

տերևաթափ

տևել

տիեզերագնաց
տիեզերանավ
տիեզերք
տիկին
տխուր
տխուր-տրտում
տխրել
տհաճ
տհաճություն
տղա
տղամարդ
տնական
տնամերձ
տնային
տնկել
տնտեսագիտություն
տնտեսել
տնօրեն
տնօրենություն
տնօրինել
տոլմա
տոկոս
տոհմ
տոմս
տոմսարկղ
տոն
տոնաճառ
տոնական
տոնականություն
տոնակատարություն
տոնավաճառ
տոնել
տոպրակ
տորթ
տպագիր

տպագրել
տպավորիչ
տպավորվել
տպել
տվյալ
տրամադրություն
տրամվայ
տրանսպորտային
տրոլեյբուս
տուգանել
տուգանք
տուժող
տույժ
տուն

Ր

րոպե
րոպեական

Ց

ցած
ցածր
ցածրակրունկ
ցածրահասակ
ցածրահարկ
ցածրաձայն
ցածրարժեք
ցածրորակ
ցամաք
ցամաքային
ցանկանալ
ցանկապատ
ցավ
ցավազրկել
ցավազրկում

ցավակցել
ցավակցություն
ցավել
ցավոք
ցատկել
ցերեկային
ցմահ
ցնծություն
ցնցուղ
ցող
ցորեն
ցուրտ
ցուցաբերել
ցուցադրել
ցուցադրություն
ցուցահանդես
ցուցանակ
ցուցանմուշ
ցուցասրահ
ցուցափեղկ

ՈԻ

ուզել
ուզենալ
ուժ
ուժգին
ուժգնություն
ուժեղ
ուլ
ուլիկ
ուլունք
ուխտավոր
ուկրահնացի
ո՛ւհ

ուղարկել
ուղեբեռ
ուղեգիր
ուղեծիր
ուղեկցել
ուղեկցորդ
ուղեկցորդուհի
ուղեկցուհի
ուղեվարձ
ուղեցույց
ուղիղ
ուղղափառ
ուղղություն
ուղևոր
ուղևորություն
ուղևորվել
ունակություն
ունենալ
ունկնդիր
ուշ
ուշագրավ
ուշադիր
ուշադրություն
ուշանալ
ուշացում
ուշ-ուշ
ուռենի
ուս
ուսանել
ուսանող
ուսապարկ
ուսմասվար (ուսումնական մասի
վարիչ)
ուսումնական
ուսումնասիրել

ուսումնասիրություն
ուսումնարան
ուսուցանել
ուսուցիչ
ուսուցողական
ուսուցչություն
ուսուցում
ուտել
ուտելիք
ուտեստ
ուր
ուրախ
ուրախանալ
ուրախ-զվարթ
ուրախությամբ
ուրախություն
ուրիշ
ուրվագիծ
ուրց
ո՛ւֆ

Փ

փաթաթել
փաթեթ
փաթեթավորել
փաթիլ
փախչել
փախստական
փախուստ
փակ
փական
փակբերան
փակել
փակցնել

փակուղի
փակում
փայլեցնել
փայլուն
փայլվիլուն
փայտ
փայտե
փառահեղ
փառատոն
փաստաբան
փաստաթուղթ
փարթամ
փափուկ
փեսա
փեսացու
փետրագնդակ
փիղ
փիսիկ
փիրուզ
փլավ
փլավքամիչ
փնթի
փնտրել
փշրել
փոթորիկ
փոխադրամիջոց
փոխադրել
փոխանցում
փոխել
փոխըմբռնում
փոխհատուցում
փոխներարկում
փոխտնօրեն
փոկ
փող

փողային
փողկապ
փողոց
փոշեկուլ
փոշի
փոշոտ
փոս
փոստ
փոստային
փոստատար
փոստատուն
փոստարկղ
փոր
փորացավ
փորձառու
փորձառություն
փորձել
փոփոխել
փոփոխություն
փոքր
փոքրածավալ
փոքրահասակ
փոքրամասնություն
փոքրիկ
փոքր-ինչ
փչանալ
փչացած
փչացնել
փչել
փռել
փրկել
փրկություն

Ք

քահանա

քաղաք
քաղաքաբնակ
քաղաքականություն
քաղաքային
քաղաքապետ
քաղաքապետարան
քաղաքավարի
քաղաքացի (քաղաքացիություն
ունեցող)
քաղաքացի (քաղաքում ծնվածը
կամ քաղաքում ապրողը)
քաղաքացիական
քաղաքացիություն
քաղել
քաղցած
քաղցկեղ
քաղցր
քաղցրահամ
քաղցրավենիք
քաղցրեղեն
քամանչա
քամի
քամիչ
քամոտ
քայլ
քայլել
քանակ
քանդակ
քանդակագործ
քանդակագործություն
քանդակել
քանդել
քանի
քանիսը
քանոն

քաշել
քաջ
քավոր
քավորակին
քավորկին
քար
քարայծ
քարանձավ
քարե
քարոզարշավ
քարոզչություն
քարոտ
քարտ
քարտուղար
քարքարոտ
քացախ
քենի
քեռակին
քեռի
քերել
քերիչ
քեֆ (խսկց.)
քիթ
քիմիա
քիչ
քնած
քնապարկ
քնարական
քնել
քննադատ
քննադատական
քննադատել
քննադատություն
քննական
քննարկել

քննարկում
քննել
քննիչ
քննչական
քննություն
քշել
քսել
քսուք
քվեաթերթիկ
քվեատուփ
քվեարկել
քվեարկություն
քրիստոնեական
քրիստոնեություն
քրիստոնյա
քույր (նաև «բուժքույր» իմաստով)
քույրիկ
քուն
քուռակ

Օ

օ՛
օ՛ֆ
օգնել
օգնություն
օգտագործել
օգտակար
օգտվել
օդ
օդակայան
օդանավ
օդանավակայան
օդաչու
օդափոխիչ
օդորակիչ

օդուժ
օժանդակ
օլիմպիական
օձ
օղի
օճառ
օճառաման
օպերային
օջախ
օվկիանոս
օվկիանոսային
օտար
օտարազգի
օտարերկրացի
օտարերկրյա
օր
օրաթերթ
օրակարգ
օրգանիզմ
օրենսդրություն

օրենք
օրինակ
օրինական
օրիորդ
օրինանք
օրինել
օրինված
օրինություն

Ֆ

ֆիզիկա
ֆիզիկական
ֆիլմ
ֆոտոխցիկ
ֆրանսախոս
ֆրանսերեն
ֆրանսիացի

Կայուն բառակապակցություններ

ազգային հերոս
ազգային փոքրամասնություն
ավարտական աշխատանք
արհեստական արբանյակ
արտաքին գործերի
 նախարարություն
աշխատանքային ժամ
աշխատանքային օր
աշխատանքի իրավունք
առցանց ուսուցում
ատամի խոզանակ
ատամի մածուկ
արևային ակնոց
բաժանմունքի վարիչ
բանակի հրամանատար
բարձրագույն կրթություն
բարձրագույն ուսումնական
 հաստատություն
բաց առաջնություն
բաց նամակ
բժշկական կենտրոն (ԲԿ)
բնական արբանյակ
բնական գիտություններ
բնակության վայր
գիտական հոդված
գիտությունների ակադեմիա (ԳԱ)
գիտությունների թեկնածու
գլխավոր բժիշկ
գործադիր մարմին
գործերի կառավարիչ
գործնական նամակ
դպրոցի տնօրենություն
ելքի իրավունք
երեկ չէ առաջին օրը

երթուղային տաքսի
երկաթուղային կայարան
Երկիր մոլորակ
երկնային մարմին
Երկրի բնական արբանյակ
զարգացման կենտրոն
զինված ուժեր
էլեկտրոնային հասցե
էլեկտրոնային մատյան
ընտանի կենդանի
ընտրելու իրավունք
ընտրովի մարմին
ընտրվելու իրավունք
թեյի գդալ
թեյի բաժակ
թերի կրթություն
թռիչքի ժամանակացույց
թվային գրագիտություն
ժամանցի կենտրոն
իրավունքների սահմանափակում
լեզվի կենտրոն
լվացքի մեքենա
լույսի արագություն
խղճի ազատություն
խնամքի կենտրոն
խոսքի ազատություն
ծանր հրետանի
ծովի մակերևույթ
կամքի ուժ
կեցության իրավունք
կուտակային քարտ
կրթական համակարգ
կրթության իրավունք
կրթության, գիտության, մշակույթի

և սպորտի նախարարություն
համաշխարհային ծրագիր
համաշխարհային պատերազմ
հանգստի ժամ
հանգստյան օր
հանրային հեռուստաընկերություն
հասարակական գիտություններ
հավաքների ազատություն
հեղուկ օճառ
հեռակա ուսուցում
հեռավար դասընթաց
հետադարձ կապ
հերթապահ բժիշկ
հերթապահ բուժքույր
հիմնական դպրոց
հոգեկան վիճակ
հրաման կատարել
ձեռքերի խնամք
ձեռքի ժամացույց
ճաշի գդալ
ճաշի ժամ
մասնագիտական կրթություն
մասնավոր դպրոց
մարդու իրավունքներ
մարդու իրավունքների պաշտպան
մարզական խաղեր
մարզական կենտրոն
մթնոլորտային տեղումներ
միջազգային դպրոց
միջնակարգ դպրոց
միջնակարգ կրթություն
մշակույթի կենտրոն
մուտքի իրավունք

պաշտոնական նամակ
պաշտպանության բանակ

պաշտպանության
 նախարարություն
պատի ժամացույց
պարարվեստի ուսումնարան
պարեկային ծառայություն
պարենային ծրագիր
պետական դպրոց
պետական պաշտոնյա
սառը պատերազմ
սեռական դաստիարակություն
սեռական պատկանելություն
սեռական փոքրամասնություն
սպասարկման ոլորտ
վայրի կենդանի
վաղը չէ մյուս օրը
վարակիչ հիվանդություն
վարձով տուն
վարորդական իրավունք
վերակենդանացման բաժանմունք
վիրաբուժական բաժանմունք
տարրական դպրոց
տարրական կրթություն
տեղական ինքնակառավարման
 մարմին
տեղեկատվական տեխնոլոգիա
տեսարժան վայր
ուղիղ եթեր
օգտակար հանածո
օտար լեզու

Հարադիր բայեր

| | |
|------------------------|------------------------|
| աշխարհ գալ | թույլտվություն հարցնել |
| առաջ գնալ | ժամանակ անցկացնել |
| արձակուրդ գնալ | իրավունք ունենալ |
| բաժակ բարձրացնել | լավ զգալ |
| բանակցություններ վարել | լաց լինել |
| բաց թողնել | լվացք անել |
| բեմ դուրս գալ | խաղաղություն հաստատել |
| բնակություն հաստատել | խորհուրդ հարցնել |
| գերի ընկնել | խորհուրդ տալ |
| գնում կատարել | ծրագիր կազմել |
| գոլ խփել | կանգ առնել |
| գոհ լինել | կապի մեջ մնալ |
| գոհ մնալ | կատակ անել |
| գոյություն ունենալ | կարգի բերել |
| գովասանքի արժանանալ | կարեր դնել |
| գրի առնել | կարիք ունենալ |
| դաս տալ | կարծիք հայտնել |
| դասընթաց վարել | կյանքից հեռանալ |
| դեր խաղալ | կուլ տալ |
| դժգոհ մնալ | կրթություն ստանալ |
| դուր գալ | հաղթանակ տանել |
| դուրս գալ | հաճույք ստանալ |
| դուրս գրել | համաձայն լինել |
| եթեր արձակել | համաձայնության գալ |
| եթեր տալ | հանգիստ մնալ |
| ելույթ ունենալ | հանդես գալ |
| երթուղի դուրս գալ | հաշիվ բացել |
| զգոն լինել | հաշիվը փակել |
| զեկուցում կարդալ | հաշվի առնել |
| զոհ դառնալ | հաշտություն կնքել |
| ընկերություն անել | հասանելի լինել |
| թույլ տալ | հարց տալ |

հաց կիսել
հաց ուտել
հետ ընկնել
հետ մնալ
հետ տալ
հոգ տանել
հույս ունենալ
հսկողության տակ առնել
հրաժեշտ տալ
հրավեր ուղարկել
ծեռք բերել
ծու ածել
ծու դնել
ճանապարհ ընկնել
մահապատժի ենթարկել
մաղթանք հղել
մարզանք անել
նեղություն տալ
ներկա լինել
ներողություն խնդրել
նվիրված լինել
շնորհակալ լինել
շնորհակալություն հայտնել

որոշում կայացնել
ուշադրություն դարձնել
չափահաս դառնալ
պաս պահել
պարտք մնալ
պարտքը փակել
սեղան գցել
վազանց կատարել
վայրէջք կատարել
վատ զգալ
վարձով տալ
վեր կենալ
վնաս հասցնել
տեղ զբաղեցնել
տեղյակ լինել
տեղյակ պահել
տպավորություն թողնել
ցավակցություն հայտնել
օգնություն խնդրել
օգնություն ցույց տալ
օգուտ տալ
օդ բարձրանալ
օրենքը խախտել

Դարձվածքներ

ախորժակ պահել - սպասել համեղ բան ուտելու
ախորժակը բացվել - ուտելու ցանկություն առաջանալ
ախորժակը փակվել - ուտելու ցանկությունը կորցնել
ականջի ետև գցել - մոռացության տալ, հաշվի չառնել
աղ ու հացով - հյուրասեր, առատաձեռն
աղջիկ տալ - ամուսնացնել
աղջկան մարդու տալ - ամուսնացնել
անակնկալի գալ - անսպասելի մի բան տեսնել, մի բանի հանդիպել
անզեն աչքով - սեփական տեսողությամբ
աշխարհ տեսած - կյանքի մեծ փորձ ունեցող

աշխարհից կտրված - առանձնացած, ինքնամփոփ
 աշխարհով մեկ լինել – ուրախանալ, ցնծալ
 աչք դնել - հավանել
 աչքերը փակ - վստահորեն, կուրորեն
 աչքերին չհավատալ - զարմանալ, ապշել
 աչքը լի / աչքը կուշտ - գոհ, բավարարված
 աչքը ծակ - ագահ, անկուշտ
 աչքը կուշտ - գոհ, բավարարված
 աչքի անցկացնել - որևէ գրության թեթևակի ծանոթանալ, դիտել, զննել
 աչքի ընկնել - ուրիշներից առանձնանալ, տարբերվել, նկատվել
 աչքի ընկնող – նշանավոր, տարբերվող
 աչքի լույսի պես պահել - խնամքով պահել, պահպանել
 աչքին ընկնել - նկատվել, հանկարծ երևալ
 աչքից ընկնել - այլևս չսիրվել, չհարգվել
 աչքից հեռու մնալ - ուշադրությունից, տեսադաշտից դուրս մնալ
 ասող-խոսող - զրուցել սիրող. հեշտ հաղորդակցվող
 աստեղային ժամ - արվեստագետի, անձի համար ամենանշանավոր օրը
 արցունքն աչքերին – արտասովոր
 բախտը բերել – հաջողակ լինել, հաջողություն ունենալ, հաջողել
 բախտի բերմամբ - բարեբախտաբար, պատահաբար
 բարի ճանապարհ՝ ճամփա – մեկնողներին ուղղված բարեմաղթություն
 բարով մնաս / մնաք - մեկնողի հրաժեշտի արտահայտությունը
 բերանը բաց մնալ - զմայլվել, հիանալ
 գլխին փորձանք բերել - մի վատ բանի հասցնել, դժբախտություն պատահել
 գլխով հատուցել - կյանքը զոհաբերել հանուն մի բանի
 գլուխ կոտրել - մի բանը հասկանալու համար չարչարվել
 գլուխ հանել - հասկանալ, կողմնորոշվել, կարողանալ կատարել
 գլուխ պահել - ծուլանալ
 գլուխ տալ - բարևել, ողջունել, խոնարհվել
 գլուխը կախ - իր գործով տարված
 գլուխը կորցնել - շփոթվել, մոլորվել
 գլուխը պտտվել - գլխապտույտ ունենալ
 գլուխը տանել - ծանձրացնել
 գլուխն ուռչել - մի բանից հոգնել, ծանձրանալ
 գործը գլուխ բերել - գործը հաջողեցնել
 գործը տեղից շարժել - աշխատանքն առաջ մղել

գործի մարդ - գործունյա
 գործից գլուխ հանել - կարողանալ, հասկանալ
 գույնը գցած - գունատ
 գույնը գցել - գունատվել
 դատարկ գլուխ - հիմար, ապուշ
 երկար-բարակ - մանրամասն
 լեզու գտնել - իրար հասկանալ
 լեզուն կուլ տալ - լռել, պապանձվել
 լեղին պատռվել - շատ վախենալ, սարսափահար լինել
 խելքին մոտ - հնարավոր
 ծամել, բերանը դնել - մանրամասն ու հասկանալի բացատրել
 կաշվից դուրս գալ - շատ չարչարվել
 կարճ ասած - համառոտակի՝ առանց մանրամասների
 կարճ կապել - համառոտ ասել վերջացնել
 կրակի կտոր- ժիր
 հալից ընկնել - հոգնել
 ձեռք բերել - մի բան ստանալ, մի բանի տիրանալ
 ձեռք ձեռքի - միասին, անբաժան
 ձեռք ձեռքի տալ - հաշտվել
 ձեռք մեկնել - օգնել
 ձեռք տալ - հարմար լինել
 ձեռքը բաց - շռայլ
 ձեռքը բռնել - արգելել, թույլ չտալ
 ձեռքը փակ - ժլատ
 ձեռքով անել - ողջունել, բարևել
 մազ մնալ - շատ քիչ մնալ,
 մազից կախված - շատ վտանգավոր
 մազից պրծնել - հազիվ փրկվել
 մատից փուշ հանել - օգտակար գործ կատարել, օգնել, աջակցել
 մարմնով դող անցնել - վախից կամ որևէ զգացումից փշաքաղվել
 մեջքը բռնվել- մեջքի ցավ ունենալ
 մի բարձի ձերանալ - ապրել մինչև խոր ձերությոն, իրարից չբաժանվել
 մի կերպ - դժվարությամբ, հազիվհազ
 մի շնչով - միանգամից, առանց ընդհատելու
 մինչև ոսկորները - ամբողջովին
 մինչև ոսկորները թրջվել - ամբողջովին թրջվել

մտքերը հավաքել - կենտրոնանալ
մտքից հանել - մոռանալ
մտքում պահել - չմոռանալ, հիշել
շունչը պահած - խիստ լարված, խորապես հուզված
շունչը տեղը բերել - շնչելը կարգավորել
ուսում առնել - կրթվել, սովորել
ջուր դառնալ - սաստիկ թրջվել, շատ քրտնել
ջրի պես - վարժ, սահուն, անգիր
սիրտը բաց - հյուրասեր, առատաձեռն
սիրտը գրավել - սիրահարեցնել իրեն, սիրվել մեկի կողմից
սիրտը խառնել - փսխելու վիճակում լինել
սիրտը կախ - անտրամադիր
սիրտը կոտրել - ցավ պատճառել, ընկճել, վշտացնել
սիրտը կպչել - շատ հավանել, սիրահարվել
սիրտը կտոր-կտոր լինել - վշտանալ
սիրտը շահել - սիրաշահել
սիրտը տաքանալ - սիրով լցվել մեկի նկատմամբ
սրտով լինել - ցանկացածը կատարվել, հավանել
վախից կուչ գալ - վախից կծկվել
վայրկյան առաջ - շուտ, անհապաղ
տանը մնալ - չամուսնանալ
ուսում առնել - կրթվել, սովորել
փշերի վրա - անհանգիստ
քաղցր աչքով նայել - բարյացակամ լինել
քիթը ցից - մեծամիտ
օր առաջ / ժամ առաջ - որքան հնարավոր է՝ շուտ

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Գ1-Գ2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ Գ1-Գ2 ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գ մակարդակ (հմուտ գործածող)

Սա լեզվի տիրապետման բարձր մակարդակն է, այն փուլը, երբ սովորողը կարող է գրեթե ցանկացած լեզվական միջավայրում ազատ հաղորդակցվել տարբեր (կենցաղայինից մինչև մասնագիտական) թեմաների շուրջ առանց նախապես պատրաստվելու:

Գ1 (ինքնուրույն գործածողի մակարդակ)

Սովորողն այս մակարդակում տիրապետում է բավական հարուստ բառապաշարի և լեզվական բազմազան կաղապարների, լեզվի քերականական իրողություններին, կարողանում է դեմառդեմ կամ հաղորդակցության այլևայլ միջոցներով գրավոր կամ բանավոր հաղորդակցվել տարբեր թեմաներով, մտքերն արտահայտել սահուն և անկաշկանդ, առանց բառեր և արտահայտություններ փնտրելու, երկխոսել տարբեր միջավայրերում՝ հարցադրումներ անելով և պատասխանելով հարցերին, գրավոր և բանավոր հստակ, լավ կառուցված նախապատրաստված և հանպատրաստից խոսք շարադրել, լեզուն արդյունավետ գործածել ուսումնական, գիտական և մասնագիտական նպատակներով:

Գ2 (լեզվակրի մակարդակ)

Սովորողն այս փուլում լեզվին տիրապետում է լեզվակրի մակարդակով: Տիրապետելով բառապաշարային և քերականական նրբություններին՝ նա կարողանում է ազատ հաղորդակցվել բոլոր ոլորտներում և տարբեր իրադրություններում՝ օգտվելով լեզվի հոմանշային հարստությունից, դրսևորել լեզվակրին բնորոշ խոսքային վարքագիծ: Սովորողն այս փուլում կարողանում է տարբեր ոճերի և տարբեր ծավալի տեքստեր կազմել՝ գիտական հոդված, զեկուցում, դասախոսություն, գործնական գրություն, հրապարակախոսական հոդված, շնորհավորական ուղերձ, հանդիսավոր խոսք և այլն, անձնական, մասնագիտական և պաշտոնական զրույցներ վարել, գնահատել փաստերն ու իրողությունները, համադրել և ի մի բերել գրավոր և բանավոր տարբեր աղբյուրներից քաղված տեղեկությունները, կարծիք հայտնել, քննարկել տարբեր իրադարձություններ (քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն):

Ոլորտներ և թեմաներ

Սովորողը Գ մակարդակում կարող է ազատորեն հաղորդակցվել ցանկացած թեմայով և հաղորդակցական բոլոր իրավիճակներում: Այս մակարդակի համար ևս կարևորվում են՝

- միջանձնային հարաբերությունների ոլորտը,
- սոցիալ-կենցաղային ոլորտը,
- սոցիալ-մշակութային ոլորտը՝ իր ենթաօլորտներով (պետաիրավական, հասարակական, կրթական, առողջապահական):

Սովորողը հիշյալ ոլորտների շրջանակում պետք է կարողանա անկաշկանդ դրսևորել հաղորդակցական տարբեր հմտություններ:

Հաղորդակցումն ապահովող հմտություններ

Սովորողը Գ մակարդակում լիարժեք տիրապետում է խոսքի ընկալման ու կառուցման չորս հմտություններին:

Ունկնդրում

Լսողական ընկալումը ենթադրում է մի շարք կարողությունների դրսևորում.

- լսել և ամբողջությամբ հասկանալ մեկ կամ միաժամանակ մի քանի խոսողների բանավոր խոսքը,
- հնարավորինս լիարժեք հասկանալ խոսողի հաղորդակցական մտադրությունները, խոսքի բովանդակությունը և հուզարտահայտչական առանձնահատկությունները,
- ընկալել խոսակցի մտադրությունները և խոսքի մանրամասները՝ արտակա և ներակա իմաստներով,
- տարաբնույթ տեղեկությունները հասկանալ ընդհանուր, մանրամասն և քննադատական ընկալման մակարդակով,
- հասկանալ խոսողի հիմնական նպատակները, խոսքի նյութի նկատմամբ նրա վերաբերմունքը:

Ունկնդրելու հմտության ցուցիչներ (Գ մակարդակ)

| | <i>Հայտարարություններ և հրահանգներ</i> | <i>Լեզվակրի խոսք և լեզվակիրների գրույց</i> | <i>Հեռուստատեսային և ռադիոյի հաղորդումներ, ձայնագրություններ</i> | <i>Որպես հանդիսատես</i> |
|----|--|--|--|--------------------------------|
| Գ2 | Կարողանում է հեշտությամբ հասկանալ | Կարողանում է հեշտությամբ հետևել ցանկա- | Կարողանում է առանց դժվարության ընկալել | Կարողանում է առանց դժվարության |

| | | | | |
|----|--|--|---|--|
| | <p>ձայնագրված ցանկացած հրահանգ կամ հայտարարություն, աշխատանքային բարդ կարգադրություն և այլն, հետևել հրահանգներին ու ցուցումներին, նույնիսկ եթե ձայնագրությունը տեխնիկապես աղավաղված է:</p> | <p>ցած (նույնիսկ վերացական և իր մասնագիտությամբ նրա չառնչվող) թեմայով իր ներկայությամբ ծավալվող քննարկման, հասկանալ բոլոր մանրամասները, ներկա իմաստները, խոսողների նույնիսկ ոչ բացահայտ վերաբերմունքը:</p> | <p>ռադիոհեռուստատեսային և ձայնագրված ցանկացած խոսք՝ անկախ նրանից, թե ինչ արագությամբ է այն արտասանվում:</p> <p>Կարողանում է առանց ճիգերի հասկանալ փաստավավերագրական ֆիլմերի տեքստերը՝ անկախ ընթերցողի առոգանությունից և խոսքի արագությունից, գեղարվեստական ֆիլմի հերոսների խոսքը, նույնիսկ եթե այն համեմված է առօրյա խոսակցական բառերով, բարբառաբանություններով, դարձվածային արտահայտություններով և այլն:</p> | <p>հետևել մասնագիտական դասախոսությունների, ելույթների կամ զրույցների ու քննարկումների, նույնիսկ եթե խոսքում գործածվում են անձանոթ եզրույթներ և լեզվական բարդ կառույցներ:</p> <p>Կարողանում է առանց դժվարության հասկանալ ելույթ ունեցողների, ասմունքողների, դերասանների խոսքը համերգների ժամանակ և թատերական ներկայացումներում:</p> |
| Գ1 | <p>Կարողանում է անհրաժեշտ տեղեկություններ քաղել տեխնիկապես ցածրորակ և աղմուկով ուղեկցվող ձայնագրություններից (կայարաններում, օդանավում և այլն):</p> | <p>Կարողանում է առանց դժվարության հետևել իր ներկայությամբ ծավալվող խմբային քննարկմանը և հասկանալ նրա բովանդակությունը:</p> | <p>Կարողանում է հասկանալ ռադիոյով, հեռուստացույցով կամ համացանցային տեսանյութերում վերացական բարդ թեմաներով քաղաքական, մասնագիտական,</p> | <p>Կարողանում է առանց լարվելու հետևել իր բնագավառին առնչվող դասախոսություններին, զրույցներին ու քննարկումներին:</p> |

| | | | |
|---|---|---|---|
| <p>վակայաններում, հասարակական այլ վայրերում հնչող հայտարարություններ և հրահանգներ):</p> <p>Հիմնականում կարողանում է հասկանալ տեխնիկական տեղեկատվությունը (օրինակ՝ ամեն օր օգտագործվող սարքավորումների մասին աշխատանքային կարգադրությունները), կարողանում է հետևել հրահանգներին ու ցուցումներին:</p> | <p>ն մանրամասները, նույնիսկ եթե թեման անծանոթ է:</p> <p>Կարողանում է հասկանալ հեռախոսային խոսակցությունները, ծայրային հաղորդագրությունները, նույնիսկ եթե դրանք տեխնիկական խնդիրներ ունեն:</p> <p>Կարողանում է հասկանալ դարձվածային արտահայտություններ և խոսակցական ոճին բնորոշ բառեր և խոսքային կառույցներ:</p> | <p>պաշտոնական և այլ տեքստեր (առանձին դեպքերում պարզաբանման կարիք չգալով):</p> <p>Կարողանում է հասկանալ տեղեկատվական բնույթի հաղորդումներում, այդ թվում՝ լուրերի թողարկումներում հնչող տեքստերը, ուղիղ եթերով ընթացող հարցազրույցներում, բանավեճերում հնչող տեսակետները, այդ թվում խոսողների ոչ բացահայտ արտահայտած վերաբերմունքը խոսքի նյութի նկատմամբ:</p> <p>Կարողանում է հասկանալ վավերագրական և գեղարվեստական ֆիլմերի բովանդակությունը:</p> | <p>Կարողանում է հասկանալ թատերական ներկայացումներ ի տեքստերը (առանձին խոսքային պատկերների դեպքում պարզաբանման կարիք ունենալով):</p> |
|---|---|---|---|

Ընթերցում

Ընթերցումը ենթադրում է հետևյալ հմտությունների դրսևորումը՝

- կարդալ բարդ և ծավալուն տեքստեր (քաղաքական, մասնագիտական, գեղարվեստական և այլն), խորապես հասկանալ կարդացածը, գնահատել հեղինակի մոտեցումը,
- հնարավորինս լիարժեք հասկանալ տեքստի մանրամասները, հեղինակի մտադրությունները,

- ազատ կողմնորոշվել տարբեր տեքստերում ներկայացված տեղեկությունների ու փաստերի մեջ, անհրաժեշտության դեպքում դուրս բերել դրանք, վերլուծել և համադրել:

Ընթերցման հմտության ցուցիչներ (Գ մակարդակ)

| | <i>Ընթերցում ընկալման համար</i> | <i>Ընթերցում կողմնորոշվելու համար</i> | <i>Նամակագրության ընթերցում</i> | <i>Ընթերցում տեղեկություններ ձեռք բերելու համար</i> |
|----|--|--|---|---|
| Գ2 | <p>Կարողանում է հասկանալ և մեկնաբանել տարբեր ոճերի ու ժանրերի՝ բարդ կառուցվածք և բազմազան բառապաշար ունեցող տեքստեր:</p> <p>Կարողանում է հասկանալ ծավալուն և բարդ տեքստեր՝ նկատելով ոճի աննշան տարբերությունները, ինչպես նաև ընկալելով հիմնական գաղափարը, ենթատեքստն ու ներիմաստները, հեղինակի ոչ բացահայտ վերաբերմունքը և այլն:</p> | <p>Կարողանում է նոր սարքավորումների կամ ընթացակարգերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ գտնել բարդ և ծավալուն հրահանգներում ու փաստաթղթերում (անկախ ոլորտից և մասնագիտությունից):</p> | <p>Կարողանում է հասկանալ ցանկացած նամակ, հաղորդագրություն (անձնական, գործնական և պաշտոնական):</p> | <p>Կարողանում է լիովին ընկալել ցանկացած տեքստ՝ անկախ բարդությունից, ծավալից, ուղղվածությունից (հասարակական, մասնագիտական և այլն):</p> <p>Կարողանում է դուրս բերել բացահայտ և ոչ բացահայտ տեղեկություններ, խնդրի նկատմամբ հեղինակի մոտեցումներն ու վերաբերմունքը և այլն:</p> |
| Գ1 | <p>Կարողանում է հասկանալ իր մասնագի-</p> | <p>Կարողանում է նոր սարքավորումների կամ ընթացակարգերի</p> | <p>Կարողանում է հասկանալ ցանկացած</p> | <p>Կարողանում է անհրաժեշտ տեղեկություններ քաղել</p> |

| | | | |
|--|--|---|---|
| <p>տությանն առջվող կամ դրա հետ կապ չունեցող ընդարձակ ու բարդ տեքստեր՝ մի քանի անգամ կարդալով դժվար հատվածները:</p> | <p>վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ գտնել բարդ և ծավալուն հրահանգներում ու փաստաթղթերում (անկախ ոլորտից և մասնագիտությունից)՝ հարկ եղած դեպքում դժվար հատվածները մի քանի անգամ կարդալով:</p> | <p>նամակ, հաղորդագրություն (անձնական, գործնական և պաշտոնական)՝ հազվադեպ օգտվելով բառարանից:</p> | <p>տարբեր բարդություն ունեցող տեքստերից, մասնագիտական աղբյուրներից, տարբերել հեղինակների արտահայտած կարծիքները:</p> |
|--|--|---|---|

Բանավոր խոսք

Բանավոր խոսքի կառուցումը ենթադրում է այնպիսի հմտությունների դրսևորում, ինչպիսիք են՝

- տարբեր թեմաներով հակիրճ և ծավալուն բանավոր խոսք կառուցելը,
- զրույցների և քննարկումների ժամանակ խոսակիցներին անկաշկանդ արձագանքելը,
- տարբեր թեմաներով և տարբեր նպատակներով սահուն ու փաստարկված խոսք կառուցելը,
- որևէ խնդրի վերաբերյալ սեփական մոտեցումները և վերաբերմունքը հստակ ձևակերպելը:

Բանավոր խոսքի հմտության ցուցիչներ

| | <i>Երկխոսություն</i> | <i>Մենախոսություն</i> |
|----|--|--|
| Գ2 | <p>Կարողանում է պաշտոնական և անձնական թեմաներով անկաշկանդ խոսել առանց որևէ լեզվական սահմանափակման: Կարողանում է առանց կաշկանդվելու երկխոսել լեզվակիրների և ոչ լեզվակիրների հետ, մասնակցել տարբեր թեմաներով խմբային քննարկումների, բանավեճերի:</p> <p>Կարողանում է հստակ ձևակերպել և անկաշկանդ արտահայտել լավ</p> | <p>Կարողանում է ներկայացնել սահուն, մանրամասն, տրամաբանական կուռ կառուցվածք ունեցող և քերականորեն ճիշտ ձևակերպված նկարագրական, պատմողական կամ դատողական խոսք՝ օգտագործելով ոճին համապատասխան բառապաշար:</p> <p>Կարողանում է տարբեր թեմաներով վստահ և սահուն խոսք կառուցել՝ այն համապատասխանեցնելով լսարանին / լսարանի պահանջներին:</p> |

| | | |
|----|--|--|
| | <p>փաստարկված տեսակետը՝ չգիջելով լեզվակիրներին:</p> <p>Տիրապետում է լեզվի հոմանշային ու դարձվածային հարուստ պաշարին, կարողանում է համարժեք արձագանք տալ զրուցակիցների խոսքին՝ կառուցելով զրույցին համահունչ սահուն և փաստարկված խոսք, արտահայտելով իմաստային նրբերանգներ:</p> | |
| Գ1 | <p>Կարողանում է առօրյա կյանքում առանց կաշկանդվելու զրույց վարել՝ օգտագործելով լեզվական համապատասխան միջոցներ՝ իր զգացմունքներն ու ապրումները, վերաբերմունքը ներկայացնելու, մտքերն այլաբանորեն արտահայտելու համար, կատակել:</p> <p>Կարողանում է առանց կաշկանդվելու մասնակցել ընկերների հետ խմբային քննարկումների ծանոթ կամ անծանոթ թեմաներով:</p> <p>Կարողանում է պաշտոնական զրույցի կամ բանավեճի ընթացքում հիմնավորված արձագանքել հարցադրումներին, պարզաբանումներ տալ, պաշտպանել սեփական տեսակետը՝ անհրաժեշտ փաստարկներով:</p> | <p>Կարողանում է վերարտադրել ընթերցած գեղարվեստական և ոչ գեղարվեստական տեքստերի, հեռուստատեսությամբ և ռադիոյով լսած հաղորդումների բովանդակությունը՝ վերաձևակերպելով նյութի շարադրանքը:</p> <p>Կարողանում է համակարգված և մանրամասն նկարագրել և/կամ բնութագրել տարբեր առարկաներ և իրողություններ:</p> <p>Կարողանում է որևէ թեմա ներկայացնել ունկնդիրներին ելույթի կամ զեկուցման ձևով, հիմնավորել սեփական տեսակետը:</p> |

Գրավոր խոսք

Գրավոր խոսքի կառուցումը ենթադրում է այնպիսի հմտությունների դրսևորում, ինչպիսիք են՝

- տարբեր թեմաներով հակիրճ և ծավալուն տեքստեր կառուցելը,
- ուրիշների հետ անձնական և պաշտոնական նամակագրություն վարելը,

- տարբեր թեմաներով և տարբեր նպատակներով սահուն ու փաստարկված տեքստ կառուցելը,
- որևէ խնդրի վերաբերյալ սեփական մոտեցումները, վերաբերմունքը կամ գնահատականը գրավոր հստակ ձևակերպելը:

Գրավոր խոսքի հմտության ցուցիչներ

| | <i>Ընդհանուր գրավոր հաղորդակցում</i> | <i>Նամակներ և կարճ հաղորդագրություններ</i> | <i>Գրառումներ</i> | <i>Սլոեդազործական տեքստ</i> |
|----|---|--|---|---|
| Գ2 | Կարողանում է գրել տրամաբանորեն և քերականորեն կապակցված ընդարձակ խոսք՝ անհրաժեշտ և հիմնավորված տեղեկություններ հաղորդելու համար: | Կարողանում է ցանկացած թեմայով ընդարձակ նամակ գրել (անձնական, գործնական և պաշտոնական): Կարողանում է հաղորդագրությունների միջոցով հակիրճ և լիարժեք տեղեկություններ հաղորդել ուրիշներին: | Կարողանում է դասախոսությունների, գիտաժողովների, խորհրդակցությունների ժամանակ գրագետ, անսխալ և համակարգված գրառումներ անել: Կարողանում է մասնագիտական գրականությունից հստակ և համակարգված գրառումներ կատարել: | Կարողանում է գրել բոլոր ոճերին բնորոշ տարաբնույթ տեքստեր, շարադրել մասնագիտական տեքստեր (զեկուցում, հոդված, հաղորդում)՝ վերլուծելով, համադրելով և գնահատելով տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններն ու փաստերը, և անհրաժեշտ եզրահանգումներ անել: |
| Գ1 | Կարողանում է արդյունավետ կապ հաստատել այլոց հետ՝ գրավոր փոխանցելով անհրաժեշտ տեղեկություններ, սահուն և անսխալ լրացնել մասնագիտական ուղղվածություն | Կարողանում է գրել անձնական և գործնական (թղթային և էլեկտրոնային) նամակներ՝ պահպանելով դրանց գրության ընդունված ձևաչափը: | Կարողանում է ճշգրիտ և տեքստին շատ մոտ գրառումներ կատարել դասախոսության ժամանակ: | Կարողանում է հստակ արտահայտել մտքերը ճիշտ կառուցված տեքստում՝ մանրամասն ներկայացնելով իր կարծիքն ու տեսակետները, ընդգծելով կարևոր հարցերը: |

| | | | |
|---|--|--|---|
| <p>ունեցող փաստաթղթեր, գրել ընդարձակ և մանրամասն ինքնակենսագրություն:</p> | | | <p>Կարողանում է գրել ընդարձակ տեքստեր Հայաստանի կենցաղի, մշակույթի, պատմության վերաբերյալ, ձևակերպել գործնական փաստաթղթեր (հայտարարություններ, հաշվետվություններ և այլն):</p> |
|---|--|--|---|

Լեզվական գիտելիք

Հնչյունաբանություն, ուղղագրություն, ուղղախոսություն

Զարգացնելով նախորդ մակարդակներում յուրացրածը՝ սովորողը Գ1 մակարդակում պետք է շարունակի հղկել արտասանական հմտությունները և Գ2 մակարդակում դրսևորի՝ բառերի անսխալ արտասանության և շեշտադրության (այդ թվում՝ ընդհանուր կանոններից շեղումներ, օտար բառերի և դրանց թեք ձևերի շեշտադրություն), նախադասությունների ճիշտ առոգանության հմտություններ, ինչպես նաև լիովին տիրապետի հայերենի ուղղագրության նրբություններին (այդ թվում՝ գծիկով, անջատ կամ միասին գրվող բառերի, բաղադրյալ հատուկ անունների գրությանը, ուղղագրական զուգաձևություններին և այլն):

Բառապաշար

Սովորողը Գ մակարդակում պետք է տիրապետի համագործածական բառերի բավական հարուստ պաշարի, սահմանափակ կիրառություն ունեցող բառերի տարբեր խմբերի, առավելաբար իր զբաղմունքին կամ մասնագիտությանն առնչվող գիտաբառերին (այդ թվում՝ նեղ մասնագիտական բառերին), կարողանա ճիշտ և տեղին գործածել դարձվածքներ, շրջասույթներ, խոսքի պատրաստի վերարտադրելի այլ միավորներ: Նա պետք է կարողանա հեշտությամբ և ճիշտ կողմնորոշվել հոմանիշների և հարանունների ընտրության հարցում, խոսքում թույլ չտա բառագործածության սխալներ, խուսափի օտարաբանությունների գործածությունից և այլն:

Սովորողն այս մակարդակում պետք է տիրապետի հայերենի բառակազմական կաղապարներին, անհրաժեշտության դեպքում համաբանությամբ կամ համապատասխան կաղապարներով կարողանա նոր բառեր կազմել, ճիշտ և տեղին գործածել հարադրական կազմությունները և այլն:

Քերականություն

Սովորողը Գ1 մակարդակում պետք է կատարելագործի ուսումնառության նախորդ փուլերում ձեռք բերած քերականական գիտելիքը և Գ2 մակարդակում լիարժեք տիրապետի հայերենի քերականությանը: Նա պետք է կողմնորոշվի քերականական զուգաձևությունների հարցում (հոլովական, բայական, խնդրառական զուգաձևություններ), տիրապետի քերականական հոմանիշներին՝

- ձևաբանական (հոգնակիի ձևեր, հոլովաձևեր, հոլովաձև-կապային կառույց, հարադրական և համադրական բայեր),
- շարահյուսական (դրական և ժխտական, հարցական և հրամայական նախադասություններ, համադասական և ստորադասական նախադասություններ և այլն):

Սովորողը պետք է կարողանա ընտրել անհրաժեշտ լեզվական միավորները՝ ելնելով խոսքի նպատակից, ոճից և այլն:

Ոճաբանական գիտելիք

Սովորողը Գ մակարդակում պետք է կարողանա տարբեր ժանրերի գրավոր և բանավոր խոսք կառուցել՝ հաշվի առնելով գործառական ոճերի բառապաշարային և քերականական առանձնահատկությունները:

ՄԻՋՆՈՐԴԱՎՈՐՈՒՄ

Միջնորդավորումը բնութագրվում է որպես հաղորդակցական գործունեության մի տեսակ, երբ լեզուն գործածողը/սովորողը խթանում է հաղորդակցումը՝ հանդես գալով որպես սոցիալական միջնորդ, որը կամուրջներ է ստեղծում և օգնում է բովանդակություն փոխանցել երբեմն նույն լեզվի շրջանակում կամ նրա տարբեր դրսևորումների միջև (օրինակ՝ բարբառ-գրական լեզու), երբեմն՝ տարբեր լեզուների: Ըստ այսմ տարբերակում են *ներլեզվական միջնորդավորում* և *միջլեզվական միջնորդավորում* հասկացությունները:

Ներլեզվական միջնորդավորումը առօրյա սոցիալական գործունեություն է, որն իրականացվում է այն ժամանակ, երբ կարիք է լինում լեզվի մեկ տարբերակով կամ դրսևորմամբ արտահայտված տեղեկությունը փոխանցել մեկ այլ տարբերակի կամ դրսևորման, օրինակ՝ արևմտահայերեն խոսքը՝ արևելահայերենի կամ նշանացի (ժեստերի) լեզուն՝ խոսքի, ինչպես նաև տվյալ լեզվով ծավալուն կամ խորթին ձևակերպված տեղեկությունը ներկայացնելու սեղմ, պարզեցված տարբերակով՝ այդպիսով մեկ կամ մի քանի հոգու համար այն մեկնաբանելով կամ առավել ընկալելի դարձնելով: Այսինքն՝ ներլեզվական միջնորդավորումն ուղղված է բարդ տեղեկությունները պարզեցնելուն, խոսակիցներին կամ լսարանին ավելի հասկանալի դարձնելուն:

Միջլեզվական միջնորդավորումը միջմշակութային հաղորդակցության մեջ լեզվական և մշակութային խոչընդոտների հաղթահարումով ստեղծվող բովանդակություն է, որը նպաստում է հաղորդակցվող կողմերի ավելի խոր փոխըմբռնմանը:

Լեզվական միջնորդավորումն այսօր այլ բովանդակություն է ստացել: Եթե նախկինում այն ընկալվում էր իբրև տեքստի միջնորդավորում՝ գլխավորապես գրավոր և բանավոր թարգմանության ձևով, ապա այժմ այն դիտվում է նաև որպես փոխգործակցությունը և հաղորդակցումը հեշտացնող միջոց: Ընդ որում, տեքստի թարգմանությունն այս դեպքում միջնորդավորման միայն մեկ դրսևորումն է:

Միջնորդավորման չափորոշիչները ներկայացվում են երեք խմբով՝ *տեքստի միջնորդավորում*, *ընկալման միջնորդավորում* և *հաղորդակցման միջնորդավորում*:

| Ընդհանուր միջնորդավորում | |
|---------------------------------|---|
| Գ2 | Կարողանում է արդյունավետ և բնականոն ձևով միջնորդի դեր կատարել, մարդկանց կարիքներին ու ստեղծված իրավիճակին համապատասխան տարբեր դերեր ստանձնել, բացահայտել կողմերի փոխգործակցության բոլոր նրբություններն ու հուզական քննարկում ղեկավարել: |

| | |
|----|---|
| | <p>Կարողանում է պարզ, սահուն և լավ կառուցված խոսքով մեկնաբանել ներկայացված փաստերն ու փաստարկները՝ ճշգրիտ փոխանցելով գնահատականներն ու նրբությունների մեծ մասը և ընդգծելով հանրամշակութային ներհմաստները (հեգնանք, ծաղր և այլն):</p> |
| Գ1 | <p>Կարողանում է արդյունավետ գործել որպես միջնորդ՝ աջակցելով փոխգործակցությանը՝ տարբեր տեսակետները մեկնաբանելու, երկիմաստությունը պարզաբանելու, թյուրըմբռնումները կանխատեսելու և զրույցը «դիվանագիտորեն» այլ ուղղությամբ տանելու միջոցով:</p> |
| Բ2 | <p>Կարողանում է ստեղծել այնպիսի միջավայր, որում փոխգործակցողները կարող են մտքեր փոխանակել և քննարկումներ ծավալել նուրբ խնդիրների շուրջ՝ գնահատելով տարբեր լուծումներ, մարդկանց մղելով ուսումնասիրելու խնդիրները և ընտրելու դրանց լուծման ձևերը: Կարողանում է զարգացնել ուրիշների մտքերը՝ համապատասխան առաջարկություններ անելով:</p> <p>Կարողանում է փոխանցել մասնագիտական, ուսումնական/ակադեմիական կամ անձնական հետաքրքրությունները շոշափող երկար և բարդ, բայց լավ կառուցված տեքստի հիմնական բովանդակությունը՝ պարզաբանելով խոսողների/զրուողների կամ նշանացի հաղորդակցվողների կարծիքներն ու նպատակները:</p> |
| | <p>Կարողանում է համագործակցելով աշխատել տարբեր ծագում ունեցող մարդկանց հետ և ջերմ մթնոլորտ ստեղծել՝ օժանդակելով նրանց, հարցերի միջոցով պարզել ընդհանուր նպատակները, համեմատել դրանց հասնելու հնարավորությունները և բացատրել արված առաջարկությունները:</p> <p>Կարողանում է այլ մտքեր/գաղափարներ զարգացնել, հարցադրումներ անել և լուծումներ կամ քայլեր առաջարկել: Կարողանում է վստահ փոխանցել մանրամասն տեղեկություններ կամ փաստեր ու փաստարկներ իր մասնագիտական, ակադեմիական և անձնական հետաքրքրությունների ոլորտներից, օրինակ՝ բարդ, բայց լավ կառուցված տեքստերի էական կետերը:</p> |
| Բ1 | <p>Կարողանում է համագործակցել տարբեր ծագում ունեցող մարդկանց հետ՝ նրանց հարցեր ուղղելով կամ հարցերին պատասխանելով, առաջարկություններ ձևակերպելով կամ արծագանքելով դրանց, հետաքրքրություն դրսևորել նրանց նկատմամբ կամ ապրումակցել:</p> |
| | <p>Կարողանում է փոխանցել ոչ խրթին լեզվով շարադրված բարդ տեքստերում արծարծված հիմնական խնդիրները, եթե նրան հաջողվում է ճշտել առանձին արտահայտությունների իմաստները:</p> <p>Կարողանում է ներկայացնել տարբեր ծագում ունեցող մարդկանց՝ հասկանալով, որ որոշ հարցեր կարող են տարբեր կերպ ընկալվել, և</p> |

| | |
|----|--|
| | <p>խրախուսել ուրիշներին՝ ներկայացնելու իրենց փորձը, գիտելիքն ու տեսակետները:</p> <p>Կարողանում է ծանոթ կամ անձնական հետաքրքրություն ներկայացնող թեմաներով պարզ, լավ կառուցված տեղեկատվական տեքստերից տեղեկություններ փոխանցել, թեև սահմանափակ բառապաշարը երբեմն կարող է մտքերի ձևակերպման ժամանակ դժվարություններ հարուցել:</p> |
| Ա2 | <p>Կարողանում է օժանդակել այլոց փոխգործակցությանը, եթե մասնակիցները դանդաղ են խոսում (այդ թվում՝ նշանացի լեզվով), և եթե մասնակիցներից մեկ-երկուսը իրեն օգնում են իրենց մտքերը փոխանցելու: Կարողանում է հստակ կառուցվածք ունեցող պարզ տեղեկատվական տեքստերից համապատասխան տեղեկություն փոխանցել խոսակիցներից մեկին/մի քանիսին, եթե տեքստը ծանոթ թեմայով է և պարզ լեզվով է շարադրված:</p> <p>Կարողանում է գործածել պարզ բառեր/նշաններ՝ որևէ մեկին խնդրելով ինչ-որ բան բացատրել: Դժվարանալիս կարողանում է պարզ լեզվով նշել ակնհայտ խնդիրը: Առօրյա թեմաներով կարճ, պարզ զրույցներից կամ տեքստերից կարողանում է դուրս բերել հիմնական կետերը, եթե ձևակերպված են հստակ ու մատչելի լեզվով:</p> |
| Ա1 | <p>Կարողանում է օգտագործել պարզ բառեր/նշաններ և ոչ խոսքային միջոցներ՝ ցուցադրելու իր հետաքրքրությունը որևէ մտքի/գաղափարի նկատմամբ: Կարողանում է պարզ, կանխատեսելի տեղեկություններ փոխանցել անմիջական հետաքրքրություն ներկայացնող նշաններից, ցուցանակներից, պաստառներից և ծրագրերից:</p> |

Տեքստի միջնորդավորում

Այս բաժնում ձևակերպված նկարագրիչները վերաբերում են երկու լեզուների, թեև դրանք կարող են դիտարկվել որպես նույն լեզվի տարբեր դրսևորումներ: Լեզուների թիվը կարող է նաև երկուսից ավելի կամ պակաս լինել. վերջինս այն դեպքն է, երբ միջնորդավորումը դրսևորվում է մեկ լեզվի շրջանակում՝ որպես մտքի վերաձևակերպում, համառոտում, տվյալների մեկնաբանում և այլն:

Ինչ վերաբերում է թարգմանությանը, ապա պետք է նշել, որ խոսքը թարգմանիչ մասնագետների կարողունակությունների նկարագրությանը չի վերաբերում, այլ առօրյա ոչ պաշտոնական իրավիճակում լեզուն գործածողի կարողությունների նկարագրմանը:

Որոշակի (կոնկրետ) տեղեկությունների փոխանցում

| Որոշակի տեղեկությունների փոխանցում | | |
|---|---|--|
| | <i>Հատուկ տեղեկությունների փոխանցում բանավոր խոսքի կամ ժեստերի միջոցով</i> | <i>Հատուկ տեղեկությունների գրավոր փոխանցում</i> |
| Գ2 | Տե՛ս Գ1 | Տե՛ս Բ2 |
| Գ1 | Կարողանում է Բ լեզվով բացատրել Ա լեզվով գրված երկար, բարդ տեքստի որոշակի հատվածում եղած առանձնահատուկ տեղեկությունների արդիականությունը: | Տե՛ս Բ2 |
| Բ2 | Կարողանում է Բ լեզվով բանավոր փոխանցել, թե գիտաժողովում Ա լեզվով ներկայացված որ զեկուցումները կամ գրքի Ա լեզվով գրված որ հոդվածներն են հատկապես կարևոր որոշակի նպատակի համար: | Կարողանում է Բ լեզվով գրավոր փոխանցել, թե գիտաժողովում Ա լեզվով ներկայացված որ զեկուցումներն էին արժեքավոր և մանրամասն քննարկման արժանի: Կարողանում է Բ լեզվով գրավոր փոխանցել իր մասնագիտական, ակադեմիական և անձնական հետաքրքրությունների ոլորտներին համապատասխանող բարդ, բայց լավ կառուցված (Ա լեզվով) տեքստերում եղած համապատասխան կետ(եր)ը: Կարողանում է Բ լեզվով գրավոր փոխանցել ակադեմիական կամ մասնագիտական ամսագրում տպագրված Ա լեզվով հոդվածում եղած կարևոր կետ(եր)ը: |
| | Կարողանում է Բ լեզվով փոխանցել ընդհանուր կամ իր հետաքրքրության ոլորտներին վերաբերող թեմաներով Ա լեզվով գրված պաշտոնական նամակների և/կամ զեկույցների հիմնական կետը(եր)ը: | Կարողանում է Բ լեզվով գրավոր զեկույցում ներկայացնել հանդիպման ժամանակ Ա լեզվով կայացված համապատասխան որոշումները: Կարողանում է Բ լեզվով գրավոր ներկայացնել Ա լեզվով պաշտոնական նամակագրության կարևոր կետերը: |

| | | |
|----|---|--|
| Բ1 | <p>Կարողանում է Բ լեզվով բանավոր փոխանցել հանրային հայտարարությունների և հաղորդագրությունների բովանդակությունը, որոնք Ա լեզվով մատուցվում են հստակ և նորմալ արագությամբ:</p> <p>Կարողանում է Բ լեզվով բանավոր փոխանցել մանրամասն հրահանգների կամ ցուցումների բովանդակությունը, եթե դրանք հստակ ձևակերպված են Ա լեզվով:</p> <p>Կարողանում է Բ լեզվով բանավոր փոխանցել Ա լեզվով տեղեկատվական տեքստերում (օրինակ՝ թուղթիկներ, գրքույկների գրառումներ, ծանուցումներ, էլեկտրոնային նամակներ) առկա տեղեկություններ:</p> | <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր փոխանցել ծանոթ թեմաներով տեքստերում (օրինակ՝ Ա լեզվով զանգեր, հայտարարություններ, հրահանգներ) եղած կոնկրետ տեղեկություններ:</p> <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր փոխանցել ծանոթ թեմաներով պարզ տեղեկատվական տեքստերում (Ա լեզվով) առկա որոշակի/կոնկրետ տեղեկություններ:</p> <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր փոխանցել Ա լեզվով ձայնագրված հաղորդագրության մեջ առկա կոնկրետ տեղեկություններ, եթե թեմաները ծանոթ են, իսկ խոսքը՝ դանդաղ ու հստակ:</p> |
| Ա2 | <p>Կարողանում է Բ լեզվով փոխանցել առօրյա ծանոթ թեմաներով հստակ հայտարարության (Ա լեզվով) էական կետերը, չնայած կարող է ասելիքը պարզեցնելու և բառեր/նշաններ որոնելու անհրաժեշտություն լինել:</p> <p>Կարողանում է Բ լեզվով բանավոր փոխանցել ծանոթ թեմաներով կարճ, պարզ տեքստերում, պիտակներում և ծանուցումներում (Ա լեզվով) առկա կոնկրետ տեղեկություններ:</p> | <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր փոխանցել Ա լեզվով կարճ, պարզ տեղեկատվական տեքստերում պարունակվող կոնկրետ տեղեկություններ, եթե տեքստերը ծանոթ թեմաներով են և գրված են առօրյա պարզ լեզվով:</p> |
| | <p>Կարողանում է Բ լեզվով փոխանցել կարճ, պարզ ու հստակ ձևակերպված հրահանգների, հայտարարությունների, հաղորդագրությունների էական մանրամասները (վայր, ժամանակ, նպատակ և այլն), եթե դրանք Ա լեզվում ձևակերպված են պարզ լեզվով, արտաբերվում են դանդաղ և հստակ:</p> | <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր թվարկել Ա լեզվով հրահանգների ու հայտարարությունների հիմնական կետերը, եթե դրանք հստակ ու դանդաղ են արտաբերվում:</p> <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր թվարկել առօրյա կամ հետաքրքրություն ներկայացնող թեմաներով պարզ տեքստերում (Ա լեզվով):</p> |

| | | |
|----|--|--|
| | Կարողանում է Բ լեզվով պարզ ձևակերպումներով փոխանցել կարճ, պարզ հրահանգների շարք, եթե Ա լեզվում դրանք արտասանվում են հստակ ու դանդաղ: | լեզվով) ամփոփված որոշակի տեղեկություններ |
| Ա1 | Ա լեզվով կարճ հայտարարություններից քաղված պարզ տեղեկություններ (ժամանակ, վայր, գին և այլն) կարողանում է բանավոր փոխանցել Բ լեզվով: | Կարողանում է Ա լեզվով բանավոր տեքստերում գործածված անունները, թվերը և շատ պարզ տեղեկություններ գրավոր թվարկել Բ լեզվով, եթե խոսում են դանդաղ, պարզ և կրկնելով: |

Տվյալների մեկնաբանում

Սա թվերով ու պատկերներով (գծապատկերներ, տրամագրեր/դիագրամներ և այլն) արտահայտված տեղեկությունների ներկայացումն է խոսքային միջոցներով: Այս կարողունակությունը ենթադրում է՝

- գրաֆիկական արտացոլում ունեցող ծանոթ նյութի նկարագրություն (եղանակի քարտեզներ, գործողությունների սխեմաներ և այլն),
- երկույթի զարգացման միտումներ ներկայացնող գծապատկերների մեկնաբանություն,
- գրաֆիկական միջոցներով պատկերված փորձարարական կարևոր և էական տվյալների վերլուծություն:

| Տվյալների մեկնաբանում | | |
|-----------------------|---|---|
| | <i>Տվյալների բանավոր (կամ նշանացի) մեկնաբանում</i> | <i>Տվյալների գրավոր մեկնաբանում</i> |
| Գ2 | Կարողանում է Բ լեզվով մեկնաբանել և նկարագրել մասնագիտական թեմաներով փորձարարական բարդ հետազոտություններից ստացված տարատեսակ տվյալներ և գրաֆիկական եղանակով ներկայացված տեղեկություններ (զուգակցված Ա լեզվով տեքստով): | Կարողանում է Բ լեզվով մեկնաբանել և գրավոր ներկայացնել մասնագիտական թեմաներով ակադեմիական բարդ հետազոտություններից ստացված փորձարարական տվյալների տարբեր ձևեր (զուգակցված Ա լեզվով տեքստով): |

| | | |
|----|--|--|
| Գ1 | <p>Կարողանում է Բ լեզվով հստակ մեկնաբանել և նկարագրել բարդ դիագրամներում և տվյալների ներկայացման գրաֆիկական այլ պատկերներում (զուգակցված Ա լեզվով) եղած կարևոր կետերն ու մանրամասները ակադեմիական կամ մասնագիտական բարդ թեմաների շրջանակներում:</p> | <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր մեկնաբանել և ներկայացնել բարդ դիագրամներում և տվյալների ներկայացման գրաֆիկական այլ պատկերներում (զուգակցված Ա լեզվով) եղած կարևոր կետերն ու մանրամասները ակադեմիական կամ մասնագիտական բարդ թեմաների շրջանակներում:</p> |
| Բ2 | <p>Կարողանում է Բ լեզվով մեկնաբանել և նկարագրել բարդ դիագրամներում, գծապատկերներում և տվյալների ներկայացման գրաֆիկական այլ պատկերներում եղած մանրամասն տեղեկությունները (զուգակցված Ա լեզվով տեքստով):</p> | <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր մեկնաբանել և ներկայացնել իր հետաքրքրության շրջանակներում տարբեր իրողություններ արտացոլող դիագրամներում և տվյալները տեսողաբար ներկայացնող այլ պատկերներում եղած մանրամասն տեղեկությունները (զուգակցված Ա լեզվով տեքստով):</p> |
| Բ1 | <p>Կարողանում է Բ լեզվով նկարագրել և մեկնաբանել դիագրամներում արտացոլված մանրամասն տեղեկությունները (զուգակցված Ա լեզվով տեքստով) իր հետաքրքրության ոլորտներում, նույնիսկ եթե իր բառապաշարի բացերի պատճառով տատանվում է կամ ոչ ճշգրիտ ձևակերպումներ տալիս:</p> | <p>Կարողանում է Բ լեզվով մեկնաբանել և գրավոր ներկայացնել պարզ դիագրամներում (օրինակ՝ գրաֆիկներ, քայլաշարեր և այլն) ներկայացված ընդհանուր միտումները (զուգակցված Ա լեզվով տեքստով), ավելի մանրամասն բացատրել կարևոր կետերը՝ օգտվելով բառարանից կամ այլ տեղեկատուից:</p> |
| | <p>Կարողանում է Բ լեզվով մեկնաբանել և նկարագրել պարզ դիագրամներով ներկայացված ընդհանուր միտումները (զուգակցված Ա լեզվով ոչ ծավալուն տեքստով), նույնիսկ եթե բառապաշարային սահմանափակումները երբեմն</p> | <p>Կարողանում է պարզ նախադասություններով (Բ լեզվով) նկարագրել ծանոթ թեմաներով տեսողական նյութերում ներկայացված հիմնական փաստերը (օրինակ՝ եղանակի քարտեզ, քայլաշար)՝ զուգակցված Ա լեզվով տեքստով):</p> |

| | | |
|----|--|-------------------|
| | մտքերի ձևակերպման հարցում դժվարություններ են առաջացնում: | |
| Ա2 | Կարողանում է Բ լեզվով մեկնաբանել և նկարագրել ծանոթ թեմաներով պարզ տեսողական նյութեր (օրինակ՝ եղանակի քարտեզ, քայլաշար)՝ զուգակցված Ա լեզվով ոչ ծավալուն տեքստով, նույնիսկ եթե դադարները, սխալ սկսված մտքերը և վերաձևակերպումները կարող են շատ ակնհայտ լինել: | Նկարագրիչներ չկան |
| Ա1 | Նկարագրիչներ չկան | Նկարագրիչներ չկան |

Տեքստի մշակում

Տեքստի մշակումը սկզբնաղբյուր տեքստում ներառված տեղեկությունների և/կամ փաստարկների ըմբռնումը և դրանց փոխանցումն է մեկ այլ՝ ավելի սեղմ ձևով: Այսինքն՝ առանձնացվում են հիմնական մտքերը, խտացվում են տեղեկություններն ու փաստարկները և/կամ վերաձևակերպվում: Ըստ այդմ կազմվում է տեքստի համառոտ՝ ամփոփ տարբերակը:

Տեքստի մշակումը ենթադրում է՝

- սկզբնաղբյուր տեքստի հիմնական կետերի ամփոփում,
- տարբեր աղբյուրներից նման տեղեկությունների և փաստարկների հավաքագրում,
- բնօրինակի նպատակի, հեղինակի տեսակետի սահմանում և պարզաբանում:

| Տեքստի մշակում | | |
|----------------|--|--|
| | <i>Տեքստի բանավոր կամ նշանացի մշակում</i> | <i>Տեքստի գրավոր մշակում</i> |
| Գ2 | Կարողանում է Բ լեզվով ներկայացնել եզրակացություններ, երբ Ա լեզվով տեքստում իմաստը կամ կապերը բացահայտ չեն, և նշել մտքի արտահայտման սոցիալ-մշակութային դրսևորումները (օրինակ՝ հեգնանք, ծաղր): | Կարողանում է Բ լեզվով գրավոր բացատրել փաստերի և փաստարկների ներկայացման եղանակը Ա լեզվով տեքստում, մասնավորապես, երբ խոսվում է ուրիշի դիրքորոշման մասին՝ ուշադրություն հրավիրելով քողարկված քննադատության, |

| | | |
|----|--|---|
| | | <p>հեզնանքի և սարկազմի օգտագործման վրա:</p> <p>Կարողանում է ամփոփել տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունները՝ վերակառուցելով փաստարկներն ու մեկնաբանությունները և տրամաբանորեն ներկայացնելով ընդհանուր արդյունքը:</p> |
| Գ1 | <p>Կարողանում է Բ լեզվով ամփոփել իր ակադեմիական կամ մասնագիտական կարողությունների շրջանակներում Ա լեզվով քննարկումները, զարգացնել և ծանրութեթև անել տարբեր տեսակետներ, առանձնացնել ամենակարևոր կետերը:</p> <p>Կարողանում է Բ լեզվով հստակ և լավ կառուցված խոսքով ամփոփել Ա լեզվով գրված բարդ, իր մասնագիտական ոլորտից դուրս՝ այլ ոլորտների տեքստերի հիմնական կետերը, թեև առանձին դեպքերում կարող է որոշակի հասկացություններ ճշտել:</p> <p>Կարողանում է Ա լեզվով բարդ տեքստից ստացված տեղեկություններն ու փաստարկներն օգտագործել Բ լեզվով որևէ թեմա քննարկելու համար, դրանք լրացնել գնահատողական մեկնաբանություններով, ավելացնել սեփական կարծիքը և այլն:</p> <p>Կարողանում է Բ լեզվով բացատրել Ա լեզվով աղբյուր տեքստում արտահայտված վերաբերմունքը կամ կարծիքը մասնագիտական խնդրի վերաբերյալ՝ հիմնավորելով իր</p> | <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր ամփոփել Ա լեզվով գրված երկար, բարդ տեքստեր՝ մեկնաբանելով բովանդակությունը, եթե տերմինների ճշգրիտ իմաստները ստուգելու հնարավորություն ունի:</p> <p>Կարողանում է Ա լեզվով գրավոր ամփոփել բարդ տեքստեր (օրինակ՝ ակադեմիական հոդված, քաղաքական վերլուծություն, խմբագրական, գրական ակնարկ, զեկուցում կամ գիտական գրքից հատված)՝ պահելով բնօրինակի ոճը:</p> |

| | | |
|-----|---|---|
| | եզրակացությունները և հղում անելով բնագրի որոշակի հատվածների: | |
| Բ2 | <p>Կարողանում է Բ լեզվով համադրել և ներկայացնել Ա լեզվով մի շարք աղբյուրներից քաղված տեղեկություններ և փաստարկներ, գրավոր ամփոփել Ա լեզվով բարդ տեքստերի հիմնական բովանդակությունը, ֆիլմի կամ պիեսի դիպաշարը և հաջորդական գործողությունները:</p> <p>Կարողանում է Բ լեզվով ամփոփել Ա լեզվով փաստագրական և գեղարվեստական տեքստերի լայն շրջանակ՝ քննության առարկա դարձնելով և մեկնաբանելով հակադիր տեսակետները և հիմնական թեմաները:</p> <p>Կարողանում է ճանաչել իրեն հետաքրքրող թեմայով Ա լեզվով գրված տեքստի ենթադրյալ լսարանը և Բ լեզվով բացատրել հեղինակի նպատակը, վերաբերմունքը և կարծիքը:</p> | Կարողանում է Բ լեզվով ամփոփել իրեն հետաքրքրող, այդ թվում՝ մասնագիտական թեմաներով Ա լեզվով գրված երկար, բարդ տեքստերի հիմնական բովանդակությունը: |
| Բ1+ | <p>Կարողանում է Բ լեզվով բանավոր ամփոփել իրեն հետաքրքրող թեմաներով երկար տեքստերի (Ա լեզվով) հիմնական կետերը, եթե հնարավորություն ունենա որոշ արտահայտությունների իմաստները ստուգելու:</p> <p>Կարողանում է Բ լեզվով բանավոր ամփոփել Ա լեզվով կարճ պատմվածք կամ հոդված, զրույց, հարցազրույց կամ վավերագրական ֆիլմ և պատասխանել մանրամասներին վերաբերող հարցերի:</p> | Կարողանում է Բ լեզվով գրավոր ամփոփել հետաքրքրություն ներկայացնող թեմաներով Ա լեզվով գրված տեքստերում եղած տեղեկություններն ու փաստարկները: |

| | | |
|----|--|---|
| | <p>Կարողանում է Ա լեզվով մի քանի աղբյուրներից տեղեկություններ հավաքել և դրանք ամփոփել Բ լեզվով:</p> | |
| Բ1 | <p>Կարողանում է Բ լեզվով ամփոփել ծանոթ կամ անձնական թեմաներով Ա լեզվով գրված, լավ կառուցված պարզ տեքստերի հիմնական կետերը, տեքստում (հարցազրույց, ամսագրի հոդված, ճամփորդական գրքույկ) ներկայացված հիմնական տեղեկությունները, չնայած բառապաշարի սահմանափակումները երբեմն կարող են դժվարացնել ձևակերպումը:</p> <p>Կարողանում է Բ լեզվով ամփոփել անձնական կամ իրեն հետաքրքրող թեմայով Ա լեզվով գրույցի հիմնական կետերը, եթե խոսողները հստակ են ձևակերպում մտքերը, բանավոր ընթերցված տեքստերի (հաղորդում, տեսահոլովակ և այլն) առանցքային հարցերը/կետերը, եթե կարողանա մեկից ավելի անգամ լսել (կամ դիտել):</p> | <p>Կարողանում է Բ լեզվով գրավոր ամփոփել Ա լեզվով տեղեկատվական պարզ տեքստերի (անձնական կամ իրեն հետաքրքրող թեմաներով) հիմնական կետերը, եթե բանավոր տեքստերը հստակ են ձևակերպված:</p> <p>Կարողանում է պարզ ձևով վերաձևակերպել կարճ հատվածներ՝ օգտագործելով բնօրինակ տեքստի բառապաշարը և կառուցվածքի հաջորդականությունը:</p> |
| Ա2 | <p>Կարողանում է Բ լեզվով հաղորդել Ա լեզվով հեռուստառադիոհաղորդումների, պարզ լուրերի (իրադարձություններ, սպորտ) հիմնական կետերը, եթե թեմաները ծանոթ են, և խոսքը դանդաղ ու հստակ է:</p> <p>Կարողանում է Բ լեզվով պարզ նախադասություններով ներկայացնել Ա լեզվով գրված կարճ, պարզ տեքստերում եղած տեղեկությունները, եթե տեքստերը նկարազարդված են կամ աղյուսակներ ունեն:</p> | <p>Կարողանում է Բ լեզվով կետերով (պարբերակներով) թվարկել Ա լեզվով կարճ, պարզ տեքստերում եղած տեղեկությունները, եթե տեքստերը ծանոթ թեմաներով են և գրված են շատ պարզ լեզվով:</p> <p>Կարողանում է իր լեզվական սահմանափակ կարողությունների և փորձառության շրջանակում կարճ տեքստից ընտրել և վերարտադրել բանալի բառեր ու արտահայտություններ կամ կարճ նախադասություններ:</p> |

| | | |
|----|--|--|
| | Կարողանում է Բ լեզվով փոխանցել Ա լեզվով գրված պարզ, կարճ, տեքստ(եր)ի հիմնական միտքը (մտքերը)՝ լեզվական սահմանափակ հնարավորությունները լրացնելով այլ միջոցներով (օրինակ՝ նշաններով, նկարներով, այլ լեզուներից բառերով): | Կարողանում է Բ լեզվով պարզ շարադրել ծանոթ և առօրյա թեմաներով և հաճախական բառերով գրված (Ա լեզվով) շատ կարճ տեքստ(եր)ի հիմնական միտքը (մտքերը): Չնայած հնարավոր սխալներին՝ շարադրանքն ընդհանուր առմամբ հասկանալի է: |
| Ա1 | Նկարագրիչներ չկան | Նկարագրիչներ չկան |

Տեքստի թարգմանություն

Գրավոր տեքստի բանավոր թարգմանությունը ոչ պաշտոնական գործունեություն է, որը առօրյա, անձնական և մասնագիտական կյանքում հաճախադեպ երևույթ է: Դա գրավոր տեքստի (ծանուցման, նամակի, էլեկտրոնային նամակի կամ այլ հաղորդագրության) հանպատրաստից բանավոր թարգմանությունն է:

Գրավոր տեքստի գրավոր թարգմանությունը փոքր-ինչ ավելի պաշտոնական գործընթաց է: Անձնական հարաբերությունների բերումով և/կամ մասնագիտական միջավայրում մեկից ավելի լեզուների տիրապետող մարդկանց երբեմն խնդրում են տեքստի գրավոր թարգմանություն կատարել՝ վերարտադրելով սկզբնաղբյուր տեքստի հիմնական միտքը:

Տեքստի թարգմանությունը ենթադրում է՝

- մոտավոր, կոպիտ թարգմանություն,
- էական տեղեկությունների դուրսբերում,
- նրբերանգների արտահայտում (ավելի բարձր մակարդակներում):

Եթե լեզվի տիրապետման ցածր մակարդակներում սովորողներից/լեզուն գործածողներից ակնկալվում են պարզ տեքստերից առօրյա տեղեկությունների մոտավոր թարգմանություններ, ապա բարձր մակարդակներում՝ բարդ տեքստերից ավելի սահուն և ճշգրիտ թարգմանություններ:

| Գրավոր տեքստի թարգմանություն | | |
|-------------------------------------|--|--|
| | Գրավոր տեքստի բանավոր (կամ նշանացի) թարգմանություն | Գրավոր տեքստի գրավոր թարգմանություն |
| Գ2 | Կարողանում է բանավոր թարգմանել անձնական, ակադեմիական և մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում տարբեր թեմաներով վերացական տեքստեր՝ փոխանցելով դրանցում | Կարողանում է թարգմանել իր մասնագիտությանը չառնչվող այլ նյութեր (գրված Ա լեզվով), եթե թարգմանության ճշգրտությունը ստուգվում է |

| | | |
|----|---|--|
| | եղած գնահատականներն ու փաստարկները և դրանց հետ կապված նրբիմաստները: | համապատասխան ոլորտի և Բ լեզվի մասնագետի կողմից: |
| Գ1 | Կարողանում է ընդհանուր և մասնագիտական թեմաներով Ա լեզվով գրված բարդ տեքստերի բանավոր թարգմանություն անել՝ պահպանելով հիմնական նրբությունները: | Կարողանում է սոցիալական, ակադեմիական և մասնագիտական թեմաներով վերացական տեքստեր (գրված Ա լեզվով) թարգմանել՝ փոխանցելով հիմնական փաստերը (այդ թվում՝ դրանց առնչվող որոշ ենթիմաստներ), թեև արտահայտությունների ձևակերպումները երբեմն կարող են մեծապես կրել բնօրինակի ազդեցությունը: |
| Բ2 | Կարողանում է բանավոր թարգմանել Ա լեզվով գրված բարդ տեքստեր, որոնցում տեղեկություններ և փաստեր կան իր մասնագիտական և անձնական հետաքրքրություններին առնչվող ոլորտներից: | Կարողանում է Ա լեզվից Բ լեզու լավ կառուցված թարգմանություն անել և հիմնականում ճիշտ գործածել լեզուն՝ որոշակիորեն կրելով, սակայն, բնօրինակի որոշ ձևակերպումների, կետադրության, պարբերությունների կառուցման ազդեցությունը: Կարողանում է թարգմանել Ա լեզվով գրված տեքստը՝ պահպանելով նախադասությունների և պարբերությունների կառուցվածքը, ճշգրտորեն փոխանցելով բնօրինակի հիմնական կետերը, թեև թարգմանության տեքստը կարող է փոքր-ինչ տարօրինակ հնչել: |
| Բ1 | Կարողանում է բանավոր թարգմանել Ա լեզվով գրված տեքստեր, որոնցում կան տեղեկություններ և փաստեր իր մասնագիտական, ակադեմիական և անձնական հետաքրքրություններին առնչվող ոլորտներից, եթե դրանք գրված են պարզ, ստանդարտ լեզվով: | Կարողանում է Ա լեզվից մոտավոր թարգմանել ոչ խրթին լեզվով գրված պարզ, փաստական տեքստեր՝ խիստ հավատարիմ մնալով բնօրինակի կառուցվածքին. չնայած լեզվական որոշ սխալներին՝ թարգմանությունն ընկալելի է: Կարողանում է Ա լեզվից մոտավոր թարգմանել ոչ խրթին լեզվով գրված պարզ, փաստական տեքստեր. չնայած |

| | | |
|----|--|---|
| | | լեզվական սխալներին՝ թարգմանությունն ընդհանուր առմամբ ընկալելի է: |
| Ա2 | <p>Կարողանում է կատարել Ա լեզվով գրված կարճ, պարզ տեքստերի (օրինակ՝ ծանոթ թեմաներով ծանուցումներ, հրահանգներ, նամակներ/էլեկտրոնային նամակներ) բանավոր մոտավոր թարգմանություն՝ արտացոլելով ամենակարևորը:</p> <p>Կարողանում է Ա լեզվից Բ լեզու առօրյա տեղեկությունների բանավոր մոտավոր թարգմանություն կատարել, եթե դրանք Ա լեզվով շարադրված են պարզ նախադասություններով:</p> | Կարողանում է պարզ լեզվով մոտավոր թարգմանել (Ա լեզվից Բ լեզու) ծանոթ և առօրյա թեմաներով շատ կարճ տեքստեր, որոնցում բարձր հաճախականություն ունեցող բառեր կան: Չնայած թարգմանության մեջ առկա սխալներին՝ թարգմանությունը հասկանալի է: |
| Ա1 | Կարողանում է Ա լեզվով ցուցանակներում, հայտարարություններում, պաստառներում հանդիպող առօրյա պարզ բառեր և արտահայտություններ թարգմանել: | Կարողանում է բառարանի օգնությամբ թարգմանել պարզ բառեր և արտահայտություններ (Ա լեզվից Բ լեզու), բայց ոչ միշտ է կարողանում ընտրել համապատասխան իմաստը: |

Գրառումներ

Սա ակադեմիական և մասնագիտական կարևոր հմտություն է, որն առնչվում է առանցքային տեղեկությունների դուրսբերմանն ու գրառմանը: Այստեղ կարևորվում են՝

- *տեքստի տեսակը* (ներկայացումներ/ցուցադրություններ, հրահանգներ, ինչպես նաև իրենց ոլորտի կամ դրանից դուրս և անծանոթ թեմաներով գիտաժողովներ, հանդիպումներ, սեմինարներ, աշխատաժողովներ, դասախոսություններ,
- *գրառման տեսակը* (կետերով/պարբերակներով կարևոր թվացող իրողությունների գրառումից (ցածր մակարդակներում) մինչև անհրաժեշտը գրառելու և երկրորդականը բաց թողնելու պատշաճ ընտրություն),
- *գրառումների ճշգրտությունը* (բարձր մակարդակներում). սա ենթադրում է անձնական նպատակներով նշումներից (Բ1), ոլորտային հանդիպումների ու քննարկումների ժամանակ կատարված ճշգրիտ գրառումներից (Բ2) մինչև գաղափարների, ներիմաստների և ենթադրությունների միջև կապերի արտացոլում,

- *խոսողի գործոնը* (ցածր մակարդակներում). դանդաղ և հստակ արտասանություն, դադարներ՝ հստակ ձևակերպված, լավ կառուցված խոսքից նշումներ անելու համար:

| Գրառումներ (դասախոսություններից և այլն) | |
|--|--|
| Գ2 | <p>Հանդիպումներին կամ սեմինարներին շարունակաբար մասնակցելիս կարողանում է վստահություն ներշնչող գրառումներ անել ներկա չգտնվող անձանց համար, նույնիսկ երբ թեման բարդ է և/կամ անձանոթ:</p> <p>Հասկանում է ներիմաստները և կարողանում է նշումներ անել դրանց վերաբերյալ:</p> <p>Կարողանում է վերաձևակերպելով և համառոտագրելով ընտրողաբար նշումներ անել վերացական հասկացությունների ու գաղափարների միջև եղած կապերն արտացոլելու համար:</p> |
| Գ1 | <p>Կարողանում է իր հետաքրքրության ոլորտին համապատասխանող թեմաներով դասախոսության ժամանակ մանրամասն նշումներ անել՝ տեղեկություններն այնքան ճշգրիտ և բնօրինակին այնքան մոտ գրառելով, որ դրանք կարող են օգտակար լինել նաև այլ մարդկանց:</p> <p>Կարողանում է նույնիսկ անձանոթ թեմայով դասախոսության կամ սեմինարի ընթացքում որոշում կայացնել, թե ինչը նշի, ինչը բաց թողնի:</p> <p>Կարողանում է բանավոր տարբեր աղբյուրներից (օրինակ՝ դասախոսություն, փողքասթ, պաշտոնական քննարկում և բանավեճ, հարցազրույց) բարդ, վերացական թեմաների վերաբերյալ անհրաժեշտ մանրամասն տեղեկություններ և փաստարկներ ընտրել, եթե խոսքը միջին արագությամբ է:</p> |
| Բ2 | <p>Կարողանում է հասկանալ ծանոթ թեմայով հստակ կառուցված դասախոսությունը և գրառումներ անել իրեն կարևոր թվացող կետերի վերաբերյալ, նույնիսկ եթե հակված է կենտրոնանալու ձևակերպման վրա և բաց թողնելու որոշ տեղեկություններ:</p> <p>Կարողանում է հանդիպումների և սեմինարների ժամանակ ճշգրիտ գրառումներ անել իր հետաքրքրության ոլորտում եղած հարցերի մեծ մասի վերաբերյալ:</p> |
| Բ1 | <p>Կարողանում է դասախոսության ընթացքում բավականաչափ ճշգրիտ գրառումներ անել, եթե թեման համապատասխանում է իր հետաքրքրության ոլորտին, դասախոսությունը հստակ է ու լավ կառուցված:</p> <p>Կարողանում է պարզ դասախոսության ժամանակ հիմնական կետերը գրառել ցանկի տեսքով, եթե թեման ծանոթ է, դասախոսության լեզուն պարզ է, ներկայացնողի խոսքը՝ հստակ:</p> |

| | |
|----|---|
| | Կարողանում է ծանոթ թեմայով հանդիպման ժամանակ գրի առնել տրված առօրյա հրահանգները, եթե դրանք պարզ են ձևակերպված, և գրառելու համար բավարար ժամանակ կա: |
| Ա2 | Կարողանում է պարզ նշումներ անել ներկայացման/ցուցադրության ժամանակ, եթե թեման ծանոթ է, և ներկայացնողը պարզաբանումներ է տալիս: |
| Ա1 | Նկարագրիչներ չկան: |

Ստեղծագործական տեքստեր

Ստեղծագործական տեքստերը թեև առավելաբար զուգորդվում են գրական գեղարվեստական ստեղծագործություններին, սակայն դրանցով չեն սահմանափակվում. կինոն, թատրոնը, համերգները և այլն ստեղծագործական տեքստերի այլ դրսևորումներ են: Հետևաբար չնայած որոշ նկարագրիչներ առնչվում են գեղարվեստական գրականությանը, սակայն իրականում շատերը վերաբերում են նաև վերոնշյալ համապատասխան «ստեղծագործությանը»:

Ստեղծագործական տեքստերը արձագանք են պահանջում, և այն շատ հաճախ կապվում է լեզուների ուսուցման հետ:

Ստեղծագործական տեքստերին տրվող արձագանքները դրսևորվում են հետևյալ կերպ.

- *ներգրավում*. անձնական վերաբերմունքի արտահայտում լեզվի, ոճի կամ բովանդակության նկատմամբ, ստեղծագործության որևէ կողմի, դրա կերպարի գրավչության ներկայացում,
- *մեկնաբանում*. ստեղծագործության առանձին կողմերին, այդ թվում՝ բովանդակությանը, կերպարներին, դրդապատճառներին, պատկերավորման միջոցներին իմաստի կամ նշանակության վերագրում,
- *վերլուծում*. ստեղծագործության որոշակի կողմերի, այդ թվում՝ լեզվի, գրական հնարքների, կերպարների և այլնի քննություն,
- *գնահատում*. հեղինակի մտահղացման, ստեղծագործության կառուցվածքի, նշանակության և այլնի քննադատական գնահատում:

Ստեղծագործական տեքստերի նկատմամբ անձնական վերաբերմունքի դրսևորում

Սրանով արտահայտվում է անհատի վրա ստեղծագործության թողած ազդեցությունը: Սանդղակում ներկայացված հիմնական չափորոշիչները/պահանջները ներառում են հետևյալը՝

- մեկնաբանել ստեղծագործության մեջ դուր եկածը, հետաքրքրածը,
- բնութագրել կերպարները,
- կապել ստեղծագործության մեջ արժարժված հարցերը սեփական կենսափորձի հետ,

- մեկնաբանել ստեղծագործությունն ամբողջությամբ կամ որևէ տեսանկյունից/կողմից:

| | Ստեղծագործական տեքստերի նկատմամբ անձնական վերաբերմունքի դրսևորում |
|----|---|
| Գ2 | Նկարագրիչներ չկան: |
| Գ1 | <p>Կարողանում է մանրամասն ներկայացնել տվյալ ստեղծագործության իր մեկնաբանությունը՝ ընդգծելով նրա որոշ առանձնահատկություններ և արտահայտելով դրանց նկատմամբ իր վերաբերմունքը:</p> <p>Կարողանում է տալ ստեղծագործության կերպարի սեփական մեկնաբանությունը՝ շեշտադրելով նրա հոգեհուզական վիճակը, գործողությունների դրդապատճառներն ու հետևանքները:</p> |
| Բ2 | <p>Կարողանում է հստակ ներկայացնել տվյալ ստեղծագործության նկատմամբ իր արձագանքը՝ զարգացնելով սեփական մտքերը և դրանք հիմնավորելով օրինակներով և փաստարկներով:</p> <p>Կարողանում է ինքնուրույն մեկնաբանել պատմվածքի, վեպի, ֆիլմի կամ պիեսի սյուժեի և կերպարների զարգացումը:</p> <p>Կարողանում է նկարագրել ստեղծագործության նկատմամբ իր հուզական արձագանքը և ներկայացնել դրա պատճառը:</p> <p>Կարողանում է մանրամասն արտահայտել ստեղծագործության կառուցվածքի, ոճի և բովանդակության նկատմամբ իր վերաբերմունքը՝ բացատրելով, թե ինչն է գնահատել և ինչու:</p> |
| Բ1 | <p>Կարողանում է հիմնավորել, թե ինչն է ստեղծագործության որոշակի հատվածներ առանձնապես հետաքրքրել իրեն:</p> <p>Կարողանում է մանրամասն բացատրել, թե ո՞ր կերպարի հետ է ամենից շատ նույնացնում իրեն և ինչու:</p> <p>Կարողանում է պատմվածքի, ֆիլմի կամ պիեսի իրադարձությունները կապել իր ապրած կամ լսած նմանատիպ իրադարձությունների հետ, կերպարի ապրումները՝ սեփական ապրումների հետ:</p> <p>Կարողանում է նկարագրել ստեղծագործության որոշակի հատվածի առնչվող իր ապրումները (օրինակ՝ հերոսի համար իր անհանգստությունը) և բացատրել դրանց պատճառ(ներ)ը:</p> <p>Կարողանում է հակիրճ ներկայացնել իր կարծիքը տվյալ ստեղծագործության վերաբերյալ:</p> <p>Կարողանում է նկարագրել կերպարը, նրա զգացմունքները և բացատրել դրանց պատճառները:</p> |
| Ա2 | <p>Կարողանում է իր վերաբերմունքն արտահայտել ստեղծագործության նկատմամբ՝ պարզ լեզվով ձևակերպելով իր մտքերն ու բնութագրելով զգացմունքները:</p> <p>Կարողանում է պարզ լեզվով նշել, թե ստեղծագործության մեջ հատկապես ինչն է գրավել իրեն և ինչու:</p> |

| | |
|----|--|
| Ա1 | Կարողանում է պարզ բառերով կամ նշաններով արտահայտել ստեղծագործության առաջացրած զգացողությունները: |
|----|--|

Ստեղծագործական (այդ թվում՝ գրական) տեքստերի վերլուծություն և քննադատություն

Միջնորդավորման այս տեսակի նկարագրիչները ձևակերպված են լեզվի տիրապետման բարձր մակարդակների համար, քանի որ այն մտավոր ավելի բարդ գործունեություն է:

Սանդղակում ներկայացված հիմնական պահանջները ներառում են հետևյալը՝

- տարբեր ստեղծագործությունների համեմատություն,
- ստեղծագործության մասին հիմնավորված կարծիքի արտահայտում,
- ստեղծագործության առանձնահատկությունների, այդ թվում՝ կատարման վարպետության գնահատում:

| | Ստեղծագործական (այդ թվում՝ գրական) տեքստերի վերլուծություն և քննադատություն |
|----|--|
| Գ2 | Կարողանում է քննադատաբար գնահատել տարբեր ժամանակաշրջանների և ժանրերի ստեղծագործություններ՝ գնահատելով ոճի նուրբ տարբերությունները և ինչպես բացահայտ իմաստը, այնպես էլ ներիմաստները: Կարողանում է ճանաչել գործածված լեզվի ոճական նրբությունները, մեկնաբանել և «բացահայտել» իմաստներն ու ենթատեքստերը: Կարողանում է քննադատաբար գնահատել կառուցվածքը, լեզուն, բերել հիմնավորված փաստարկներ դրանց համապատասխանության և արդյունավետության վերաբերյալ: Կարողանում է քննադատաբար գնահատել լեզվական կանոնների խախտումները: |
| Գ1 | Կարողանում է քննադատաբար գնահատել տարատեսակ տեքստեր, այդ թվում՝ տարբեր ժամանակաշրջանների և ժանրերի գրական ստեղծագործություններ: Կարողանում է գնահատել ստեղծագործության համապատասխանությունը ժանրի կանոններին: Կարողանում է նկարագրել և մեկնաբանել այն հատկանիշները, որոնցով ստեղծագործությունը գրավում է լսարանին: |
| Բ2 | Կարողանում է համեմատել երկու ստեղծագործություններ, բացահայտել նմանություններն ու հակադրությունները, բացատրել դրանց միջև եղած կապերը: Կարողանում է հիմնավորված կարծիք հայտնել ստեղծագործության մասին՝ ցույց տալով թեմատիկ, կառուցվածքային առանձնահատկությունները և մեջբերելով ուրիշների կարծիքներն ու փաստարկներ: |

| | |
|----|---|
| | Կարողանում է ներկայացնել նույն թեմայի տարբեր մեկնաբանությունները տարբեր ստեղծագործություններում: |
| Բ1 | Կարողանում է մատնանշել և հստակ կառուցված շարադրանքով ու առօրյա լեզվով մեկնաբանել ամենակարևոր դրվագներն ու իրադարձությունները, դրանց նշանակությունը և դրանց միջև եղած կապերը: Կարողանում է հիմնական թեմաներն ու կերպարները նկարագրել կարճ շարադրանքում՝ գործածելով առավել հաճախական առօրյա լեզու: |
| Ա2 | Կարողանում է նույնացնել և պարզ շարադրանքներում հակիրճ նկարագրել հիմնական թեմաներն ու կերպարները՝ ներառելով ծանոթ իրավիճակներ և գործածելով առօրյա հաճախական լեզու: |
| Ա1 | Նկարագրիչներ չկան: |

Ընկալման միջնորդավորում Հաղորդակցման միջնորդավորում

Հաղորդակցման միջնորդավորումը, հիմնված լինելով լեզվի վրա, այդուհանդերձ սոցիալական միջնորդավորման դրսևորում է, քանի որ լեզուն մարդկանց միջև թյուրմբոնումների միակ պատճառը չէ: Այստեղ որոշակի դեր ունեն հաղորդակցվող կողմերի մշակութային առանձնահատկությունները, նրանց պահանջները, սկզբունքները և այլն: Հենց այս դեպքերում է, որ հաճախ անհրաժեշտ է լինում մի երրորդ անձի միջամտությունը կողմերի տարաձայնությունները կամ անհամաձայնությունը հարթելու համար: Այսինքն՝ հաղորդակցման միջնորդավորումը դյուրացնում է մի կողմից՝ բազմամշակույթ հաղորդակցումը, մյուս կողմից՝ հաղորդակցումը նուրբ իրավիճակներում և անհամաձայնությունների պարագայում:

Բազմամշակույթ հաղորդակցման միջնորդավորում

Տեքստի ընկալման դժվարությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն լեզվական խնդիրներով, այլև տվյալ ոլորտի վատ իմացությամբ կամ չիմացությամբ: Սա կարող է լարվածության կամ անհամաձայնության պատճառ դառնալ: Ուստի անհրաժեշտ է համապատասխան պայմաններ ստեղծել ընկալման և հաղորդակցման համար:

Բնականաբար, միջնորդն ինքը պետք է իրազեկ լինի հաղորդակցության վրա ազդող սոցիալ-մշակութային և սոցիալ-լեզվաբանական տարբերություններին և պետք է կարողանա՝

- հարցերի միջոցով հաղորդակցվող կողմերի հետաքրքրությունը շարժելով՝ խթանել տեսակետների ու մշակութային նորմերի փոխադարձ ըմբռնումը,
- սոցիալ-մշակութային և սոցիալ-լեզվաբանական տարբեր տեսակետների և նորմերի նկատմամբ զգայունություն և հարգանք դրսևորել,

- կանխատեսել և/կամ շտկել սոցիալ-մշակութային և սոցիալ-լեզվաբանական տարբերություններից բխող թյուրըմբռնումները:

Միջնորդավորում ոչ պաշտոնական իրավիճակներում (ընկերներ, գործընկերներ և այլն)

Սա միջնորդավորման այն դրսևորումն է, երբ սովորողը/լեզուն գործածողը՝ որպես բազմալեզու անհատ, ոչ պաշտոնական իրավիճակում միջնորդի դեր է կատարում տարբեր լեզուների և մշակույթների կողմերի միջև: Միջնորդավորման այս տեսակը կապ չունի արհեստավարժ թարգմանիչների գործունեության հետ: Այն ենթադրում է՝

- գրույցի ընթացքում խոսողի/նշանացի խոսողի ասածի բովանդակության ոչ պաշտոնական փոխանցում,
- կարևոր տեղեկությունների փոխանցում (օրինակ՝ աշխատանքային որոշակի իրավիճակում),
- ելույթներում և ներկայացումներում արտահայտված մտքերի հիմնական բովանդակության փոխանցում:

Հաղորդակցման դյուրացում նուրբ իրավիճակներում և անհամաձայնությունների պարագայում

Սա հաղորդակցման միջնորդավորման այն դեպքն է, երբ սովորողը/լեզուն գործածողը կողմերի միջև առկա տարաձայնությունների դեպքում պաշտոնապես միջնորդի դեր է կատարում, կամ կարող է փորձել առկա թյուրըմբռնումը, նուրբ իրավիճակը կամ անհամաձայնությունը լուծել ոչ պաշտոնական ձևով: Սովորողի/լեզուն գործածողի առաջնահերթ մտահոգությունը խնդիրը և կողմերի ցանկությունները բացահայտելն է, այսինքն՝ նրանք չեն կարևորում սեփական տեսակետը, այլ փորձում են հաղորդակցվող կողմերի տեսակետների միջև հավասարակշռություն ստեղծել: Միջնորդավորման այս դրսևորումը ենթադրում է՝

- երկխոսության մասնակիցների արտահայտած տեսակետների հավասարակշռված ուսումնասիրություն,
- կողմերի արտահայտած տեսակետների մանրամասն քննարկում՝ խնդրի վերաբերյալ նրանց ընկալումները փոխելու և խորացնելու համար,
- հարցի ընկալման ընդհանուր հիմքի ստեղծում,
- մասնակիցների միջև հնարավոր զիջումների կոնկրետացում,
- միջնորդի դերակատարում մեկ կամ մի քանի մասնակիցների տեսակետների փոփոխության, փոխհամաձայնության ձեռքբերման կամ լուծման համար:

Ընդհանրական կարողություններ

Գործունեության տարբեր ոլորտներում մարդկանց հաջողությունները մեծապես պայմանավորվում են ընդհանրական կարողություններով, որոնց շարքում են մարդու մտածական ունակությունները, այլոց հետ հաղորդակցվելու և գործակցելու (սոցիալական տարբեր իրավիճակներում մարդկանց հետ հարաբերություններ հաստատելու, նրանց հետ շփվելու, խոսելու) կարողությունները: Վերջիններս կապված լինելով բուն լեզվական կարողություններին՝ ենթադրում են նաև արտալեզվական գիտելիք և լայն մտահորիզոն:

Ընդհանրական կարողություններ են աշխարհի մասին գիտելիքը, հանրամշակութային և միջմշակութային իրազեկությունը:

Աշխարհի մասին գիտելիքը ձևավորվում է վաղ մանկությունից և հետագայում զարգանում է կրթության և կենսափորձի միջոցով: Սա ընդգրկում է աշխարհագրական, պատմական, բնագիտական, տնտեսական, քաղաքական գիտելիք այս կամ այն երկրի մասին, մասնավորաբար այն երկրի (երկրների), որտեղ խոսում են ուսումնասիրվող լեզվով:

Հայերեն սովորողների համար կարևոր է Հայաստանին վերաբերող ընդհանրական գիտելիքը՝ Հայաստանի աշխարհագրական դիրք, ռելիեֆ, կլիմա, բուսական ու կենդանական աշխարհներ, պատմական անցյալի կարևոր իրադարձություններ, քաղաքական համակարգ և այլն: Այս ամենը հայերեն սովորողին կարող է մատուցվել ինչպես ուսուցանվող բառապաշարի, այնպես էլ լեզվական տարբեր հմտություններ ձևավորող տեքստերի միջոցով:

Հանրամշակութային իրազեկությունը տվյալ հասարակության սոցիալական արժեքների և վարքագծի նորմերի իմացությունն է: Այն թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական գիտելիք է: Այսպես՝ տվյալ հասարակության մեջ ընդունված ողջույնի կամ հրաժեշտի բառերի և արտահայտությունների իմացությունը լեզվական գիտելիք է, իսկ ողջույնի կամ հրաժեշտի ձևերի (ձեռքսեղմում, գրկախառնություն, խոնարհում և այլն) իմացությունը՝ արտալեզվական: Այս գիտելիքը հաճախ կարող է կարծրատիպերի ձևավորման պատճառ դառնալ, իսկ դրա պակասը՝ թյուրըմբռնումների:

Հայերեն սովորողներին մատուցվող սոցիալ-մշակութային գիտելիքը կարող է առնչվել՝

- *առօրյա կյանքին*

- քնելուն, արթնանալուն, սնվելուն առնչվող տեղեկություններ
- աշխատանքային ժամեր, աշխատակարգ
- ազգային և ընտանեկան տոներ

- սնունդ, խմիչք
- սեղանի շուրջ վարվեցողության կանոններ
- ժամանցի կազմակերպում
 - *կենսապայմաններին*
 - կենսակերպ՝ պայմանավորված տարածքային կամ ազգային առանձնահատկություններով
 - բնակարանային պայմաններ
 - *միջանձնային հարաբերություններին*
 - աշխատանքային հարաբերություններ
 - ընտանեկան հարաբերություններ
 - սեռերի միջև հարաբերություններ
 - սերունդների միջև հարաբերություններ
 - պետական տարբեր կառույցների ու դրանց ծառայողների հետ հասարակության հարաբերություններ
 - *արժեքներ, համոզմունքներ և դիրքորոշումներ*
 - պատմություն, կարևոր իրադարձություններ և անձինք, խորհրդանիշներ
 - ավանդույթներ և սովորույթներ, սոցիալական փոփոխություններ
 - մշակույթ, մշակութային արժեքներ, արվեստ (երաժշտություն, գրականություն, ճարտարապետություն, նկարչություն, քանդակագործություն և այլն)
 - կրոն, հոգևոր-եկեղեցական կյանք
 - քաղաքականություն
 - ազգային ինքնություն
 - ազգային փոքրամասնություններ
 - հումոր
 - *ոչ խոսքային հաղորդակցություն*
 - գլխի շարժում (հավանություն, մերժում)
 - դեմքի արտահայտություն (ժպիտ, խոժոռություն)
 - հայացք (զարմացած, բարկացած և այլն)
 - ֆիզիկական հեռավորության աստիճան
 - հպում (ծեռքսեղմում, ձեռքը ուսին դնելը, ուսին թփթփացնելը, գրկախառնություն, համբույր)
 - *հասարակական վարք*
 - ճշտապահություն

- հյուրասիրություն (կազմակերպում և մասնակցություն)
- վարքի ընդունված կանոններ այլևայլ իրավիճակներում (ծնունդ, մահ, ամուսնություն, կենաց ասել, բաժակները միմյանց զարկել, պարել, երգել և այլն)
- հագուստ
- նվերներ
- հանդիսատեսի վարք (ներկայացումների, հանդիսավոր արարողությունների և այլնի ժամանակ)

Միջմշակութային իրազեկությունը այլ մշակույթների ներկայացուցիչների հետ համապատասխան ձևով և արդյունավետ հաղորդակցվելու պատրաստակամությունն ու կարողությունն է: Այլ լեզու սովորող անձի համար դա սեփական և ուսումնասիրվող լեզվի մշակույթների նմանությունները և տարբերությունները իմանալն ու ըմբռնելն է, երկու (և ավելի) մշակույթների բազմազանությունն ընդունելը, գործող կարծրատիպերից խուսափելը:

Հայերեն սովորողներին հատկապես ուսումնառության վաղ փուլերում պետք է ուսուցանել բարեկիրթ խոսքի (օրինակ՝ խնդրանք արտահայտելու, շնորհակալություն հայտնելու) ոչ միայն գրական լեզվում, այլև խոսակցականում տարածված ընդունելի նմուշներ՝ հաղորդակցման ժամանակ խոսակցին ճիշտ հասկանալու և գնահատելու համար (տե՛ս «Լեզվական կառույցներ» բաժինը):

Լեզուների իմացության մակարդակների չափորոշիչներ (համընդհանուր սանդղակ)

| | | |
|------------------|-----------|---|
| Հմուտ օգտագործող | Գ2 | Կարողանում է առանց դժվարության հասկանալ ըստ էության այն ամենը, ինչ լսում կամ կարդում է: Կարողանում է ամփոփել և կապակցված ներկայացնել բանավոր և գրավոր տարբեր աղբյուրներից քաղված տեղեկությունները՝ վերաձևակերպելով փաստարկներն ու կարծիքները: Կարողանում է սահուն և հստակ կազմել հանպատրաստից խոսք՝ արտահայտելով անգամ իմաստային բարդ նրբերանգներ: |
| | Գ1 | Կարողանում է հասկանալ տարբեր թեմաներով բարդ, ծավալուն տեքստերը և ըմբռնել նաև ներիմաստը (ենթատեքստը): Կարողանում է հանպատրաստից և սահուն արտահայտել մտքերը՝ առանց ակնհայտորեն բառեր կամ արտահայտություններ փնտրելու: Կարողանում է լեզուն ազատ և արդյունավետ օգտագործել շփման, ուսումնական և մասնագիտական նպատակներով: Կարողանում է բարդ թեմաների շուրջ հստակ, լավ կառուցված մանրամասն տեքստ կազմել՝ դրսևորելով տեքստի կառուցման սկզբունքների, ներտեքստային կապերի կիրառման հմտություն: |
| Անկախ օգտագործող | Բ2 | Կարողանում է հասկանալ վերացական և կոնկրետ թեմաներով բարդ տեքստերի հիմնական միտքը, այդ թվում՝ քննարկումներն իր մասնագիտության ոլորտում: Կարողանում է հանպատրաստից և բավականին սահուն, առանց լարվածության հաղորդակցվել լեզվակիրների հետ: Կարողանում է տարբեր թեմաներով հստակ, մանրամասն տեքստեր կազմել և հիմնավորել իր տեսակետը՝ ցույց տալով տարբեր կարծիքների առավելություններն ու թերությունները: |
| | Բ1 | Կարողանում է հասկանալ աշխատավայրում, դպրոցում, ժամանցի վայրում և այլուր հաճախ հանդիպող թեմաներին առնչվող և մաքուր գրական լեզվով ձևակերպված խոսքի հիմնական իմաստը: Հայաստանում կամ հայախոս ուրիշ վայրերում ճամփորդելիս կարողանում է կողմնորոշվել ծագած իրավիճակներում և անհրաժեշտ ելքեր գտնել: Կարողանում է կապակցված մտքեր հայտնել ծանոթ թեմաների, անձնական հետաքրքրությունների մասին: Կարողանում է ներկայացնել իր տպավորությունները, նպատակները, ծրագրերը, հույսերը, երազանքները, հակիրճ հիմնավորել սեփական կարծիքը: |
| Սկսնակ | Ա2 | Կարողանում է հասկանալ առանձին արտահայտություններ և առավել հաճախ կիրառվող բառեր, որոնք առնչվում են անձնական և առօրեական թեմաներին (օրինակ՝ ամենահիմնական անձնական և ընտանեկան տվյալների, գնումների, տեղանքի, ուսման, աշխատանքի, ժամանցի և հանգստի մասին): Կարողանում է հաղորդակցվել առօրյա խնդիրների շուրջ, որոնք պահանջում են ծանոթ տեղեկությունների փոխանակում: Պարզ միջոցներով կարողանում է նկարագրել իրեն, իր անմիջական շրջապատը, խոսել առաջին անհրաժեշտության պահանջմունքներին առնչվող հարցերի շուրջ: |
| | Ա1 | Կարողանում է հասկանալ և օգտագործել ծանոթ, առօրյա արտահայտություններ, կազմել պարզ նախադասություններ՝ կոնկրետ պահանջմունքները բավարարելու համար: Կարողանում է ներկայացնել ինքն իրեն և ուրիշների, կարողանում է հարցնել և պատասխանել անձնական բնույթի հարցերի, ինչպես ասենք՝ որտե՞ղ է ապրում, ո՞ւմ է ճանաչում, ի՞նչ ունի և այն: Կարողանում է պարզ կերպով շփվել, եթե գրուցակիցը խոսում է դանդաղ ու հստակ և պատրաստ է օգնելու: |

Ինքնագնահատման սանդղակ

| | Ընկալում | | Փոխգործակցում | | Մտքերի արտահայտում | |
|-----------|---|--|---|---|---|---|
| | Ունկնդրում | Ընթերցում | Բանավոր փոխգործակցություն (երկխոսություն) | Գրավոր փոխգործակցություն | Մտքերի բանավոր արտահայտում | Մտքերի գրավոր արտահայտում |
| Գ2 | Առանց դժվարության հասկանում եմ ցանկացած բանավոր խոսք անմիջական շփման թե հեռարձակման ժամանակ, նույնիսկ եթե արագ են խոսում (երբեմն խոսքին և առոգանությանը ընտելանալու պայմանով): | Կարողանում եմ ըստ էության ազատ կարգալ գրավոր խոսքի բոլոր տեսակները, այդ թվում՝ կառուցվածքի կամ լեզվական առումով բարդ, նաև վերացական տեքստեր, ինչպիսիք են, օրինակ, մասնագիտական տեքստերը և գեղարվեստական արձակ ու չափածո գործերը: | Առանց ջանքեր գործադրելու կարողանում եմ մասնակցել ցանկացած զրույցի կամ քննարկման, լավ ծանոթ եմ դարձվածքներին և խոսակցական արտահայտություններին: Կարողանում եմ սահուն և հստակ արտահայտել մտքերս և ճշգրիտ հաղորդել իմաստային նրբերանգները: Դժվարանալու դեպքում կարողանում եմ վերածնակերպել միտքս՝ շրջանցելով դժվարությունն այնքան աննկատ, որ զրուցակիցներս հազիվ թե նկատեն դա: | Կարողանում եմ գրավոր հստակ և ճշգրիտ արտահայտել մտքերս, դատողություններս ու հույզերս, անհատական ոճով արդյունավետ հաղորդակցվել հասցեատիրոջ հետ: | Կարողանում եմ հստակ, իրավիճակին համապատասխան ոճով հստակ և սահուն խոսք կառուցել կամ փաստարկներ ներկայացնել այնպիսի տրամաբանական կառույցներով, որոնք ունկնդիրներին օգնում են նկատելու և մտապահելու կարևոր և էական դրույթները: | Կարողանում եմ համապատասխան ոճով հստակ և սահուն տեքստ գրել, մասնավորապես ծավալուն նամակներ, զեկուցումներ կա հողվածներ, դրանք շարադրետրամաբանական կուռ կառուցվածքով, որի շնորհիվ ընթերցողները կարող են նկատել և մտապահել կարևոր դրույթները: Կարողանում եմ ամփոփումներ և գրախոսականներ գրել մասնագիտական կամ գեղարվեստական աշխատությունների մասին: |
| Գ1 | Կարողանում եմ հասկանալ ընդարձակ զեկուցումը, նույնիսկ երբ այն հստակ կառուցվածք չունի, և իմաստային կապը պարզ արտահայտված չէ, այլ միայն ենթադրվում է: Կարողանում եմ առանց մեծ ջանքերի ըմբռնել հեռուստածրագրերն ու կինոնկարները (այդ թվում խոսակցական լեզվով հատվածները): | Կարողանում եմ հասկանալ ծավալուն և բարդ փաստագրական ու գեղարվեստական տեքստեր՝ տարբերակելով դրանց ոճական առանձնահատկությունները: Կարող եմ հասկանալ մասնագիտական հողվածներ և ծավալուն տեխնիկական հրահանգներ, նույնիսկ եթե դրանք իմ մասնագիտական ոլորտին չեն առնչվում: | Կարողանում եմ հանապատրաստից և սահուն արտահայտել մտքերս՝ առանց ակնհայտորեն բառեր կամ արտահայտություններ փնտրելու: Կարողանում եմ լեզուն ճկուն և արդյունավետ օգտագործել շփման և մասնագիտական նպատակներով: Կարողանում եմ ճշգրիտ ձևակերպել մտքերս ու կարծիքներս և հմտորեն ներհյուսել իմ խոսքը զրուցակիցներիս խոսքին: | Կարողանում եմ հասցեատիրոջ հետ հաղորդակցվել հասցեատիրոջ հետ: | Կարողանում եմ հստակ, մանրամասն խոսել բարդ թեմաներով՝ միավորելով ենթաթեմաները, որչափ դրույթներ զարգացնելով և միտքս ամփոփելով համապատասխան եզրահանգումներով: | Կարողանում եմ մտքերս արտահայտել հստակ՝ լավ կառուցված տեքստում բավականին մանրամասն ներկայացնելով տեսակետները: Կարողանում եմ նամակում, շարադրության կամ զեկուցման մեջ մանրամասնորեն ներկայացնել բարդ թեմաները՝ ընդգծելով իմ կարծիքով էական խնդիրները: Կարողանում եմ գրել տարբեր տեսակի տեքստեր՝ համապատասխան ոճով: |

| | | | | | | |
|------------------|--|--|---|---|---|---|
| <p>F2</p> | <p>Կարողանում եմ հասկանալ ընդարձակ զեկուցումներ ու դասախոսություններ և հետևել փաստարկների նույնիսկ բարդ շղթային, եթե թեման ինձ բավականին ծանոթ է: Կարողանում եմ հասկանալ հեռուստանորություններ և ընթացիկ իրադարձություններին նվիրված ծրագրեր: Կարողանում եմ ըմբռնել կինոնկարների բովանդակության մեծ մասը, եթե դրանք գրական լեզվով են:</p> | <p>Կարողանում եմ կարգալ հողվածներ և զեկուցումներ ժամանակակից խնդիրների վերաբերյալ, որտեղ հեղինակները որոշակի դիրքորոշում ունեն կամ հատուկ տեսակետ են հայտնում: Հասկանում եմ ժամանակակից գեղարվեստական արձակը:</p> | <p>Կարողանում եմ բավականին սահուն և հանպատրաստից հաղորդակցվել լեզուն կրողների հետ, մասնակցել ինձ ծանոթ թեմաների շուրջ քննարկումներին՝ հիմնավորելով ու պաշտպանելով իմ տեսակետները:</p> | <p>Կարողանում եմ նամակներ գրել՝ ընդգծելով ինձ համար էական իրադարձություններն ու խնդիրները, արտահայտել հույզերս:</p> | <p>Կարողանում եմ բանավոր հստակ և մանրամասն խոսել իմ հետաքրքրությունների ոլորտին առնչվող ամենատարբեր թեմաների մասին: Կարողանում եմ բացատրել թեմային առնչվող խնդրի մասին իմ տեսակետը՝ ցույց տալով տարբեր կարծիքների առավելություններն ու թերությունները:</p> | <p>Կարողանում եմ իմ հետաքրքրություններին առնչվող ամենատարբեր թեմաների մասին հստակ, մանրամասն տեքստ գրել: Կարողանում եմ շարադրություն կամ զեկուցում գրել և դրանում տեղեկություններ հաղորդել կամ էլ որոշակի տեսակետ հիմնավորող կամ հերքող դատողություններ անել:</p> |
| <p>F1</p> | <p>Կարողանում եմ ըմբռնել աշխատավայրում, դպրոցում, ժամանցի վայրերում և այլուր պարբերաբար շոշափվող ծանոթ թեմաներին վերաբերող հստակ, գրական լեզվով կառուցված խոսքի հիմնական իմաստը: Կարողանում եմ հասկանալ հեռուստատեսային կամ ռադիոծրագրերի հիմնական բովանդակությունը՝ ընթացիկ իրադարձություններին կամ անձնական ու մասնագիտական հետաքրքրություններին առնչվող թեմաներով, երբ խոսքը համեմատաբար դանդաղ է ու հստակ:</p> | <p>Կարողանում եմ հասկանալ առօրյա կամ աշխատանքին առնչվող թեմաներով ոչ մասնագիտական տեքստեր, որոնք հիմնականում գրված են պարզ և հաճախ գործածվող լեզվով: Կարողանում եմ անձնական նամակներում հասկանալ դեպքերի, հույզերի և ցանկությունների նկարագրությունները:</p> | <p>Կարողանում եմ կողմնորոշվել այն հիմնական իրավիճակներում, որոնք կարող են ծագել կամ փոփոխվել հայերեն խոսք լսելիս: Կարողանում եմ հանպատրաստից մասնակցել ինձ ծանոթ, ինչպես նաև անձնական հետաքրքրություններին կամ առօրյա կյանքին առնչվող թեմաներով զրույցներին (օրինակ՝ ընտանիք, նախասիրություններ, աշխատանք, ճամփորդություն և ընթացիկ իրադարձություններ):</p> | <p>Կարողանում եմ անձնական նամակներ գրել՝ նկարագրելով դեպքեր, իրադարձություններ և իմ տպավորությունները:</p> | <p>Կարողանում եմ պարզ միջոցներով կապակցել բառերն ու արտահայտությունները՝ նկարագրելու համար իրադարձությունները, իմ երազանքները, հույսերն ու ձգտումները: Կարողանում եմ հակիրճ հիմնավորել ու բացատրել իմ կարծիքն ու ներկայացնել ծրագրերս: Կարող եմ պատմություն կամ գրքի, ֆիլմի այուժեն պատմել և նկարագրել տպավորություններս:</p> | <p>Ես կարող եմ գրել պարզ տեքստ ինձ ծանոթ կամ հետաքրքրող թեմաներով:</p> |

| | | | | | | |
|----|--|---|--|--|---|---|
| Ա2 | <p>Կարողանում եմ հասկանալ առանձին արտահայտություններ և առավել հաճախ գործածվող բառեր, որոնք առնչվում են ինձ վերաբերող անձնական թեմաներին (օրինակ՝ հիմնական անձնական տվյալներ, տեղեկություններ ընտանիքիս, կատարած գնումների, իմ շրջապատի, աշխատանքի մասին): Կարողանում եմ ընկալել կարճ, հստակ, պարզ հաղորդագրությունների ու հայտարարությունների հիմնական իմաստը:</p> | <p>Կարողանում եմ կարգալ շատ կարճ, պարզ տեքստեր: Կարողանում եմ գտնել կոնկրետ, կանխատեսելի տեղեկություններ այնպիսի առօրեական տեքստերում, ինչպիսիք են՝ գովազդները, տեղեկատուները, ճաշացուցակներն ու չվացուցակները: Կարողանում եմ նաև հասկանալ հակիրճ, պարզ անձնական նամակները:</p> | <p>Կարողանում եմ հաղորդակցվել պարզ, առօրեական խնդիրների շուրջ, որ պահանջում են ծանոթ թեմաների և գործողությունների մասին տվյալների պարզ և ուղղակի փոխանակում: Կարողանում եմ շատ կարճ երկխոսություն վարել, թեև ինքնուրույն զրույց վարելու համար բավարար չափով չեմ հասկանում:</p> | <p>Կարողանում եմ կատարել հակիրճ գրառումներ և գրել պարզ հաղորդագրություններ: Կարողանում եմ գրել շատ պարզ անձնական նամակ, օրինակ՝ ինչ-որ մեկին շնորհակալություն հայտնել ինչ-որ բանի համար:</p> | <p>Կարողանում եմ օգտագործել մի շարք արտահայտություններ ու նախադասություններ՝ պարզ բառերով նկարագրելու համար ընտանիքս, այլ մարդկանց, իմ տունը, կյանքիս պայմանները, իմ կրթությունը, ներկա կամ նախորդ աշխատանքը:</p> | <p>Կարողանում եմ գրել մի շարք պարզ արտահայտություններ և նախադասություններ՝ դրանք կապակցելով <i>և, բայց, որովհետև</i> շաղկապներով:</p> |
| Ա1 | <p>Կարողանում եմ ճանաչել ծանոթ բառեր և պարզ արտահայտություններ, որոնք առնչվում են ինձ, ընտանիքիս և մերձավոր շրջապատիս, երբ մարդիկ խոսում են դանդաղ և հստակ:</p> | <p>Կարողանում եմ հասկանալ շատ պարզ նախադասություններ, որոնք հանդիպում են հայտարարություններում, պաստառներում կամ ցանկերում հանդիպող:</p> | <p>Կարողանում եմ հաղորդակցվել պարզ միջոցներով, պայմանով, որ զրուցակիցս պատրաստ լինի կրկնելու կամ վերաձևակերպելու խոսքը, խոսի ավելի դանդաղ և օգնի ինձ ձևակերպելու այն, ինչ փորձում եմ ասել: Կարողանում եմ իմ անմիջական կարիքների վերաբերյալ կամ ինձ լավ ծանոթ թեմաների ոլորտից պարզ հարցեր տալ և պատասխանել նման հարցերի՝ անհրաժեշտության դեպքում մատնացույց անելով, նկարելով և այլն:</p> | <p>Կարողանում եմ լրացնել հարցաթերթիկ՝ անձնական տվյալներով, օրինակ՝ հյուրանոցի գրանցման թերթիկում լրացնել անուն-ազգանունս, ազգությունս, հասցես, կամ գրել պարզ բացիկ, օրինակ՝ շնորհավորանք որևէ տոնի առիթով:</p> | <p>Կարողանում եմ օգտագործել պարզ արտահայտություններ ու նախադասություններ՝ նկարագրելու համար այն վայրը, որտեղ ապրում եմ, և մարդկանց, որոնց գիտեմ:</p> | <p>Կարողանում եմ գրել առանձին պարզ արտահայտություններ և նախադասություններ:</p> |